ԿՐՈՆԱԿԱՆ ԿԱՋՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԵՐԸ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐՈՒՄ

Գրքույկը տպագրվել է «Քաղաքացիների իրազեկման մակարդակի բարձրացումը Հայաստանում կրոնի ազատության վերաբերյալ» ծրագրի շրջանակներում, որը իրականացվել է Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակի կողմից Նիդերլանդների Թագավորության դեսպանատան ֆինանսական աջակցությամբ

Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ

Նիդերլանդների Թագավորության դեսպանատուն

Խմբագիր՝ Արթուր Սաքունց

Խմբագրակազմ՝ Նաիրա Բուլղադարյան
Արմինե Սադիկյան
Էդգար Խաչատրյան

Նկարները՝ Արտակ Օհանյան

ԿՐՈՆԱԿԱՆ

ԿԱՋՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԵՐԸ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐՈՒՄ

2006

ԿՐՈՆԱԿԱՆ

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԵՐԸ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐՈՒՄ

Կրոնական հանդուրժողությունը և խղճի ազատությունը յուրաքանչյուր հասարակության ամենանուրբ, միաժամանակ ամենաարդիական թեմաներից է: Իհարկե, քաղաքացիական հասարակության ձևավորմանը զուգընթաց, այդ խնդիրների ծավալը և սրության աստիճանը նվազում է:

ՆԱԽԱԲԱՆ

Ժողովրդավարության հիմնական հատկություններից մեկը՝ բազմակարծությունը, ձևավորվում է մենիշխանությունից դեպի ընտրություններով ձևավորվող իշխանությունների անցմանը զուգընթաց: Եվ, զարմանալիորեն, դա ուղեկցվել է նաև մեկ եկեղեցու հոգևոր առաջնորդությունից բազմաթիվ եկեղեցիների առաջացման և ձևավորման գործընթացով:

Հայաստանի Հանրապետության անկախությունից հետո Հայ Առաքելական եկեղեցու «հոգևոր» մենիշխանությունը նույնպես սասանվում է նոր եկեղեցիների առաջացմամբ: Սա բնական, միևնույն ժամանակ շատ «ցավոտ» անցում է, որը ձևավորվող քաղաքացիական հասարակությանը և ժողովրդավարությանն ուղեկցող անհրաժեշտ երևույթ է: Դա արտահայտվեց նաև այս ծրագրի իրականացման ընթացքում, երբ Վանաձորում տարածվեցին թռուցիկներ ոչ ավանդական եկեղեցների դեմ, ինչպես նաև՝ մեր կազմակերպության հասցեին սպառնալիքներ հայ արիացիների կողմից:

Գրքույկում ներկայացված նյութերը փորձերից մեկն է՝ ներկայացնելու իրավիճակը կրոնական կազմակերպությունների դաշտում: Միաժամանակ, ներկայացված են քաղաքացիական հասարակության ձևավորման մեջ կրոնական կազմակերպությունների դերի բարձրացման հնարավոր ուղիները:

Իհարկե, վերջնական և պատրաստի լուծումներ դժվար է գտնել, և նման նպատակ դրված չի էլ եղել, բայց գրքույկում փորձ է արված ձևակերպել քաղաքացիական հասարակության ձևավորման բնագավառում խնդիրների մի ամբողջ շարք, առանց որոնց լուծման այդ հասարակությունը կլինի ոչ լիարժեք:

Հուսով եմ, որ շահագրգիռ կողմերը՝ պետական մարմինները, հասարակական կազմակերպությունները, ինչպես նաև ԶԼՄ-ները մտածելու և խորհելու շատ նյութեր կստանան:

Ա. ՍԱՔՈՒՆՑ

ԿՐՈՆԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԵՐԸ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐՈՒՄ

Համաժողովի նյութեր

(Վանաձոր, օգոստոսի 10-11, 2006թ.)

Համաժողովի աշխատանքների հանդիսավոր բացմանը ՀՔԱ Վանաձորի գրասենյակի նախագահ Արթուր Սաքունցը ողջունեց հյուրերին՝ շնորհակալություն հայտնելով նրանց մասնակցության համար: Միևնույն ժամանակ նա նշեց, որ համաժողովի աշխատանքներին հրաժարվեցին մասնակցել Հայ Առաքելական եկեղեցու Շիրակի և Գուգարաց թեմերի ներկայացուցիչները, որոնք նախօրոք հայտնել էին իրենց համաձայնության մասին:

Համաժողովի աշխատանքներին ընդհանրապես հրաժարվեցին մասնակցել «Եհովայի վկաներ» կազմակերպության ներկայացուցիչները: Իսկ Գյումրիում գործող Տիրամայր Հայաստանի Պողոսյան կրթահամալիրի, «Կյանքի խոսք» եկեղեցու, Երևանի ավետարանական մկրտական քրիստոնյաների «Բեթել» եկեղեցու, Հայ Առաքելական եկեղեցու եկեղեցասիրաց եղբայրակցության, Իջևանի Ավետարանի Հավատքի քրիստոնյաների եկեղեցու ներկայացուցիչները հայտնեցին, որ չեն կարող մասնակցել:

Արթուր Սաքունցը հույս հայտնեց, որ համաժողովը կնպաստի միջկրոնական երկխոսության և հասարակական կազմակերպությունների հետ կրոնական կազմակերպությունների համագործակցության ձևավորմանը:

Այնուհետև նա իր ելույթում ներկայացրեց հասարակական հարաբերություններում կրոնական կազմակերպությունների դերի վերաբերյալ ՀՔԱ Վանաձորի գրասենյակի ուսումնասիրության արդյունքները: Տարբեր կրոնական կազմակերպությունների կամ եկեղեցիների ներկայացուցիչների հետ հանդիպումները ցույց տվեցին, որ գոյություն ունեն դավանաբանական տարբերություններ և մեկնաբանություններ: Սակայն համաժողովի ընթացքում անդրադարձ չեղավ դրանց:

«Դավանաբանական մեկնաբանությունները յուրաքանչյուր եկեղեցու և նրա անդամի խնդիրն է, և մենք պետք է հարգենք անձի ազատությունն

ու ընտրությունը: Մեր հանդիպումների ընթացքում ավելի շատ փորձում էինք բացահայտել, թե ինչն է խանգարում տարբեր կրոնական կազմակերպություններում ընդգրկված քաղաքացիներին լիարժեք մասնակցել հասարակական, քաղաքացիական գործընթացներին»,-նշեց Արթուր Սաքունցը: «Պայմանականորեն մենք այդ խնդիրները բաժանեցինք երկու մասի՝ առաջինը. հասարակությունը ոչ Առաքելական եկեղեցու անդամին ընկալում է որպես օտար և մեկուսացնում իրենից: Մյուսը՝ կրոնական կազմակերպությունների զգալի մասի մոտ կա հասարակությունից մեկուսանալու ձգտում: Փոխադարձ մեկուսացվածությունն է բերում անջրպետի առաջացմանն ու անհանդուրժողությանը: Ըստ էության, շատ քիչ բան իմանալով մեկը մյուսին մասին, ապրելով նույն երկրում, համայնքում՝ սկսում են կարծրատիպեր մշակել, որոնց հիմքում որևիցե իրական, իմացական պատճառներ չկան:

Ավելին, մենք պարզեցինք, որ, ցավոք սրտի, կրոնական կազմակերպություններն էական դերակատարում չունեն այն համայնքներում, որտեղ գործում են: Եղել են ցանկություններ, փորձեր, օրինակ՝ Սահմանադրության փոփոխությունների ընթացքում խղճի ազատության կամ կրոնական կազմակերպությունների գործունեությանը վերաբերող մասով քննարկումներ կազմակերպել և իրենց տեսակետը ներկայացնել օրինագիծը կամ առաջարկությունների փաթեթը մշակողներին: Ցավոք սրտի, նման փորձ կամ համախմբվածություն չի եղել: Մյուս պատճառն այն է, որ ոչ Առաքելական եկեղեցու անդամներին հասարակությունը ընկալում է զուտ կրոնական պատկանելությամբ: Բայց մարդը տարբեր պատկանելություններ ունի, որում կրոնականն ընդամենը մի ասպեկտն է: Սա մեզ մտահոգում է:

Եթե դիտարկենք քաղաքացիական հասարակության դասական ձևակերպումը, ապա դրա ինստիտուտներ են հանդիսանում ոչ միայն հասարակական կազմակերպությունները, այլև կրոնական կազմակերպությունները: Վերջիններս համարվում են քաղաքացիական հասարակության կարևորագույն ինստիտուտներից մեկը: Եթե կրոնական կազմակերպությունները լիարժեք չեն դրսևորվում, լիարժեք մասնակցություն չեն ունենում քաղաքացիական մշակույթի ձևավորմանը, ապա հասարակական կազմակերպությունները չեն կարող այդ բոլոր խնդիրները լուծել, որովհետև իրենց գործընկերները մեկուսացված են կամ լիարժեք մասնակցություն չունեն այդ գործընթացներում:

Արթուր Սաքունցը հույս հայտնեց, որ համաժողովը կնպաստի միջկրոնական երկխոսության և հասարակական կազմակերպությունների հետ կրոնական կազմակերպությունների համագործակցության ձևավորմանը:



Ելույթներ

Ստեփան Դանիելյան
«Համագործակցություն հանուն ժողովրդավարության» ՀԿ նախագահ

Այսօր ես կցանկանայի Ձեզ հետ խոսել երկու թեմայից:

Առաջին. «Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի և նրա համապատասխանության մասին միջազգային չափանիշները:

Ստեփան Դանիելյան
«Համագործակցություն հանուն ժողովրդավարության» ՀԿ նախագահ



Երկրորդ՝ եկեղեցիների դերը հասարակությունում և իրավիճակը Հայաստանում այդ առումով, թե ինչպիսի դեպքեր են կատարվել և ինչպիսի օրինաչափություններ կան 1991թ-ից մինչ այժմ: Սակայն մինչ այդ ես ուզում եմ Ձեզ ներկայացնել մեր կազմակերպությունը, քանի որ մոտակա մի քանի տարիներին Հայաստանում խղճի ազատության ոլորտում հատուկ դերակատարություն ենք ստանձնել:

Մեր կազմակերպությունը ստեղծվել է 1997թ-ին և ստեղծված օրվանից բավականին աշխատանք է կատարել խղճի ազատության, կրոնական հանդուրժողության ոլորտներում:
Կատարվել են նկարահանումներ տարբեր կրոնական կազմակերպությունների մասին՝ սկսած 1995-96թթ-ից: Դրանք արխիվացված են, մի մասը կորել է, մի մասը մնում է: Նկարահանումների ժամանակ մենք բավականին դժվարությունների էինք հանդիպում, որովհետև կրոնական կազմակերպությունների կողմից միշտ անվստահություն էր լինում: Նրանք ասում էին՝ «դուք գալիս, նկարահանում եք, հետո այլ ձևով կմեկնաբանեք»:

Նման փորձ գոյություն ունի՝ մասնավորապես Հիսուս Քրիստոսի վերջին օրերի սրբերի եկեղեցու դեպքում: Կարծեմ 1996թ-ին էր՝ տարեկան հավաք էր Ֆիզիկայի ինստիտուտում: Մենք նկարահանումներ կատարեցինք և երեք տարի հետո ԵԱՀԿ ժողովրդավարության և մարդու իրավունքների գրասենյակի պատվերով 40 րոպեանոց տեսաֆիլմ պատրաստեցինք Հայաստանի կրոնական կազմակերպությունների մասին, որի համահեղինակներից մեկը ես եմ: Հիսուս Քրիստոսի վերջին օրերի սրբերի եկեղեցին հրաժարվեց նկարահանումներից, չնայած ասեմ՝ մենք շատ համառ էինք: Մյուս կազմակերպություններին մենք կարողացանք, համենայն դեպս, նկարահանել, և այդ տեսաֆիլմը բազմաթիվ անգամ ցուցադրվել է և մինչ այժմ ցուցադրվում է:

2001թ-ին Բաց հասարակության ինստիտուտի հետ մի ծրագիր իրականացրեցինք, որն ընդգրկում էր և՛ տպագիր մամուլի մոնիթորինգի, և՛ հեռուստատեսային ուղիղ եթերների անցկացում: Ծրագրի շրջանակներում կազմակերպվեց հանդիպում կրոնական տար-

բեր կազմակերպությունների ներկայացուցիչների մասնակցությամբ, որոնք քննարկեցին ընդհանուր խնդիրներ և ոչ թե դավանաբանական տարբերություններ: Ինը ամիս մենք մոնիթորինգ ենք արել ու ասեմ, որ պատկերը շատ տխուր էր, որովհետև հրապարակումներում բազմաթիվ խախտումներ կային թե՛ միջազգային համաձայնագրերի, թե՛ ՀՀ «Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» օրենքի, որը բավական անհաջող է:

2004-ին կառավարությունը մշակեց մի փաթեթ կրոնական կազմակերպությունների գրանցման և գործունեության սկզբունքների մասին: Շատ խայտառակ մի փաթեթ էր, որտեղ մի քանի միջազգային կոնվենցիաների մի քանի տասնյակ չափազանց կոպիտ խախտումներ կային: Գուցե աշխարհում նման երկիր չլիներ, որտեղ նման սկզբունքներ գործեին: Սակայն մենք կարողացանք համագործակցել ՀՀ կառավարությանը կից ազգային փոքրամասնությունների և կրոնական կազմակերպությունների վարչության հետ: Վարչության ղեկավար Հրանուշ Խառատյանը նույնպես աջակցեց, որ այդ սկզբունքները փոխվեն, որովհետև նման սկզբունքների հիման վրա օրենք չէր ընդունվի:

Կարող եմ օրինակներ բերել: Ենթադրենք՝ ինչ էր նախատեսվում գրանցման համար, որը վերաբերվելու էր բոլորին, քանի որ բոլոր կրոնական կազմակերպությունները վերագրանցվելու էին: Հինգ տարի ժամանակ էր նախատեսվում, որպեսզի «ուսումնասիրեն» այդ կազմակերպությունը: Մասնավորապես՝ կազմակերպության ղեկավարը հոգեբանից պետք է թուղթ ներկայացներ, որ ինքը հոգեկան հիվանդ չէ:

Երկրորդը. նախատեսվում էր դատախազությունից տեղեկանքի ներկայացում, որով կրոնական հողի վրա կազմակերպության ղեկավարը քրեական պատասխանատվության չի ենթարկվել:

Վերջապես՝ նախատեսվում էր ստեղծել սոցիալական աշխատողների ինստիտուտ, որոնք ցանկացած պահի կարող էին մտնել հավատացյալների տները և ստուգել, թե արդյոք ընտանիքում արտակարգ երևույթներ չեն կատարվում:

Կային նաև ձևակերպումներ, որոնք ընդհանրապես պարզ չէին, որովհետև խղճի ազատության ոլորտը նույնիսկ Եվրոպայում դժվար ձևակերպումների ոլորտ է. ինչ է խղճի ազատությունը, կրոնական կազմակերպությունը, հոգևորությունը: Հստակ ընդունված ձևակերպումներ չկան, դրանք դժվար է գտնել:

Ներկայումս համագործակցում ենք Հրանուշ Խառատյանի հետ, անցյալ տարի կազմակեպել ենք մի քանի քննարկումներ ու հեռուստաեթերներ: Մենք ունենք առաջիկա տարվա համար նոր ծրագիր, որը նվիրված է լինելու կրոնական կազմակերպություններին, խղճի ազատությանը: Ծրագրով նախատեսվում է անցկացնել մամուլի և իրավիճակի մոնիթորինգներ, ընդգրկվելու են իրավաբան-մասնագետներ, կազմակերպվելու են հեռուստահաղորդումներ:

Նշեմ, որ շարունակվում են մամուլում «սարսափելի» հայտարարություններ արվել, որոնց համար նորմալ երկրում դրանք կատարողները քրեական պատասխանատվության կենթարկվեն:

«Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենք

Օրենքը ընդունվել է 1991թ-ին՝ հիմքում ունենալով 1990թ-ի Խորհրդային Միության օրենքը: Բավականին լիբերալ օրենք է, մեծ ազատություններ է իր մեջ պարունակում: Վազգեն Առաջին կաթողիկոսի լոբիստական գործունեության շնորհիվ օրենքում մի առանձին հոդված նվիրված է Հայ Առաքելական եկեղեցուն, ինչն ամբողջությամբ հակասում է մյուս հոդվածներին: Այս օրենքի մեջ բազմաթիվ հակասություններ գոյություն ունեն, կան կասկածելի և սխալ ձևակերպումներ:

Լևոն Տեր- Պետրոսյանը և Ռոբերտ Քոչարյանը մի քանի հրամանագրեր արձակեցին, որով օրենքում բավական խստացումներ եղան: Մասնավորապես՝ Խորհրդային Միության նման երկրում, որի բնակչությունը 250 միլիոն էր, կրոնական կազմակերպություն գրանցելու համար 20 անդամ էր հարկավոր: Այս օրենքով պահանջվում է 200 մարդ: Ի միջի այլոց, առաջարկություն կար այդ թիվը հասցնելու հազարի և նույնիսկ տասը հազարի:

Կային ևս մի քանի խստացումներ, որոնք ներկայացված էին նախագահների հրամանագրերում: Օրենքի նախաբանում ընդգրկված են մարդու իրավունքների հիմնարար դրույթները՝ համաձայն Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի և Մարդու իրավունքների և ազատությունների Եվրոպական կոնվենցիայի:

Միջազգային պրակտիկայում չի կիրառվում կրոնական կազմակերպություն հասկացությունը: Կիրառվում է կրոնական կազմակերպություն և հավատամք հասկացությունները: Այսինքն՝ այդ իրավունքները առանձին չեն կիրառվում: Խղճի ազատությունը ոչ միայն հավատացյալների իրավունքների պաշտպանություն է, այլ նաև աթեիստների, ագնոստիկների՝ մարդիկ, որոնք ունեն խոր հավատամք ու հիմնարար սկզբունքներ: Պետք է պաշտպանվեն ոչ միայն հավատացյալների, այլ սկզբունքորեն ոչ հավատացյալների իրավունքները: Օրենքի հոդված 5-ում սահմանվում է խղճի ազատությունը՝ ելնելով պատմականորեն կանոնացված որևէ Սուրբ գրքի վրա: Կիրառվում է շատ կասկածելի մի ձևակերպում, որը միջազգային պրակտիկայում ուղղակի չի ընդուն-

վում: Այն է՝ ով է սահմանել, թե ինչ է նշանակում Սուրբ գիրք: Ենթադրենք նոր կրոն է ձևավորվում, օրինակ՝ Հիսուս Քրիստոսի երկրորդ գալուստը: Որպես նոր կրոն՝ գործող օրենքով արգելվելու՞ է նրա գործունեությունը:

Երկրորդ հանգամանքը՝ ըստ օրենքի դավանանքը պետք է ընդգրկվի ժամանակակից համաշխարհային կրոնական եկեղեցական համայնքների համակարգում: Աբսուրդ ձևակերպում. ի՞նչ համակարգի մասին է խոսքը և ի՞նչ է այն:

Հաջորդ աբսուրդ ձևակերպումը. զերծ է նյութապաշտությունից և ուղղված է զուտ հոգևոր ոլորտները: Կրոնական կազմակերպությունը կամ ուղղությունը ձևակերպելիս պարտադիր չէ Աստծո առկայությունը, որովհետև համաշխարհային կրոններից մեկում՝ բուդդիզմում Աստված չկա: Դա երևույթ է, կրոն:

Մյուս աբսուրդ ձևակերպումը՝ ազգային դավանանք: Օրինակ՝ Հայ Առաքելական եկեղեցին ազգային դավանա՞նք է: Քրիստոնեական որևէ ուղղություն չի կարող ազգային լինել: Հայ Առաքելական եկեղեցին իր ազգային լինելու դրույթի մասին դավանաբանական որևէ ձևակերպում չունի: Առաքելական եկեղեցին չի կարող ազգային լինել ի սկզբանե: Այլ բան է, որ կառույցը կարող է լինել ազգային: Օրինակ, Հունգարիայի կաթոլիկ եկեղեցին ազգային կառույց է և ազգային խնդիրներ է առաջադրում: Լեհաստանի կաթոլիկ եկեղեցին վերազգային է, որը ազգային գիտակցություն է զարգացնում և ազգային խնդիրներ առաջադրում: Այսինքն՝ կառույցը կարող է լինել ազգային, բայց ի՞նչ է նշանակում իրենց ազգային դավանանք: Աբսուրդ ձևակերպում է:

Հաջորդը. օրենքում նշվում է, որ ՀՀ տարածքում արգելվում է հոգևորսությունը: Կիրառվում է մի տերմին, որի բացատրությունը ոչ մի տեղ չի տրվում: Օրենքում սահմանվում են արգելքներ, բայց թե ինչպես են կիրառվում, ինչ կանոնակարգով՝ տույժ, ազատազրկում, չի նշվում: Շատերը կարծում են, որ հոգևորսությունը այն է, երբ ենթադրենք մեկը գա Հայաստան և սկսի քարոզել, և հոգիները, որոնք պատկանում են այլ եկեղեցու, բերվում են ուրիշ եկեղեցի: Այսինքն՝ հոգի է որսում և տանում:

Իսկ ի՞նչ է նշանակում խղճի ազատություն: Ըստ միջազգային չափանիշների, յուրաքանչյուր ոք ունի ոչ միայն խղճի, դավանանքի ազատություն, այլ նաև քարոզելու և այն փոխելու ազատություն: Եվ այն կրոնական կազմակերպությունները, որոնք թույլ չեն տալիս իրենց անդամին հեռանալ, փոխել դավանանքը, պատժվում են: Հոգևորսությունը կարող է լինել ստիպողական տարր ունեցող գործողություն: Օրինակ, ես ասում եմ, եթե դու այս եկեղեցուց չես, գործից ազատում եմ: Դա կարող է լինել նույնիսկ մասնավոր հիմնարկում: Կամ դու կգաս ինձ մոտ աշխատելու, եթե ընդունես իմ կրոնական ուղղությունը: Այս օրինակներում կա ստիպողական տարր, որը կարելի է համարել հոգևորսություն: Հոգևորսությունը ամենաշատ օգտագործվող տերմիններից է, որի բացատրությունը չկա: Հայ առաքելական եկեղեցու ներկայացուցիչները այդ բացատրությունը չունեն:

Այժմ դիտարկենք այն հոդվածը, որն ընդունվել է Վազգեն Առաջինի լոբինգի արդյունքում. պետությունը չի խոչընդ-

դոտում ազգային եկեղեցու մենաշնորհը հանդիսացող առաքելությունների իրագործումը: Վերստին, ի՞նչ է նշանակում ազգային եկեղեցի: Օրինակ, կաթոլիկ կամ ավետարանական եկեղեցիները Հայաստանում գործում են երկար տարիներ, ազգայի՞ն են, թե՝ ոչ, նույնպես որևէ չափանիշով ձևակերպված չէ:

Այժմ մենաշնորհի մասին: Թվարկեմ այն մենաշնորհները, որոնք ունի Հայ Առաքելական եկեղեցին. ազատ քարոզել և տարածել իր դավանանքը ՀՀ ողջ տարածքով: Մյուս եկեղեցիները չունեն այդ իրավունքը, որն ամրագրված է Սահմանադրությունում և օրենքի առաջին մասում: Այսինքն՝ կա հակասություն:

Հաջորդը. Հայ Առաքելական եկեղեցին կարող է վերստեղծել իր պատմական ավանդույթները, կառուցվածքը և այլն: Ստացվում է, որ եզդիներին արգելվա՞ծ է իրենց պատմական հին եկեղեցին կամ աղոթատեղը վերականգնել, կառուցել նոր եկեղեցիներ, գործող դարձնել իրենց պատկանող պատմական հուշարձան-եկեղեցիները:
Միջազգային պրակտիկայում նման բան գոյություն ունի. պետությունները իրավունք ունեն իրենց պատմական ազդեցություն ունեցող եկեղեցիներին տալ որոշակի առավելություններ ու հատուկ վերաբերմունք: Դա խախտում չի: ՀՀ Սահմանադրությունը ճանաչում է Հայ Առաքելական եկեղեցու պատմական հատուկ դերը և տալիս նրան որոշակի առավելություններ: Դա եվրոպական տարբեր երկրներում խախտում չի, բայց չի կիրառվում ի հաշիվ այլ եկեղեցիների նկատմամբ խտրականության: Եվ դա հատուկ նշվում է այդ երկրների սահմանադրություններում:

Եվս մի աբսուրդ ձևակերպում. նպաստել հայ ժողովրդի հոգևոր կրթությանը, օրենքով սահմանված կարգով նաև՝ պետական կրթական հաստատություններում: Ստացվում է, որ մյուս եկեղեցիները իրավունք չունե՞ն նպաստել: Գործնականորեն աջակցել հայ ժողովրդի բարոյական կատարելագործմանը, սա մենաշնորհ է: Այսինքն՝ մյուս եկեղեցիները իրավունք չունեն նպաստել բարոյական կատարելագործմանը: Հայ Առաքելական եկեղեցին իրավունք ունի բարեգործական կամ բարեխնամ գործողությունների: Ուրեմն, այլ եկեղեցիներ իրավունք չունե՞ն նման գործունեությամբ զբաղվելու:

Հաջորդը. այն կրոնական կազմակերպությունները, որոնց կենտրոնները գտնվում են ՀՀ տարածքից դուրս, չեն կարող ֆինանսավորվել իրենց կենտրոնների կողմից, որը նույնպես անհասկանալի է: Առաքելական եկեղեցին ունի իրավունք հոգևոր մշտական ներկայացուցիչներ ունենալ հիվանդանոցներում, հաշմանդամների տներում, զորամասերում և այլն:

Այս օրենքն, ըստ էության, չի գործում, որովհետև այն չունի կիրարկման կարգ, ունի բազմաթիվ հակասություններ Սահմանադրության և այն համաձայնագրերի, կոնվենցիաների հետ, որոնք Հայաստանը վավերացրել է:

Հարց է առաջանում. ընդհանրապես մեզ օրենք պե՞տք է, թե՝ չէ: Շատ երկրներում խղճի ազատության մասին օրենք գոյություն չունի: Որոշ երկրներում կոնկրետ դեպքերի համար ստեղծվել են օրենքներ: Այսինքն՝ լինում է իրադարձություն, հատուկ դեպք, որի համար հատուկ օրենքով կանոնակարգեր են մշակվում: Բայց մյուս հիմնական խնդիրները

կարող են կարգավորվել այլ օրենքներով՝ կրթության, քրեական, երեխաների իրավունքների կամ Սահմանադրությամբ:

Միջազգային պրակտիկայում գոյություն ունի այսպիսի մոտեցում. գրանցումը պարտադիր չէ. գրանցումը ցանկություն է իրավական դաշտում լինելու և որոշակի հնարավորություններից օգտվելու համար: Այսինքն՝ միջազգային փաստաթղթերում ամրագրված իրավունքների խոչընդոտումը քրեորեն պատժելի արարք է, որը սահմանվում է Քրեական օրենսգրքում: Այսինքն՝ գրանցման մասին օրենք կարող է և չլինել, իսկ գրանցման հետ կապված որևէ խնդիր չկա: Եթե կազմակերպությունը չի գրանցվում, այն կարող է ազատորեն գործել:

Այժմ կրոնական դաշտի վիճակի վերաբերյալ անկախությունից հետո: 1991թ-ից հետո անկախության առաջին տարիները համընկան ղարաբաղյան պատերազմի և ծանր սոցիալական պայմանների հետ: Միաժամանակ, 1992-95թթ. տեղի ունեցան հարձակումներ կրոնական կազմակերպությունների ներկայացուցիչների վրա՝ ծեծի, թալանի, գույքի փչացմամբ: Մասնավորապես՝ հոգեգալստականների, կրիշնայականների վրա (վերջինս որպես կրոնական կազմակերպություն հիմա գոյություն չունի): Այդ գործողությունները իրականացնում էին պատերազմից եկած վետերանները, որոնց կարծիքով կրոնական կազմակերպությունները ապազգային են, իսկ իրենք կռվել են ազգի համար: Հաշվեհարդարները կատարվում էին ոստիկանների հսկողությամբ: 1995թ-ից հետո նման հարձակումներ, կարծես թե, տեղի չունեն: Հիմնական խախտումները արարողությունների համար տարածքներ չտրամադրելն է, իսկ այն մարդիկ, ովքեր փորձում են իրենց անձնական տարածքները տրամադրել, զգուշացվում են, որ վատ կլինի իրենց համար: Օրենքի խախտումներ են հանդիսանում նաև մամուլով և հեռուստատեսությամբ պետական պաշտոնյաների ելույթները՝ ուղղված ոչ ավանդական կրոնական կազմակերպություններին:

Այժմ պետության մեջ եկեղեցու դերի մասին:

Եկեղեցիները ոչ միայն քաղաքացիական հասարակության կարևոր, այլև հիմնական կառույցներն են: Այն արժեքները և սկզբունքները, որ գոյություն ունեն՝ ընտրություն, համայնքներ, ձևավորվեցին ռեֆորմացիայից հետո: Կրոնական կազմակերպությունները կարևորագույն դեր խաղացին հասարակական գործընթացներում:

Իմ կարծիքով, Հայաստանում բավականին անբարոյական մթնոլորտ է ձևավորվել, տեղի ունի արժեզրկում: Դրանց դիմագրավելու գործում մեծ դեր կարող են կատարել եկեղեցիները, նաև՝ Հայ Առաքելական եկեղեցին: Վերջապես, մենք կարող ենք ակնկալել, որ Հայ Առաքելական եկեղեցին հերթական ընտրություններից առաջ կոչ անի՝ ասելով՝ իմ այն հետևորդները, որոնք կեղծիքի կգնան, ձեռք կբարձրացնեն Աստծո կամքի վրա, և կդատապարտվեն: Մենք հասկանում ենք, որ այս հայտարարությունները մարդկանց վրա չեն ազդի, բայց դա կարող է մթնոլորտ ձևավորել: Եկեղեցիների հիմնական դերը բարոյական մթնոլորտ և արժեքային համակարգ ձևավորելն է, ինչն այսօր Հայաստանում չի կատարվում:

Մյուս կողմից, եկեղեցիներն ի-

Արտյոմ Փիլոյան
Նոր Առաքելոց եկեղեցու Հայաստանի համայնքի ներկայացուցիչ

որար նկատմամբ բավականին անհանդուրժող են: 1995-97թթ., երբ գնում էինք նկարահանումների տարբեր կրոնական համայնքներ ու շարքային անդամին հարցնում, թե ձեր եկեղեցին ինչով է տարբերվում մեկ այլ եկեղեցուց, 90 տոկոսը պատասխան չուներ: Ուր մնաց, որ խոսք գնար այն մարդկանց մասին, որոնք այդ հավատացյալների խմբերի մեջ չեն: Այսինքն՝ գոյություն ունի տեղեկատվության պակաս: Իսկ ե՞րբ է սկսվում անհանդուրժողությունը: Երբ մարդիկ իրազեկ չեն մեկը մյուսի մասին: Չկա համապատասխան գրականություն, հեռուստատեսությամբ չի լուսաբանվում ոչինչ: Իսկ միմյանց մասին, նույնիսկ սեփական եկեղեցում, տարրական պատկերացում չունեն: Սա մի դաշտ է, որը մենք պետք է աշխատենք լրացնել:

Հայ Առաքելական եկեղեցին ինքը աղանդ է, որովհետև աղանդը տիեզերական ժողովները ամբողջությամբ չընդունած ուղղություններն են: Եվ մինչև 20-րդ դարի սկիզբը Հայ Առաքելական եկեղեցին պաշտոնապես համարվում էր աղանդ համաշխարհային կրոնական դասակարգմամբ: Այդ փաստը ակտուալ չէր, որովհետև աշխարհը եկավ այն համոզման, որ ոչ ոք իրավունք չունի որևէ մեկին աղանդ անվանել, և բոլորը միմյանց հետ համագործակցում են: Եվ երևի միայն մեզ մոտ է աղանդ հասկացությունն օգտագործվում:

Ի վերջո, երբ կրոնական կազմակերպությունն ասում է՝ մի կեղծեք, դա քաղաքականությամբ զբաղվել է: Ընտրություններից առաջ, հիսուն-երկու հարյուր ստորագրությամբ կարող ենք, չէ՞, դիմել էջմիածին, որ հարգելի Վեհափառ, հանդես արի ընտրակեղծիքների դեմ կոչով: Մի՞թե դա նշանակում է զբաղվել քաղաքականությամբ:

Հարց-Արտյոմ Փիլոյան-Նոր Առաքելոց եկեղեցու Հայաստանի համայնքի ներկայացուցիչ

Ծրագիրը, որ սկսելու եք, ընդգրկում է հետազոտություններ և մոնիթորինգ: Դրանց արդյունքները և վերլուծությունները որևէ տեղ հրապարակվելու՞ են և մատչելի՞ են լինելու հասարակության լայն զանգվածներին:

Պատասխան-Ստեփան Դանիելյան

Մենք Հ2-ով յուրաքանչյուր կիրակի օր մեկ ժամ տևողությամբ հաղորդումներ ենք կազմակերպել, որին մասնակցել են տարբեր ուղղությունների ներկայացուցիչներ: Անց ենք կացրել նաև քննարկումներ: Այս երեք տարվա ընթացքում նախատեսում ենք նույնպես հեռուստահաղորդումներ, գրականության տպագրում, ինտերնետային կայքի թարմացում, որտեղ տեղադրված կլինի ծրագրի արդյունքների մասին ողջ տեղեկատվությունը:

Կարծիքներ

Ռաֆիկ Գրիգորյան,
Վանաձորի Ավետարանական հավատքի քրիստոնյաների եկեղեցու հովիվ

Ուզում եմ ասել, որ քաղաքացիական հասարակություն ստեղծելու համար կան կրոնական համայնքներ, որ լինելով քաղաքացիական հասարակության ստեղծման ամենաակտիվ կողմնակիցներ և ջատագովներ՝ բոլորովին պարտադիր չեն համարում քաղաքականությամբ զբաղվելը:

Ավետարանական ուղղության ներկայացուցիչները լինելով ապաքաղաքական՝ ունեն որոշում, որ պետք է մասնակցեն ընտրությունների: Սակայն քարոզիչներն իրավունք չունեն այդ բնագավառում ցուցումներ տալ: Ուզում եմ ասել, որ կրոնական կազմակերպությունների կողմից քաղաքացիական հասարակություն կարելի է ստեղծել առանց քաղաքականությամբ զբաղվելու: Ինչ վերաբերում է աղանդ հասկացությանը, այն իրավաբանական եզր չէ:

Եվ, ընդհանրապես, կրոնական կազմակերպությունները չեն կարող աղանդ անվանվել: Այստեղ խնդիրը կրոնական տերմինաբանության մեջ է:

Գևորգ Մանուկյան,
Հայկական Սահմանադրական Իրավապաշտպան Կենտրոնի նախագահ

Ես ինքս Առաքելական եկեղեցու անդամ եմ և շատ ցավալի է, վատ է, որ Առաքելական եկեղեցին համաժողովին ներկայացված չէ: Գիտեմ, որ հրավիրվել են, բայց նրանք ինձ էլ ասացին, որ չեն գալու: Եվ սա հարց է առաջացնում. իսկ ինչու՞:

Հարցի պատասխանը լավ կլինի, որ չասենք, թե արհամարհեցին կամ իրենք վատն են, կամ աղանդ են: Լավ կլինի, որ Ստեփան Դանիելյանի ծրագրում ընդգրկվի նաև Առաքելական եկեղեցին: Իմ կարծիքով, այնուամենայնիվ, բազմաթիվ թերությունների հետ խղճի ազատությունը ապահովված է Հայաստանում: Դրա վկայությունը բազմաթիվ եկեղեցիների առկայությունն է:

Հետապնդումներ, ճնշումներ եղել են, կան, բայց պետք է արձանագրենք խղճի ազատության առկայությունը: Ես

Ռաֆիկ Գրիգորյան
Վանաձորի Ավետարանական հավատքի քրիստոնյաների եկեղեցու հովիվ

Գևորգ Մանուկյան
Հայկական Սահմանադրական Իրավապաշտպան Կենտրոնի նախագահ

կուզենայի պարզաբանել, թե ինչու է Հայ Առաքելական եկեղեցին համարվում ազգային, որովհետև պետականություն չունենալու հանգամանքներում եկեղեցին նաև աշխարհիկ դեր է խաղացել և մեզ հասցրել է այսօրվան: Դրա համար մենք պիտի երախտապարտ ու հավատարիմ լինենք Առաքելական եկեղեցուն:

Մեր եկեղեցին ու նրա սպասավորները չեն կարող անթերի լինել, նույնիսկ կաթողիկոսները: Դրա համար Առաքելական եկեղեցու սխալները չպիտի դրոշակ դարձնենք:

Մյուսը՝ հոգևորսության մասին: 1993թ-ին Եվրոպական դատարանը մի որոշում է ընդունել, որով բնութագրվել է հոգևորսությունը: Այդ որոշմամբ ասվում է, որ այո, եկեղեցիներն իրավունք ունեն քարոզչություն անելու, բայց իրավունք չունեն օգտագործել ոչ բարո միջոցներ՝ նյութական կամ այլ խթանիչ, անձին իր եկեղեցուն անդամագրելու նպատակով: Առաքելականի հոգևոր այրերը, երբ խոսում են հոգևորսության կամ խղճի ազատության մասին, նույնպես բողոքում են, որ իրենց եկեղեցու անդամներն այլ եկեղեցու անդամ են դառնում, ու եկեղեցին տկարանում է: Մենք բոլորս շատ լավ գիտենք, որ Առաքելական եկեղեցին նյութապես ծանր վիճակում է մյուս եկեղեցիների համեմատ: Եվ Առաքելական եկեղեցու վիճակը դառնում է ոչ շահեկան:

Ստեփան Դանիելյան

Խղճի ազատության հետ կապված գոյություն ունի այսպիսի պայմանական բաժանում՝ ներքին և արտաքին իրավունք:

Ներքին իրավունքը յուրաքանչյուր մարդու համոզմունքն է՝ ինչ հավատ ուզում է ընդունի, փոխի և այլն: Եվ դա բացարձակ իրավունք է:

Արտաքին իրավունքն այն է, թե դու քո հավատքն ինչպիսի արարողություններով ես դրսևորում: Սա բացարձակ իրավունք չէ, և պետությունն ինչ-ինչ հանգամանքներից ելնելով կարող է որոշակի սահմանափակումներ մտցնել: Օրինակ՝ արգելել մտնել տներ, ասել՝ այս վայրերում մի՛ քարոզեք, միջոցառումներ կազմակերպեք այլ վայրերում: Այսինքն՝ հավատքի դրսևորման վրա կարելի է սահմանափակումներ մտցնել:

Ինչ վերաբերում է նրան, որ Առաքելական եկեղեցին ազգապահպան դեր է կատարել, ուրեմն շնորհակալություն նաև իսլամին՝ Հայ Առաքելական եկեղեցուն այդ իրավունքները տրվել է իսլամի աշխարհայացքի շրջանակներում: Իսլամում կարևորը կրոնական համայնքներն են, որոնք իրենց պատկերացմամբ համարվում են ազգ: Մասնավորապես՝ Թուրքիայում կրոնական համայնքները կոչվում են միլլեթ: Օսմանյան կայսրությունը Հայ Առաքելական եկեղեցուն նույնիսկ ստիպողաբար է տվել իրավունք, որ քո հայը նա է, ով քո քրիստոնյան է: Հայ քրիստոնյա տերմին է եղել, որով պայմանավորվել է դատական, կրթության, ժառանգության իրավունքները: Եվ կրոնավորները իսլամի աշխարհայացքում միջնորդներ էին իսլամի և այդ ազգի միջև: Եվ այդ ժամանակ ոչ միայն հայերի, այլև ասորիների և այլ ազգերի մեջ եղել է այդ մտածողությունը, որ կրոնով է որոշվում ազգը:

Մենք մի քանի հարյուր տարի այդ տրամաբանության մեջ ապրել ենք: Եվ Հայ Առաքելական եկեղեցին ոչ թե այդ դերն իր վրա է վերցրել, այդ դերը նրա վրա դրվել է իսլամի կող-

մից: Եվ հիմա, երբ մենք ունենք անկախ պետություն և շարունակում ենք ազգը պայմանավորել կրոնական պատկանելությամբ, մենք մնում ենք իսլամի տրամաբանության մեջ: Մենք հիմա քրիստոնյա ենք, բայց իսլամական աշխարհայացքի մեջ ենք և ազգային պատկանելությունը որոշում ենք կրոնական պատկանելությամբ: Մինչդեռ ազգային պատկանելությունը որոշվում է քաղաքացիությամբ, անկախ իր կրոնական պատկանելությունից: Այն ժամանակ իսլամում ես կդադարեի հայ լինելուց, որովհետև հայը որոշվում էր կրոնով: Մենք իսլամի տրամաբանությունից պետք է վերջապես դուրս գանք ու հասկանանք, որ ազգային պատկանելությունը կրոնականով չի որոշվում, հասկանանք, որ պետություն ենք, քաղաքացիներ ենք և այլ հարաբերությունների մեջ մնանք, ոչ թե մնանք իսլամի կողմից մեզ վրա դրված կաղապարում:

Ռուբեն Փահլևանյան,
Հայ Ավետարանական Մկրտական եկեղեցու նախագահ

Խոսելով եկեղեցու ազգային լինելու մասին՝ ուզում եմ հիշել Հայ Առաքելական եկեղեցու կողմից սրբերի շարքը դասված Վարդան Մամիկոնյանին և Վարդանանց, որոնք Հազկերտին պատասխանում էին այսպես. ձեզ լինի մեր հարստությունը, մեր բերդերը, մեր ժողովուրդը, մեր ընտանիքները, մեր կյանքն իսկ, բայց եկեղեցին ձեզ չենք կարող տալ, որովհետև եկեղեցին պատկանում է Աստծուն: Ուրեմն, եկեղեցին չի կարող լինել ազգային, այն պատկանում է Աստծուն:
Եկեղեցում կարող է լինել ազգային որոշակի խումբ՝ որպես ընդամենը կառույց: Եվ սա Վարդանի ժառանգորդների համար պետք է ելակետ լինի եկեղեցու՝ ազգային կամ ոչ ազգային հարցը որոշելիս:

Ռուբեն Փահլևանյան
Հայ Ավետարանական Մկրտական եկեղեցու նախագահ

«Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» օրենքը հակասում է ՀՀ Սահմանադրությանը: Ազգային անվտանգության հայեցակարգում, որը ներկայումս մշակման ընթացքում է, շեշտվում է նաև Հայ Առաքելական եկեղեցին որպես ազգային արժեք, որի համար բացառիկ մենաշնորհներ են շեշտադրված: Ընդհանուր փաստաթղթի հայեցակարգն այնպիսին է, որ այն կառույցները, որոնք Հայ Առաքելական եկեղեցու մեջ չեն, ազգի գոյության համար վտանգավոր են, որովհետև փաստաթուղթը կոչվում է ազգային անվտանգության հայեցակարգ:

Հարց Ստեփան Դանիելյանին

Ինչպիսի՞ վերաբերմունք ունեն քաղաքացիական հասարակության շահագրգիռ կողմերը:

Պատասխան-կարծում եմ, որ կրոնը, դավանանքը չեն կարող ազգային լինել, բայց եկեղեցին ազգային կառույց կարող է լինել իր նշանակությամբ: Ինչ վերաբերում է Վարդան Մամիկոնյանին, հակառակ տեսակետներ կան, որ Վարդան Մամիկոնյանը հակապետական գործիչ է եղել, և հիմնական պետական գործիչը Վասակ Սյունին է եղել: Հիշեցնեմ, որ երբ Վարդան Մամիկոնյանի կողմնակիցներին ու Վասակ Սյունուն տանում են Տիզբոն, Վասակ Մամիկոնյանին կախում են ազգային թագավորությունը վերականգնելու համար, իսկ Վարդան Մամիկոնյանի կողմնակիցներին՝ որպես անհանդուրժող: Իրականում ստացվում է հետևյալը. ազգային գործիչ Վասակ Սյունին, որը ցանկացել է պետություն վերականգնել, և Վարդանանց կրոնական կոսմոպոլիտական շարժումը:

Գևորգ Մանուկյան

Ուզում եմ չհամաձայնել ձեզ հետ: Բոլորովին այդպես չէ, որ Առաքելական եկեղեցու վրա իսլամի կողմից է դրվել այդ դերը: Չէի ցանկանա, որ մեր ազգային հերոսները վարկաբեկվեն:

Ռաֆիկ Գրիգորյան

Կրոնական կազմակերպությունների համար ապաքաղաքական նշանակում է չասել՝ ում ընտրել: Միանշանակ, քրիստոնեական կրոնական կազմակերպությունների համար կեղծիքը մեղք է: Չպիտի կեղծեն, իրավունք չունեն նման բան անել: Ընտրությունների վերաբերյալ բազմաթիվ բողոքներ ներկայացված են եղել նույնիսկ Ազգային ժողով:

Քաղաքացիական հասարակություն ասելով՝ ես նկատի ունեմ, որ կրոնական կազմակերպության մեջ գտնվողները դառնան հասարակության ամենաակտիվ քաղաքացիները, իրենց իրավունքների և երկրի տերը դառնան: Եվ ոչ մի խտրականություն չդրսևորվի վերադաս մարմինների կողմից՝ ելնելով նրանց կրոնական պատկանելությունից:

Մեր քաղաքում գոյություն ունի համագործակցություն ավետարանական եկեղեցու և մեր՝ ավետարանական հավատքի եկեղեցու և ադվենտիստների միջև: Մենք ժամանակ առ ժամանակ համատեղ հավաքներ ենք ունենում, միասին խոսում, երգում, աղոթում ենք: Գոյություն ունի Ավետարանական հավատքի եկեղեցիների և խարիզմատ եկեղեցիների ալյանս, որը ժամանակավորապես ես եմ նախագահում: Փաստաթուղթ է ներկայացված Արդարադատության նախարարություն այն գրանցելու համար: Մենք համատեղ հանդիպումներ ենք անցկացնում նաև հանրապետության մասշտաբով: Ալյանսում հավասար սկզբունքներով են եկեղեցիները ընդգրկված, որոնց հովիվները հերթականությամբ ղեկավարելու են 2-3 տարի ժամկետով:

Գիտեք, թե երբ կարող է համագործակցություն լինել, երբ իրար ավելի լավ ճանաչեն: Գոնե լավ իմանան այն հավատամքը, որ ունեն, ծանոթ լինեն ծիսական արարողություններին: Եթե մի բան չի ճանաչվում, սովորաբար վստահությունը լիարժեք չի լինում: Ճանաչողությունն է ստեղծում վստահություն: Իրավունակությունն է /լեգալիզացիա/ տալիս մարդկանց գոնե հաղորդակցվելու, եթե ոչ համագործակցելու հիմք:

Ռոբերտ Ղևոնդյան,
Լոռու մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության գլխավոր մասնագետ

Լավ միջոցառում է, ավելի լավ կլիներ, եթե մեծ մասշտաբի լիներ:
5-6 տարի է, ինչ հանրակրթական դպրոցներում մտցվել է Հայ Առաքելական եկեղեցու պատմություն առարկան: Այն աճող սերնդին դարձի է բերում դեպի եկեղեցին, դեպի քրիստոնեական հավատքը: Այստեղ կարևոր է հասկանալ մի հանգամանք. եթե համարում ենք, որ Հայ Առաքելական եկեղեցին ևս աղանդ է, չարաչար սխալվում ենք:

Երեխան դասագրքում կարդում է եկեղեցու մասին, ու այդ դասագրքերում նշվում է աղանդների դեմ պայքարի մասին: Եթե տարբեր կրոնական ուղղությունների միջև կա համագործակցություն, ուրեմն կարելի է գալ մի ընդհանուր համաձայնության, որպեսզի աճող սերունդը դասագրքում կարդացածի ու կյանքում տեսածի միջև տարբեր պատկերներ չտեսնի: Կարդում է սա, իրականում տեսնում է այլ բան:

Ռոբերտ Ղևոնդյան
Լոռու մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության գլխավոր մասնագետ

Պարո՛ն Դանիելյան, կարելի է պայմանավորվել կառավարության հետ, գալ համաձայնության և երեխայի ուսումնառության գործում այդ հակադրությունը վերացնել: Եթե այսօր մենք խոսում ենք Վարդան Մամիկոնյանի առաքելության մասին, այն կա պատմագրության մեջ: Վասակը Սյունիքից է, Եղիշեն Վարդանանց տան պատմիչն է, և դա արդեն առաջացնում է հակադրություն երեխաների ճանաչողության հայեցակարգի մեջ: Այսօր մուսուլմանական աշխարհում մի մոլլայի կարող են լսել հարյուր հազարավոր մարդիկ, իսկ ինչու՞ մեր սրբերի շարքին դասված մարդուն այսօր կասկածում են:

Ռաֆիկ Գրիգորյան

Բոլոր եկեղեցիները, այդ թվում՝ Հայ Առաքելական եկեղեցին, գրանցված են որպես կրոնական կազմակերպություն:

Ես, որպես քրիստոնյա, իմ երախտիքի խոսքն եմ ասում մեր ազգային եկեղեցուն, որովհետև նրանք եթե զիջած լինեին ու ընդունած մահմեդականությունը, շատ հավանական է, որ ես այսօր քրիստոնյա չլինեի: Ես խոր հարգանքով հարաբերություններ ունեմ տեղի թեմի հետ:

Վեհափառի հետ հանդիպման ժամանակ ասել եմ, որ ազգային եկեղեցուն համարում եմ որպես մշակութային, հոգևոր ժառանգության համակիրը կամ ժառանգորդը: Որովհետև եթե ես այսօր քրիստոնյա եմ, առաջին հերթին պարտական եմ Աստծուն, երկրորդը՝ ազգային եկեղեցու հավատարմությանը քրիստոնեության նկատմամբ:

Կրոնական կազմակերպությունների դերը հասարակական գործընթացներում շատ մեծ է, բայց այսօր շատ փոքր է և ավելի շատ կրոնական կազմակերպությունները դերակատարություն ունեն հասարակության մեջ իրենց գոյությամբ, քան՝ գործունեությամբ: Նրանք ուղղակի կան և ընդգրկում են հազարներ: Բայց նրանց կոնկրետ գործունեությունը բավական պասիվ է: Գտնում եմ, որ այդ հարցում կան օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներ, կա երկկողմանի մեղք: Թե՛ իրենք՝ կրոնական կազմակերպությունները, քիչ են դրսևորում անձնական նախաձեռնություն, և թե՛ բոլոր պետական կամ հասարակական միջոցառումների ժամանակ կազմակերպիչները նրանց քիչ են ներգրավում:

Բոլոր կրոնական կազմակերպություններն ունեն բարոյական արժեքներ և դժվար է պատկերացնել կրոնական, առավել ևս քրիստոնեական կազմակերպություն, որը բարոյական բարձր արժեքների հետամուտ չլինի: Ուստի կարծում եմ, որ կրոնական կազմակերպությունները առաջին հերթին պետք է հասարակության մեջ խաղան ինտեգրելու կամ պահպանելու դեր: Չեմ ուրանում, որ կարող են դեր խաղալ և գտնում եմ, որ ան հրաժեշտ կլինի, որ դեր խաղան նաև ազգային արժեքների պահպանման գործում:

Բոլորովին դեմ չլինելով համամարդկային արժեքների ներկրմանը՝ համենայն դեպս մեր ազգային շատ արժեքներ կարծես թե ո՛չ ինտելեկտուալ, ո՛չ բարոյական առումով չեն զիջում համամարդկային արժեքներին:

Քրիստոնյաների մեջ բաներ կան, որոնք համաշխարհային արժեքների նկատմամբ մի քիչ վերապահումով մոտենալու հիմքեր են ստեղծում: Օրինակ, այսօր գնում է գլոբալիզացման քաղաքականություն: Երբեմն նկատում ենք երևույթներ, որոնք փորձում են տանել ազգին գլոբալիզացիայի՝ ոտնահարելով այն բարոյական և ազգային արժեքները, որոնք պահպանում է մեր ժողովուրդը: Մենք լավ գիտենք, որ ինչպես Աստծո որդին եկավ աշխարհ ու երեքուկես տասնամյակ գործեց, այդպես պիտի գա նաև հակաքրիստոսը՝ Նեռը: Նա նույնպես կունենա իր գործունեության ժամանակահատվածը, նույնպես կունենա իր հզոր ներգործությունը ժողովուրդների և ազգերի վրա: Գլոբալիզացիան ունի նշանակություն այն առումով, որ մենք գտնում ենք, որ հակաքրիստոսի գալու նախապատրաստությունը սա կարող է լինել, որպեսզի աշխարհը հեշտ կառավարելի լինի: Մենք, բնականաբար, մեր ձայնը բարձրացնում ենք այսպիսի երևույթների դեմ՝ հասկանալով նաև մեր իրավունքների սահմանները:

Բայց հասարակական գործընթացներում երրորդ բնագավառը, որ կուզենայի նշել, մշակութայինն է: Այս բնագառավում ևս կրոնական կազմակերպությունները պետք է իրենց որոշակի դերակատարությունը ունենան: Իհարկե, այս առումով կարող ենք շնորհակալություն հայտնել ազգային եկեղեցուն, բայց անգամ նրա դերակատարությունն այսօր բավական համեստ է:

Ես գտնում եմ, որ ոչ միայն իրենք պետք է ակտիվ գործունեություն ունենան, այլև բոլոր կրոնական կազմակերպությունները: Դա Վինչիի կոդը, չնայած լինելով 1700-ամյա քրիստոնեական երկիր, թույլատրվեց ցուցադրել: Բայց Չինաստանում արգելվեց, մահմեդական Ադրբեջանում արգելվեց:

Կամ այնպիսի երևույթ, որ վիրավորում է մեր սրբությունները: Եկեղեցին կամ կրոնական կազմակերպությունները պետք է իրենց դերակատարումն ունենան ոչ միայն այս երևույթների նկատմամբ, այլև դրանց նկատմամբ հասարակական վերաբերմունքի ձևավորման հարցում: Անարդարությունների նկատմամբ կրոնական կազմակերպությունները պետք է բանավոր կամ գրավոր հնչեցնեն իրենց տեսակետները և փորձեն ներգործել այդ անարդար երևույթների վերացման ուղղությամբ: Մենք գտնում ենք, որ գլոբալիզացիայի հարցում մասոնական կազմակերպությունները ունենում են իրենց նեգատիվ և չար ազդեցությունը և նպաստում են հակաքրիստոսի հայտնությանը: Եվ գտնում ենք, որ քրիստոնեական կազմակերպությունները այս հարցերի նկատմամբ պետք է իրենց տեսակետները հնչեցնեն:

Որոշակի դժգոհություն ունեմ նաև տեղեկատվական աղբյուրներից: Կցանկանայի, որ նրանք օբյեկտիվ լինեին տեսակետների ներկայացման հարցում: Բազմաթիվ անգամներ են եղել, երբ լրագրողները ստանում են օբյեկտիվ պատասխաններ ու հրապարակում ապատեղեկատվություն: Չկա վստահություն, որովհետև օբյեկտիվ մոտեցում չկա: Փորձում են հասարակական կարծիք ստեղծել, շփոթեցնել, մոլորեցնել հանրությանը:

Բազմաթիվ միջոցառումներ են արվում, որոնց կրոնական կազմակերպությունները չեն հրավիրվում: Ոչ միայն մեզ ենք մեղադրում, այլև մեզ ճանաչող կազմակերպություններին՝ մեզ անտեսելու համար: Մեզ մեղադրում ենք նրա համար, որ անձնական նախաձեռնությունը շատ քիչ է, շատ ակտիվ չենք, բայց մեղադրում ենք նաև մեզ ճանաչող գերատեսչություններին, որ իրենց միջոցառումների ժամանակ չեն ընդգրկում, մեր տեսակետները հաշվի չեն առնում, և հաճախ տեղեկատվական աղբյուրներով հնարավորություն չենք ունենում արտահայտելու մեր տեսակետը:

Ես կողմնակից եմ քաղաքացիական հասարակության ձևավորման, որտեղ ամեն քաղաքացի հավասար ու ազատ կլինի ու չի դիտարկվի որպես կրոնական այլախոհ:

Ստեփան Դանիելյան

Կրոնական կազմակերպությունների ու ազգային փոքրամասնությունների վարչությունում մի խումբ էր ձևավորվել, որն աշխատեց վեցից յոթ ամիս: Խմբի աշխատանքներին հրավիրված էին տարբեր կրոնական կազմակերպությունների ներկայացուցիչներ: Քննարկումները բավականին բարդ էին ընթանում: Մասնակցում էին տարբեր նախարարությունների ներկայացուցիչներ, նաև ԵՊՀ աստվածաբանության ֆակուլտետից: Ես էլ էի հրավիրված այդ խմբի աշխատանքներին: Բավականին բարդ հարցեր կային և կրթության վերաբերյալ: Մասնավորապես՝ դպրոցում պետք է դասավանդվի Կրոնի առարկա, թե Առաքելական եկեղեցու պատմություն: Առաքելական եկեղեցու պատմության դասագրքում բազմաթիվ սխալներ կան, բավականին թերի գիրք է:

Կային հարցեր՝ կապված ծնողների իրավունքների հետ: Եթե մի ծնողը մի կրոնական ուղղության ներկայացուցիչ է, մյուսը՝ մեկ այլ, այստեղ ծագում են խնդիրներ. երեխան որտե՞ղ հաճախի: Կան օրենք-

ներ, որոնք սահմանում են, թե երեխան որտեղ և երբ հաճախի:

Խմբի աշխատանքներին հրավիրված կրոնական կազմակերպությունների ներկայացուցիչները չէին մասնակցում: Զանգում, կանչում էինք, չէին գալիս: Սա փակ լինելու խնդիր է, ոչ թե անվստահության: Այսինքն՝ դա ինձ չի վերաբերում, ինչ օրենք ուզում են ընդունեն, ես իմ օրենքով եմ ապրում: Նման երևույթ գոյություն ունի:

Ռուբեն Փահլևանյան

Մենք նման ենք այն բուսաբաններին, որոնք փորձում են օրքիդեան աճեցնել Շիրակի դաշտում: Շատ գեղեցիկ է, շատ լավ, բայց այսօր Շիրակի դաշտը չունի այն կլիմայական պայմանները, որպեսզի օրքիդեան աճի ինչպես Հոլանդիայում: Բայց մենք փորձում ենք դա անել: Մենք պարտավոր ենք դա անել, որովհետև պետք ունենք այդ օրքիդեայի՝ քաղաքացիական հասարակության: Եվ մեր բոլոր խնդիրները գալիս են նրանից, որ չունենք այդ քաղաքացիական հասարակությունը, որը ձևավորվում է հանդուրժողության սկզբունքով: Եվ մենք որպես քրիստոնյաներ պիտի հետևենք Տեր Հիսուսի օրինակին, որ հրաշալի հանդուրժողության օրինակ էր ցուցաբերում. հանդուրժում էր մեղավոր մարդուն, ոչ թե՝ մեղքը:

Մենք պետք է այս մոտեցումը ունենանք նաև գաղափարների բնագավառում, հանդուրժենք մարդու ազատ գաղափարներ ընտրելու իրավունքը: Եթե որևէ մեկը այլ կերպ է մտածում, չի նշանակում, որ նա վատ մարդ է: Ես պիտի հանդուրժեմ այդպես մտածելու իրավունքը, և հանդուրժողությունը վերաբերում է այդ մարդու մտածելու իրավունքին, և ոչ թե նրա մտածածին կամ գաղափարին:

Մենք պետք է ստեղծենք այն մթնոլորտը, որում իրար լսենք ու համաձայնենք: Փորձենք փաստել, որ իմ մտածածով ավելի ճիշտ է՝ համեմատելով ընդհանուր կանոնի հետ, որը Սուրբ գիրքն է: Եվ եթե կարողանանք այդպիսի մթնոլորտ ստեղծել, այդ դեպքում մենք կկարողանանք աճեցնել նաև այդ օրքիդեան:

Մենք գիտենք, թե ինչպես է հալածվում հավատացյալը: Իսկ ե՞րբ չի հալածվել Ճշմարիտ քրիստոնյան: Զարմացեք, եթե հալածանքներ չկան: Բայց արհեստական մի՛ գնա հալածանքների: Եկեղեցին ոչ միայն պարտավոր է, այլև ամեն ջանք գործադրում է հասարակության փոփոխության վրա ազդելու համար: Սա է եկեղեցու առաքելությունը: Եկեղեցին պետք է ազդի հասարակության վրա, պետք է փոխի հասարակությունը: Եվ սա մենք անում ենք մեր համայնքների ներսում մեծ կամ փոքր չափով:

Ես ուզում եմ հազար հոգու սովորեցնել՝ մի սպանիր, բայց ինձ արգելում են հազար հոգու հետ խոսել: Ասում են՝ քո համայնքը 25 հոգի է, դու պարտավոր ես այդքանին սովորեցնել՝ «մի սպանիր»: Եվ ինը հարյուր յոթանասունհինգին մենք ինչ ուզենք, այն կասենք, մենաշնորհ ունենք:

Երբ մենք խոսում ենք մեծամասնության և փոքրամասնության տարբերությունների մասին, ես ընդհանրապես դեմ եմ փոքրամասնություն հասկացությանը: Եթե նկատի ունեն միայն քանակային կազմը, այո, ընդունելի է, մենք փոքրամասնություն ենք կազմում: Եթե խոսում ենք պատմականի, ավանդականի մասին, այսօր

Հայաստանում ամենահինը ամենևին էլ Առաքելական եկեղեցին չէ, այլ արիական, կուսակրոն խումբը, որը հետևում է արևապաշտությանը: Ուրեմն եկեք վերադառնանք այդ արմատներին: Վերադառնալ այդ արմատներին չի նշանակում, որ խնձորը պիտի վերադառնա ճակնդեղի արմատներին: Ճակնդեղի արմատն ուրիշ է, խնձորինը՝ ուրիշ: Եթե ասում ենք՝ վերադառնալ մեր արմատներին, ուրեմն եկեք վերադառնանք առաջին դարի քրիստոնեական եկեղեցի՝ որպես քրիստոնյաներ իր կարգով, իր ձևով: Բայց վերադառնանք ոչ միայն որպես կառույց, որովհետև եկեղեցին գոյություն ունեցող կառույց է՝ Աստծո ներկայությունը երկրի վրա տվյալ ազգի մեջ, որը պետք է ունենա իր ազդեցությունը տվյալ երկրի ժողովրդի պատմության, ճակատագրի և առօրյա կյանքում:

Եկեղեցին պետք է հիշի, որ ինքը պատկանում և ծառայում է Աստծուն: Հասարակությունը պետք է ձևավորվի այն սկզբունքներով, որոնք ուզում է այդ եկեղեցու պաշտած Աստվածը: Եկեղեցին կամ կրոնական կառույցը այս դերը պիտի խաղան հասարակության մեջ: Եվ եթե ես հավատում եմ Հիսուսի պատվիրաններին, ձգտում եմ ապրել դրանցով ու դա եմ քարոզում, սա է իմ ազդեցությունը հասարակության մեջ: Սրա մեջ մտնում է նաև հանդուրժողության սկզբունքը: Ես քարոզում եմ իմ եկեղեցում հանդուրժողություն տարբեր մոտեցումների, այդ թվում՝ ավանդական ու ոչ ավանդական, նորաստեղծ ու հին կրոնական հոսանքների նկատմամբ:

Մեր սկզբունքը հետևյալն է՝ մենք չենք հավակնում ճշմարտության միակ կրողը լինելուն, բայց համոզված ենք, որ կանգնած ենք ճշմարտության վրա:

Ինչ վերաբերում է ինքնամեկուսացմանը կամ արհեստականորեն ստեղծված մեկուսացմանը: Մեր ժողովրդի մեջ արհեստականորեն ստեղծվում է այն մտայնությունը, թե կա որոշակի մեկ կառույց, որ մեր ազգայինն է, մյուսները՝ օտար են, օտարամուտ: Եկեղեցին պետք է իր պատմական առաքելությունը կատարի՝ ելնելով իր սկզբունքներից:

Մեր Սահմանադրության մեջ հստակ ասված է, որ պետությունը բաժանված է եկեղեցուց: Պետական միջոցառում է կազմակերպվում և այնտեղ հրավիրվում է եկեղեցիներից մեկը: Ինչու՞ այնտեղ չեն մյուսները: Նշանակում է արհեստականորեն ստեղծվում է մեկուսացված վիճակ: Լավագույն դեպքում, եթե դու ծանոթներ ունես կառավարությունում, կարող ես հրավիրատոմս ստանալ և վերջին շարքերում խելոք նստել: Միևնույն ժամանակ, մեկ ուրիշ կրոնական կազմակերպության առաջնորդ կարող է պատիվ ունենալ նստել նախագահի կողքին: Այսպես չի կարելի խոսել հավասար ըմբռնման մասին: Ժողովուրդը չի ընկալում սա և ժողովուրդը տեսնում է, որ հստակ տարբերություններ կան յուրայինների և օտարների միջև:

Ազգային անվտանգության հայեցակարգում նշվում է. եթե դու Հայ Առաքելական եկեղեցի չես, դու վտանգավոր ես երկրի համար: Աշխարհը դիտում է մեզ որպես թշնամի:

Երբ լինում են այսպիսի հանդիպումներ, մեզ տրվում է հնարավորություն մեր մտահոգությունները արտահայտելու:

Հրատարակվեց մանկական հանրագիտարան, որտեղ գր-

ված է, թե ովքեր են աղանդները: Դրանց թվում նաև մենք էինք: Ես դիմեցի Մայր Աթոռ հարցով՝ թե ինչու է հրատարակվում այսպիսի գիրք ու նշվում, որ մկրտականությունը աղանդավորություն է: Ինձ պատասխանում են, թե պատասխանատվությունը հրատարակությանն է, և Մայր Աթոռը որևէ առնչություն չունի դրա հետ: Ինչպե՞ս կարելի է այսպիսի անպատասխանատվության գնալ ազատության անվան տակ:

Կարծում եմ, երբ մենք մեր համայնքների սահմաններում փորձում ենք կրթել, դաստիարակել մեր ժողովրդին, սա արդեն մեր ազդեցությունն է քաղաքացիական հասարակություն ստեղծելու գործում: Կար ժամանակ, որ մեր եկեղեցիներում թշնամանք կամ հակառակություն էր քարոզվում մյուս եկեղեցիների հանդեպ: Բարեբախտաբար, այսօր բարեկարգ եկեղեցիների շրջանակում համագործակցության կամ երկխոսության ավելի շատ փորձեր կան: Բայց դժվար է ստեղծվում երկխոսությունը Առաքելական եկեղեցու՝ մեծ եղբոր կեցվածքի պատճառով, որովհետև նրանցից ոչ մեկը երբեք չի հանդուրժի մեզ հետ կլոր սեղանի շուրջ նստել: Եթե բարձր աթոռ

Արայիկ Մինասյան
Հիսուս Քրիստոսի վերջին օրերի սրբերի եկեղեցու ներկայացուցիչ

լինի, որտեղ նրանք նստեն, անպայման կգան: Դժբախտաբար, իրականությունն այսպիսին է. ժամանակավորապես հանդուրժում են մեր գոյությունը՝ ելնելով ինչ-ինչ բաներից:

Կրոնական կազմակերպությունը հասարակական գործընթացներում շատ հստակ պետք է ունենա իր դիրքորոշումը՝ ամենաակտիվ քաղաքացիական դիրքորոշումը: Մենք պետք է պայքարենք և թույլ չտանք հակաքրիստոսի ազդեցությունը Հայաստանում: Ինչպիսի դրսևորում էլ ունենա կեղծիքը, մենք պետք է պայքարենք դրա դեմ: Եթե

Աստված ողորմություն արեց մեզ, պահեց այդ նավակը իսլամական հզոր ալիքների մեջ, նշանակում է նավակը իրավունք ունի նավահանգիստ հասնելու: Ուրեմն, եկեք այդ նավը գուրգուրենք, շոյենք, դարձնենք քաղաքացիական հասարակությամբ առաջնորդվող նավ, որի նավապետը՝ Հիսուս Քրիստոսը, նավը պիտի հասցնի իր մոտ: Հանդուրժողություն սովորենք Տեր Հիսուսից՝ հանդուրժելով սխալվողին, բայց ոչ՝ սխալները:

Արայիկ Մինասյան,
Հիսուս Քրիստոսի վերջին օրերի սրբերի եկեղեցու ներկայացուցիչ

Չնայած ես ձեզ բոլորիդ չեմ ճանաչում, բայց ուզում եմ ասել, որ դուք լավ մարդիկ եք: Մենք հավաքվել ենք Քրիստոսի սիրո և խաղաղության ներքո: Եթե մենք ղեկավարում ենք եկեղեցի, առաջին իսկ օրինակը մենք պետք է լինենք: Այսօր հասարակության համար մենք չնայած բավարար չենք անում, ինչ էլ որ անենք, բավարար չեմ համարում, որովհետև ինչ արեց Քրիստոսը մեզ համար, ես չեմ գտնում, որ մենք բավարար ենք անում իր համար: Աշխատում եմ մի քիչ



նեղություն տալ ինձ, որ մի քիչ բան անեմ Քրիստոսի համար: Այս գործը, որ մենք անում ենք, հրավիրում ենք հասարակությանը դեպի Քրիստոս: Բայց չենք ստիպում, որովհետև սա աստվածային սկզբունք է: Աստված մարդուն չտվեց մի այնպիսի կյանք, չքելադրեց, բայց մեզ ազատ ընտրություն տվեց, որպեսզի մենք ընտրենք լավը վատից, սևը սպիտակից, չարը բարուց: Եվ այսօր մենք ընտրություն ենք կատարում: Բայց ինչ-որ մեկը թույլ չի տալիս ընտրություն անել: Դա չարից է գալիս: Եվ այսօր որևիցե մի եկեղեցի, որը նախանձախնդիր է, որ իր անդամը կամ ինչ-որ մեկը հարում է կամ ընտրել է մեկ ուրիշ եկեղեցու, թող այդ մարդն իր ընտրությունը անի: Որևիցե անգամ մենք վատ չենք զգա: Մենք իշխանություն չունենք մարդկանց հոգիների վրա, որպեսզի նրանց ստիպենք, որ մեր անդամը լինեն: Երբ Քրիստոսը քարոզում էր իր վարդապետությունը, նա որևիցե մեկի չստիպեց իր հետևից գնալ:

Տարբեր եկեղեցիներում լինելով՝ բոլորս նույն գործն ենք անում, նույն Աստծուն ենք երկրպագում: Բոլորս համաձայն ենք դրա հետ: Իսկ ինչ է պատահել այսօր, երբ մեր մեջ խնդիրներ են առաջ եկել: Մենք ասում ենք՝ մենք ենք ճիշտ, նրանք ասում են՝ մենք: Թույլ տվեք Աստված ասի, թե ով է ճիշտ: Մենք ո՞վ ենք, որ ասենք, ինչու ես այդպես ասում: Ինչու՞ համար, մի՞թե մենք դարձել ենք անհանդուրժող, մի՞թե մենք դարձել ենք Աստծու փոխանորդը: Մի՞թե մենք արդեն աստվածներ ենք: Ոչ ոքս կատարյալ չենք: Մենք՝ որպես հովիվներ, առաջնորդներ, հասարակությունից պիտի բավական բարձր կանգնենք մեր շնորհքով: Եթե մենք հասարակությունից բարձր չենք կանգնած, մենք հասարակությանը որևէ բան չենք տա և չենք կարող նրան բարձրացնել:

Գագիկ Բաղալյան,
Յոթերորդ օրվա ադվենտիստների եկեղեցու ներկայացուցիչ

Մենք էլ ենք գտնում, որ կրոնական կազմակերպությունները քիչ դեր չեն խաղացել հասարակական գործընթացներում և այսօր էլ շարունակում են դեր ունենալ բոլոր բնագավառներում: Մենք գիտենք, որ հասարակությունը ուժեղ է ուժեղ ընտանիքներով, և հենց այդ բնագավառներում մենք կարող ենք բազմաբնույթ գործունեություն ծավալել: Օգնել ընտանիքներին, որպեսզի նրանք լինեն երջանիկ, ավելի օրինակելի և ավելի բարգավաճող:

Օրինակ՝ 1985թ-ի տվյալներով, աշխարհում ամուսնալուծվում էր 8 ընտանիքից մեկը, 1990-ին՝ 3-ից 1-ը, 2006-ին՝ 10-ից 9-ը: Ռուսաստանում կա վայր, որտեղ այն հասնում է 95 տոկոսի, Ուկրաինայում 72 տոկոս, Բելոռուսում՝ 80 տոկոս: Մեզ մոտ էլ արդեն դա ակնհայտ է: Դա քայքայում է պետությունը:

Այսօր տարածված են բազմաթիվ հիվանդություններ՝ ՄԻԱՎ/ՁԻԱՀ, քաղցկեղ, սրտանոթային հիվանդություններ, շաքար և այլն: Առողջապահության բնագավառում նույնպես մենք կարող ենք դեր խաղալ: Դրա համար տարբեր ծրագրեր կան:

Կրոնական կազմակերպությունը մեծ դեր է խաղում նաև բարոյականության բնագավառում: Աշխարհում տարբեր բնագավառներում այլասերում է նկատվում: Հոսքն արդեն մեզ մոտ է ներխուժում: Կրոնական կազմակերպությունները այս բնագավառում ամենա-

մեծ գործը կարող են անել և անում էլ են:

Բարեգործությունը կրոն չէ, այն մարդու իրավունքների մեջ է մտնում, և ոչ ոք չի կարող ինձ ասել, թե ինչու ես հարևանիդ հաց ու ջուր տալիս: Դա Քրիստոսի օրենքն է: Սոցիալական բազմաթիվ ծրագրեր էլ ենք անում ծերերի, հաշմանդամների, միայնակների, բանտարկյալների, ծնողազուրկ երեխաների համար:

Կարող ենք հանրօգուտ աշխատանքներ իրականացնել՝ ծառատունկեր, որոշակի տարածքի մաքրում: Կարող ենք օգնել մատաղ սերնդին սեր, հարգանք, բարություն սերմանել շրջապատի նկատմամբ: Նման բաներ արվել են և շարունակում են արվել:

Մի խնդրանք՝ կրոնական կազմակերպություններին չդիտարկեն որպես ազգի թշնամի: Ես հայ եմ, գուցե ավելի լավ, քան ուրիշները: Եթե չեմ կիսում Առաքելական եկեղեցու ուսմունքը, չի նշանակում, որ ես ազգի դավաճան եմ: Մենք ապրում ենք մեր երկրում և մենք էլ ենք փափագում, որ մեր երկիրը ծաղկուն լինի, բարգավաճ և օրինակելի: Մենք ևս դեմ ենք երկպառակություններին ու այն ամենին, ինչը քայքայում է ազգը:

Պասկալ Բոկկերս,
Միջեկեղեցական Խաղաղության խորհրդի Հարավային Կովկասում միջազգային խորհրդական

Քաջություն էր բոլորի կողմից գալ այստեղ և ներկա գտնվել: Եվ եթե դուք գալիս եք միասին նստելու, դուք դա գալիս եք անելու՝ հիմնված բարոյական արժեքների վրա: Եվ այդ բարոյական արժեքները վերաբերում են ձեր ինքնությանը: Եվ խիզախ էր այնքանով, որ հավաքվել եք ոչ թե քննարկելու այդ բարոյական արժեքները, այլ՝ թե ինչ համատեղ գործողություններ կարող եք միասին անել, որպեսզի կյանքի կոչեք այդ արժեքները:

Եվ հենց Հայաստանի համար, որը քաղաքացիական հասարակությամբ նոր երկիր է և ավելի շատ նոր է իր բազմակարծությամբ, այս դեպքում շատ կարևոր է միասին հավաքվել և տեսնել, թե ինչպես կարող ենք միասին կիսվել և ինչի կարող ենք հասնել: Եվ բոլորովին էլ պարտադիր չէ, որ բոլորս համաձայնենք մեր ներքին արժեքներով, որ ունենք յուրաքանչյուրս մեր եկեղեցում:

Կարող եմ օրինակ բերել իմ կազմակերպությունը, որտեղ ես աշխատում եմ: Այն միջեկեղեցական կազմակերպություն է, և այն կազմող եկեղեցիները հայտարարում են, որ հավաքվել են ոչ թե եկեղեցական ինչոր միջոցառումներ նշելու, այլ համաձայնել են իրականացնել ընդհանուր փորձեր և գործողություններ, որպեսզի հաստատեն խաղաղություն: Նրանք այս ձևով ոչ թե արտահայտում են իրենց տեսակետը և շահերը, այլ՝ ընդհանուր հետաքրքրությունները:

Հաշվի առնելով, որ Հայաստանում բազմազանությունը երիտասարդ է, առաջին հերթին պետք է մտածեք, թե ինչպես անեք, որպեսզի համագործակցեք միմյանց հետ տարբեր բնագավառներում, թե ինչպես կարող եք ներկայանալ նաև հասարակությանը, ավելի շատ միավորվել, քան միմյանցից հեռանալ: Եվ հիմնական խնդիրը ձեզ համար այն է, թե ինչպես հանդուրժել:

ՀԱՄԱԺՈՂՈՎԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀԵՏԱԳԱ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՄՇԱԿՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Համաժողովի մասնակիցները բաժանվեցին երկու աշխատանքային խմբերի. կրոնական կազմակերպությունների, հասարակական կազմակերպությունների և ՁԼՄ-երի միջև համագործակցության բնագավառները և խնդիրները մշակելու նպատակով:

Խմբային աշխատանքների արդյունքները ներկայացվելուց հետո ծավալված քննարկումների և առաջարկությունների վերջնական արդյունքը ունեցավ հետևյալ տեսքը.

1-ին խումբ

ՀԿ և կրոնական կազմակերպություններ համագործակցության ուղղությունները

1. Իրավախախտումների, ճնշումների, բռնությունների վերաբերյալ ՀԿ զեկույցներ և տարածում միջազգային ատյաններում
2. Խղճի ազատության վերաբերյալ մամուլի հրատարակությունների մոնիթորինգի իրականացում
3. ՀԿ և կրոնական կազմակերպությունների համատեղ ծրագրեր (օր.՝ կրթադաստիարակչական, հանրօգուտ աշխատանքներ, շրջակա միջավայրի պաշտպանության վերաբերյալ ծրագրեր)
4. Հասարակական նշանակություն ունեցող դեպքերի վերաբերյալ համատեղ վերաբերմունքի արտահայտում
5. Նախընտրական շրջանում համատեղ գործողություններ՝ ուղղված կեղծիքների, խախտումների դեմ
6. Միջկրոնական համագործակցության բնագավառում կազմակերպությունների խնդիրների կարիքի գնահատում

2-րդ խումբ

Կրոնական կազմակերպություններ – ՀԿ
ՁԼՄ–ներ – Կրոնական Կազմակերպություններ.

1. Համագործակցություն լրատվության դաշտում

Աշխատանք խմբերում

2. Սոցիալական քաղաքականության բնագավառում
3. Քաղաքացիական կրթության (ժողովրդավարության, մարդու իրավունքների) բնագավառում
4. Օրենսդրական դաշտի բարելավում
5. Նախընտրական և ընտրությունների ընթացքում արդար ընտրության ապահովում
6. Համայնքային մակարդակի խնդիրների լուծման բնագավառում համագործակցություն
7. Սոցիալապես խոցելի խմբերի ներկայացուցիչներին սոցիալ-հոգեբանական աջակցություն
8. Կալանավորների և դատապարտյալների իրավունքների պաշտպանություն

Ինչպե՞ս

1. Հասարակության իրազեկման մակարդակի բարձրացում եկեղեցիների գործունեության վերաբերյալ: Համատեղ հրապարակումներ մարդու իրավունքների խախտումների փաստերի վերաբերյալ (խղճի ազատություն և այլն): Ապատեղեկատվության վերաբերյալ համատեղ արձագանքներ և գնահատականներ:
2. Սոցիալապես անապահով խավերի շահերի պաշտպանություն (թոշակառուներ, հաշմանդամներ, ազատամարտիկներ և այլն) և հոգեբանական աջակցություն: Սպառողների շահերի պաշտպանություն:
3. «Մարդու իրավունքներ և քաղաքացիական հասարակության հիմնադրույթները» թեմայով սեմինարների կազմակերպում, ինչպես նաև ազգային և հոգևոր մշակույթի ուսուցում: Համատեղ քննարկումներ ընտանիքի, ամուսնության թեմաներով:
4. Տեղեկատվական գործունեություն: Հեռուստատեսային հաղորդումների պատրաստում:
5. Օրենսդրության կիրառման խնդիրների բացահայտում և դրանց լուծման ուղղությամբ առաջարկությունների մշակում և լոբբինգ:
6. Դիտորդական առաքելության իրականացում, վերաբերմունքի արտահայտում խախտումների նկատմամբ, համատեղ հայտարարություններ, ակցիաներ:

Աշխատանք խմբերում

Առաջարկություններ

1. Հայտարարություններով, կոչերով հանդես գալ ընտրակեղծիքների դեմ
2. Դատական համակարգի անօրինական գործունեության դեմ
3. ԱրմենՏելի կողմից կատարվող անօրինականությունների դեմ (համագործակցելով իրավապաշտպան ՀԿ-ների հետ)
4. Աղքատության հաղթահարման ուղղությամբ քայլեր ձեռնարկել
5. Համընդհանուր կոչ հանուն կրթության բովանդակության ապահովման
6. Ֆիլմերի պատրաստում և ցուցադրում՝ ծխելու վնասակարության, խմիչքի, թմրանյութերի և այլնի վերաբերյալ
7. Տարբեր միջոցառումների, հեռուստաեթերների կազմակերպում
8. Խմբագրական խորհրդի ձևավորում, համատեղ թերթի տպագրում
9. Քրեակատարողական հիմնարկներում դատապարտյալների պահման պայմանները բարելավելու ուղղությամբ քայլերի ձեռնարկում

ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑԱՆԿԸ

1	Արթուր Սաքունց	ՀՔԱ Վանաձորի գրասենյակ
2	Ստեփան Դանիելյան	«Համագործակցություն հանուն ժողովրդավարության» կենտրոն
3	Ռուբեն Փահլևանյան	Գյումրիի Ավետարանական-մկրտական եկեղեցի
4	Գագիկ Բաղալյան	7-րդ օրվա ադվենտիստների եկեղեցի
5	Հովիկ Մխիթարյան	7-րդ օրվա ադվենտիստների եկեղեցի
6	Ռաֆայել Գրիգորյան	Ավետարանի հավատքի քրիստոնյաների եկեղեցի
7	Հայկ Պողոսյան	Ավետարանի հավատքի քրիստոնյաների եկեղեցի
8	Արտյոմ Փիլոյան	Նոր Առաքելոց եկեղեցու Հայաստանի համայնք
9	Միլենա Գևորգյան	Հիսուս Քրիստոսի վերջին օրերի սրբերի եկեղեցի
10	Արայիկ Մինասյան	Հիսուս Քրիստոսի վերջին օրերի սրբերի եկեղեցի
11	Խաչիկ Խաչատրյան	Հայաստանյաց Ավետարանական եկեղեցի
12	Ռոբերտ Ղևոնդյան	Լոռու մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության գլխավոր մասնագետ
13	Արարատ Մարգարյան	Հելսինկյան ընկերակցության Վանաձորի գրասենյակ
14	Գևորգ Մանուկյան	Հայկական Սահմանադրական Իրավապաշտպան կենտրոն
15	Ռոլանդ Ադամյան	Հիսուս Քրիստոսի վերջին օրերի սրբերի եկեղեցի
16	Համբարձում Կիրակոսյան	Ավետարանի հավատքի քրիստոնյաների եկեղեցի
17	Նաիրա Բուլղադարյան	ՀՔԱ Վանաձորի գրասենյակ
18	Պասկալ Բոկկերս	Միջեկեղեցական խաղաղության խորհուրդ
19	Եվա Գսերգու	ՀՔԱ Վանաձորի գրասենյակում կամավոր
20	Արտակ Օհանյան	Վանաձորի մաուլի ակումբ

ՕՐԱԿԱՐԳ

Օր 1

12: 00	Մասնակիցների ժամանում
12: 00-13:00	Գրանցում և հյուրասիրություն
13:00-13:10	Բացման խոսք Ա. Սաքունց – «ՀՔԱ Վանաձորի գրասենյակի նախագահ»
13:10-13:30	«Կրոնական կազմակերպությունների խնդիրները հասարակա կան հարաբերություններում» /ուսումնասիրությունների ար դյունքներ/ Ա. Սաքունց – «ՀՔԱ Վանաձորի գրասենյակի նախագահ»
13:30-14:10	«Կրոնական կազմակերպությունների գործունեությունը կար գավորող ազգային օրենսդրության համապատասխանությունը եվրոպական չափանիշներին» Ստեփան Դանիելյան- «Համագործակցություն հանուն ժողովրդավարության» ՀԿ նախագահ
14:10-14:40	Հարցեր, ելույթներ, կարծիքներ
14:40-15:00	Սուրճի ընդմիջում
15:00-16:00	«Կրոնական կազմակերպությունների դերը հասարակական գործընթացներում» Ռաֆայել Գրիգորյան-Ավետարանի Հավատքի եկեղեցի Ռուբեն Փահլևանյան-Ավետարանական-մկրտական եկեղեցի Գագիկ Բաղալյան-Յոթերորդ օրվա ադվենտիստների եկեղեցի
16:00-16:30	Քննարկում
16:30-17:00	Սուրճի ընդմիջում

ՕԳՈՍՏՈՍԻ
10-11, 2006թ.
Ք. ՎԱՆԱՁՈՐ

«ԿՐՈՆԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԵՐԸ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐՈՒՄ» ՀԱՄԱԺՈՂՈՎ

ՕԳՈՍՏՈՍԻ
10-11, 2006թ.
Ք. ՎԱՆԱՁՈՐ

«ԿՐՈՆԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԵՐԸ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐՈՒՄ» ՀԱՄԱԺՈՂՈՎ

17:00-18:00	Կրոնական կազմակերպությունների դերը քաղաքացիական հասարակության ձևավորման գործընթացում-խմբային աշխատանք /խմբերի ձևավորում, թեմաների հստակեցում/ Առաջարկությունների մշակում հետևյալ թեմաներով՝ 1. կրոնական կազմակերպություններ-հասարակական կազմակերպություններ համագործակցություն 2. կրոնական կազմակերպություններ-ՀԿ-ներ, ՁԼՄ-ներ- կրոնական կազմակերպություններ
18:00-19:00	Ընդմիջում
19:00-20:00	Ուղիղ եթեր «Լոռի-TV»-ով՝ «Կրոնական համագործակցություն» թեմայով
20:00	Ընթրիք

Օր 2

9:00-9:30	Նախաճաշ
9:30-10:30	Աշխատանք խմբերում ըստ թեմաների
10:30-11:00	Սուրճի ընդմիջում
11:15-12:00	Խմբային աշխատանքների արդյունքների և առաջարկությունների ներկայացում
12:00-12:40	Հարց ու պատասխան
12:40-13:00	Աշխատանքների ավարտ և ամփոփում
13:00	Մասնակիցների մեկնում

Ծրագրի շրջանակներում ՀՔԱ Վանաձորի գրասենյակը հանդիպումներ է ունեցել Լոռու, Շիրակի, Տավուշի մարզերի և Երևանի մի շարք եկեղեցիների և կրոնական կազմակերպությունների ներկայացուցիչների հետ: Նրանց կարծիքներն ու տեսակետները ներկայացված են ներքոհիշյալ հոդվածներում, որոնք տպագրվել են «Քաղաքացիական նախաձեռնություն» շաբաթաթերթում:

ԿՐՈՆԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՀԱՋԻՎ ՀԱՆԴՈՒՐԺՈՒՄ ԵՆ

Շիրակի մարզում 632 մարդ անդամակցում է Ավետարանական մկրտական եկեղեցուն: Կրոնական այս կազմակերպություն կարող են մուտք գործել միայն չափահաս մարդիկ, որոնք ցուցաբերում են «գիտակցված որոշում»՝ այսինքն՝ արդեն ընտրել են իրենց դավանանքն ու մկրտվել ջրով: Կրոնական այս կազմակերպության համար կարևորը ավետարանական գաղափարախոսության տարածումն է:

Շիրակի մարզի Ավետարանական մկրտական եկեղեցու ղեկավար Ռուբեն Փահլևանյանը, ում դիմում են վերապատվելի հովիվ անվամբ, ասում է, թե իրենց եկեղեցին ամենևին էլ մեկուսացված չէ հասարակությունից: Նրանց հետաքրքրում են այն բոլոր խնդիրները, որոնք առնչվում են նաև համայնքի անդամներին՝ սկսած խաղաղությունից ու պատերազմից մինչև աղբահանություն, գազի գների թանկացում: Նրանք ակտիվորեն մասնակցում են մարզի հասարակական կյանքին, մասնակցում հասարակական կազմակերպությունների նախաձեռնած միջոցառումներին, հանդես գալիս քաղաքացիական ակտիվ դիրքորոշմամբ: Եվ եթե անհրաժեշտ լինի որևէ դիրքորոշում ցուցաբերել հասարակական հարցի վերաբերյալ, Ռուբեն Փահլևանյանը պատրաստ է հորդորել, համոզել իր համայնքի անդամներին մասնակցություն ունենալու: Բայց բացահայտ քարոզչություն անել համայնքի ղեկավարը չի անում: Առավել ևս, եթե այն վերաբերում է քաղաքական գործընթացներին:

«Հազիվ հանդուրժում են մեր գոյությունը»,-ասում է վերապատվելի հովիվն ու մեկնաբանում, թե քաղաքական որևէ գործընթացի բացահայտ մասնակցելու դեպքում համայնքը

Ռուբեն Փահլևանյան, Հայ Ավետարանական Մկրտական եկեղեցու նախագահ



հնարավոր է ենթարկվի ազդեցությունների ու ճնշումների: Իսկ դա փոքրամասնության համար ամենևին էլ դրական ավարտ չի ունենա: «Այդքան միամիտ չեմ, որ կարծեմ, թե մենք ունենք կայացած քաղաքացիական հասարակություն: Մենք ապրում ենք ռազմաֆեոդալական հասարակությունում և հարվածի տակ դնել այսօր գործող եկեղեցիներին, մեր մտավախությունն է»,-ասում է Ռուբեն Փահլևանյանը: Կրոնական այս կազմակերպության և ոչ միայն իրենց, մտահոգության առարկան վերջերս դարձավ ՀՀ Սահմանադրության փոփոխությունները: Դրանով առավել ամրացվեց Հայ առաքելական եկեղեցու հիմքերը: ՀՀ Սահմանադրությունը ճանաչում է Հայ առաքելական եկեղեցու՝ որպես ազգային եկեղեցու բացառիկ առաքելությունը հայ ժողովրդի հոգևոր կյանքում, նրա ազգային մշակույթի զարգացման և ազգային ինքնության պահպանման գործում: Ազգային անվտանգության հայեցակարգում ևս ամրագրվում է Հայ առաքելական եկեղեցու՝ ազգային անվտանգության մեջ կարևոր դեր ունենալու փաստը: Չնայած կրոնական մի քանի կազմակերպություններ սահմանադրական փոփոխություններից առաջ հավաքվել են ու փորձել քննարկել իրենց առնչվող հարցերը, այդուհանդերձ որոշել են չեզոք մնալ: Ռուբեն Փահլևանյանն այն կարծիքին է, որ կա հստակ քաղաքականություն և գնալ դրա դեմ, նշանակում է վտանգի տակ դնել մի ողջ կրոնական կազմակերպություն: Ավետարանական մկրտական եկեղեցու առաջնորդը սպասում է հասարակական քննարկումներին, որոնց հույս ունի, որ կհրավիրեն նաև իրենց՝ քննարկելու ազգային անվտանգության հայեցակարգը: Մյուս կողմից էլ թերահավատ է, որովհետև կրոնական կազմակերպությունների մասին օրենսդրությունը մշակելիս ու քննարկելիս իրենց չեն կանչում, «բավարարվում են մի քանի կղերներով ու հեռուստատեսային կարճատև հաղորդումներով»: Չնայած այլ կրոնական կազմակերպությունների հետ ձևավորված են նորմալ հարաբերություններ, այդուհանդերձ համատեղ որևէ ձեռնարկումներ չունեն: Բավարարվում են հանդիպումներով, որոնց ընթացքում փորձում են դավանաբանական տարբերություններին չանդրադառնալ: Հայ առաքելական եկեղեցու հետ հարաբերություններ որպես այդպիսին չունեն: Դրանք սահմանափակվում են առաքելական եկեղեցու կողմից տարբեր ճնշումներով ու պախարակումներով: Վերջերս, Շիրակի թեմի առաջնորդ Միքայել եպիսկոպոս Աջապահյանը ուղղակի արգելել է Գյումրիի տեղական հեռուստատեսություններին եթեր տրամադրել մյուս կրոնական կազմակերպություններին: Մինչ այդ, Ռուբեն Փահլևանյանն ակտիվ մասնակցություն է ցուցաբերել հեռուստատեսային բազմապիսի հաղորդումների, այդ թվում՝ նաև ոչ կրոնական թեմաներով: Առաքելական եկեղեցու վերաբերմունքը արտահայտվել է նաև այլ ոլորտներում ևս: Արթիկի շրջանի Նահապետավան գյուղի քահանան արգելել է դպրոցի տնօրենին տարածք հատկացնել Ավետարանական մկրտական եկեղեցուն կիրակնօրյա դասեր անցկացնելու համար: Կրոնական կազմակերպությունների առջև ծառացած խնդիրները, որոնք խոչընդոտում են նրանց ինտեգրմանը հասարակությունում որպես նույն այդ հասարակության բաղկացուցիչ մաս, լուծելու ուղին Ռուբեն Փահլևանյանը համարում է շփումը հասարակական կազմակերպությունե-

րի, մարդու իրավունքների պաշտպանության ինստիտուտների հետ: Եկեղեցին այսօր աշխատում է փոխել հասարակության կարծիքը իրենց գործունեության, նպատակի նկատմամբ: Նրանք զբաղվում են ոչ միայն կրոնական, այլև սոցիալական խնդիրների լուծմամբ: Եվ բնավ էլ պարտադիր չէ, որ մարդը համարվի նրանց եկեղեցու անդամ, որ ստանա որևէ աջակցություն:

Շիրակի մարզից մոտ 800 երեխաներ ընդգրկված են եկեղեցու տարբեր խմբակների գործունեությունում: Նրանք եկեղեցու անդամներ չեն: Ինչպես Ռուբեն Փահլևանյանն է ասում, քրիստոնեական դաստիարակության համար են գործում այդ խմբակները, ու ծնողների իմացությամբ են երեխաները գալիս և պարտադիր չէ, որ ծնողները ևս լինեն Ավետարանական մկրտական եկեղեցու անդամ: «Բարեգործությունը այս եկեղեցու քաղաքականությունն է, ինչի մասին ասում է նաև Ավետարանը»,-նշում է եկեղեցու վերապատվելի հովիվը:

Եկեղեցին Գյումրիում երկու բարեգործական ճաշարաններ ունի, որոնք սնում են 150 տարեցների և 100 երեխաների: Սոցիալապես անապահովների ցուցակը ճշտելու համար Ավետարանական մկրտական եկեղեցու անդամները համագործակցել են պետական, տեղական իշխանությունների, հասարակական կազմակերպությունների հետ:

Ավետարանական եկեղեցին Գյումրիում 160-170 տարիների պատմություն ունի: «Թյուր կարծիք կա, որ սա հետերկրաշարժյան նորամուծություններից մեկն է: Բայց իրականում պատմականորեն փաստագրված, վավերացված տվյալներ կան, որով 1914թ-ին Ալեքսանդրապոլի ավետարանականները դիմում գրեցին Կովկասում ռուսական ցարի տեղապահ Վորոնցով Դաշկովին՝ պետական գրանցում ստանալու խնդրանքով: Այդ պատմական իրադարձությունները կանխվեցին, ու ցարական իշխանությունները չգրանցեցին: «Հետերկրաշարժյան տարիները, որոնք թե՛ քաղաքական, թե՛ տնտեսական խառնաշփոթ բերեցին, նպաստեցին նաև կրոնական կազմակերպությունների վերելքին: Դրանց նպաստեց նաև արտասահմանի հավատակից եկեղեցիների հետ կապերի աշխուժացումը»: Այսպես Շիրակի մարզում ևս սկսեց գործել այս եկեղեցին, որն ընդգրկված է Հայաստանի մկրտական եկեղեցիների խորհրդի կազմում: Դրանում ընդգրկված են Հայաստանում գործող բոլոր մկրտական եկեղեցիները, որոնց թիվը հասնում է 65-ի:

ՀՔԱ Վանաձորի գրասենյակի կողմից իրականացվող կրոնական կազմակերպությունների ուսումնասիրման ծրագրի նպատակն է Հայաստանում ձևավորել բազմակարծիք հասարակություն, որտեղ իրապես գոյություն կունենա կրոնի ազատություն: Ծրագրի իրականացման ընթացքում կբացահայտվեն Հայաստանի մարզերում գործող կրոնական կազմակերպությունների ու փոքրամասնությունների խնդիրները, դրանք կներկայացվեն հանրությանը: ՀՔԱ Վանաձորի գրասենյակի կողմից վերլուծության կենթարկվի «Կրոնական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքը և գրքույկի տեսքով կներկայացվի պետական կառույցների, կրոնական կազմակերպությունների, ՀԿ-ների:

Նաիրա Բուլղադարյան
«Քաղաքացիական նախաձեռնություն»,
01.05.06, N 8

ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԵՒՈՒՅԹ ԿՐՈՆԱԿԱՆ ԴԱՇՏՈՒՄ

Հիսուս Քրիստոսի պատվիրանները տարածելու համար 16 տարի առաջ Հայաստանում ստեղծվեց «Կյանքի խոսք» եկեղեցին: Ըստ կազմակերպության ներկայացուցիչ Արթուր Տոնոյանի, այն Հայաստանի կրոնական կազմակերպությունների դաշտում հայկական երևույթ է և գոյություն ունի միայն Հայաստանում: Եկեղեցին հասարակության շրջանում հայտնի է խարիզմատներ անվամբ: Եկեղեցու հովիվի ուսումնական գծով օգնական Արթուր Տոնոյանն ասում է, որ իրենք իրենց ամենևին էլ խարիզմատներ չեն համարում: «Խարիզմատիկ» նշանակում է Սուրբ հոգու պարգևներ և ժամանակին համարվել է կրոնական շարժումներից մեկը: Ներկայումս այս եկեղեցին գրանցված կրոնական կազմակերպություն է, որը ինչպես մկրտական ու հոգեգալստական, այնպես էլ խարիզմատիկ շարժման տարրեր է պարունակում: 10.000 հավատակից ունեցող այս եկեղեցու առաքելությունը Ավետարանի տարածումն է: Սակայն դա չի նշանակում, որ փողոցում անծանոթներին կարելի է կանգնեցնել ու խոսել Աստվածաշնչից: «Փողոցում քարոզելը էֆեկտ չունի: Ինձ կդնեն ցանցառի տեղ, ու ես կգցեմ իմ եկեղեցու անունը»,- մեկնաբանում է Արթուր Տոնոյանը ու հավատացնում, որ իրենք որևէ հալածանքից չեն վախենում, միևնույն ժամանակ հալածանք չեն էլ փնտրում: Զբաղվում են աստվածաշնչյան պատվիրանների տարածմամբ, որի շրջանակներում տնային այցելություններ անում, եկեղեցուն համանուն թերթ տպագրում, ուսուցման դասընթացներ կազմակերպում 18 տարեկանը լրացած 200 անձանց հետ: «Առանց ապաշխարելու ուսուցում չկա», - «Կյանքի խոսք» եկեղեցու սկզբունքներն է նկարագրում Արթուր Տոնոյանը: Եթե քաղաքացին մտադրություն ունի ընդգրկվել եկեղեցու շարքերը, ապա առաջին հերթին պետք է ապաշխարի: Դա իր հերթին ենթադրում է Աստվածաշնչի ուսումնասիրում: Իսկ եթե ուսումնասիրում ես, ապա արդեն ապաշխարում ես ու կարող ես համարվել եկեղեցու անդամ: «Կյանքի խոսք» եկեղեցու անդամներն իրենց համարում են և՛ երկնային, և՛ երկրային քաղաքացի: Նրանց երեխաները սովորաբար ապաշխարում են այն տարիքում, երբ գիտակցում են Աստծո խոսքը՝ անկախ չափահաս լինելու հանգամանքից: Եկեղեցու անդամները տարբեր կրթության ու մասնագիտության մարդիկ են ու խնդիրը ոչ թե աշխատանքի ոլորտի, այլ աստվածաշնչյան պատվիրաններին համապատասխան վարք ցուցաբերելու մեջ է: Բայց եթե աշխատանքի վայրում հանդիպում են անօրինականությունների ու աստվածաշնչյան պատվիրանները հակասող դեպքերի, բացատրում են, թե ինչ կարգի մեղք է այն իրենից ներկայացնում, իսկ արարքի կատարման ընտրությունը թողնում դիմացինին: Կարող են մասնակցել ընտրություններին, դատի տալ իշխանություններին, պաշտպանել իրենց իրավունքները ցանկացած ատյանում: Միևնույն ժամանակ պարտավոր են օրինել

կառավարությանը, որովհետև այդպես Հիսուսն է պատվիրել: Ամենևին դեմ չեն բանակում ծառայելուն ու զենք վերցնելուն: Հակառակը դավանողներին էլ չեն քննադատում:

Այլ կրոնական կազմակերպությունների հետ լավ հարաբերություններ ունեն, այդ թվում նաև՝ Հայ առաքելական եկեղեցու հետ: Դեմ չեն «Հայ առաքելական եկեղեցու պատմություն» առարկան հայկական դպրոցներում դասավանդելուց: Անհրաժեշտության դեպքում պատրաստ են բոլոր կրոնական կազմակերպությունների հետ հանդիպել, եթե միայն նրանք ցանկություն դրսևորեն: Այլ կրոնական կազմակերպությունների ներկայացուցիչներին համարում են իրենց քույրներն ու եղբայրները: Կարևորը Հիսուսի պատվիրանները տարածելն է:

Նաիրա Բուլղադարյան
«Քաղաքացիական նախաձեռնություն»
15.05.06, N9

ԿՐՈՆԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԽՈՉԸՆԴՈՏԸ ԱՋԱՏ ՄՏԱԾԵԼՈՒ ԿԱՐՈՂՈՒԹՅԱՆ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆ Է

Քույր Արուս
Տիրամայր Հայաստանի Պողոսյան կրթահամալիրի ղեկավար

Գյումրի քաղաքում գործող Տիրամայր Հայաստանի Պողոսյան կրթահամալիրում քրիստոնեական դաստիարակություն են ստանում 50 երեխաներ: Կրթահամալիրը պատկանում է կաթոլիկ եկեղեցուն, որը քիչ է տարբերվում բողոքական դավանաբանությունից և ավելի մոտ է անգլիկան եկեղեցուն: Կրթահամալիրի ղեկավարը, որին բոլորը դիմում են քույր Արուսյակ անվամբ, չի կարող հստակ ասել, թե սաներից որքանն է ներկայացնում Հայ Առաքելական, որքանը՝ կաթոլիկ եկեղեցին: Այստեղ երեխաներին դաստիարակում են առաքելական կրոնի սկզբունքներով, ծանոթացնում սեփական կրոնին, որպեսզի տգետ չմեծանան ու կարողա-

նան տարբերակել դիմացինի առաջարկած կրոնն ու պահպանել դավանանքը: Քույր Արուսյակը կարևորում է երիտասարդների դաստիարակությունը ազատամտության ու ազատ մտածելու կարողության ձևավորման համար: «Որոշ արժեքներ փոխելու, մտայնություն փոխելու համար շատ ժամանակ է պետք»,-ասում է նա ու մատնանշում խորհրդային տարիներից դեռևս մնացած երևույթները:

«70 տարի մի ազգ ազատ չի մտածել: Ինչու՞ պիտի հիմա ազատ մտածի: Մի զանգված կա, որը այսպես պիտի մեռնի»,-կարծում է կաթոլիկ արժեքներ դավանող քույր Արուսյակն ու օրինակ բերում անգամ ներկայիս իշխանության ներկայացուցիչներին:

«Նույնիսկ մեր այսօրվա ղեկավարները ազատ չեն մտածում: Եվրոպայում դաստիարակված չեն, որ ազատամիտ, ազատ մտածելու կարողություն ունենան և ճնշված չլինեն, որ այդպես են մտածում»:

Սակայն դա չի նշանակում, որ այդ ուղղությամբ աշխատելը փոփոխությունների չի բերի: Հայաստանի այն գյուղերում, որի բնակչությունը դավանում է կաթոլիկ եկեղեցուն, կրթահամալիրի ներկայացուցիչները քրիստոնեություն են դասավանդում, ծանոթացնում նրա էությանն ու սկզբունքներին: Հայ առաքելական եկեղեցուն պատկանող բնակավայրերում նման աշխատանք չի տարվում: Առաքելական եկեղեցին հավանություն չի տալիս նման առաքելությանը, մյուս կողմից էլ պետությունը միայն առաքելականին է թույլատրել մուտք գործել հանրակրթական հաստատություններ:

«Մինչդեռ որպես գիտություն բոլոր եկեղեցիների պատմության մասին արժե ծանոթացնել մատաղ սերնդին»,-կարծում է Քույր Արուսյակն ու հաստատում, որ իրենք խնդիր չունեն ո՛չ պետության, ո՛չ էլ առաքելական եկեղեցու հետ: Ի վերջո, սա այն երկիրն է, որտեղ առաքելական եկեղեցին է միշտ եղել, և այն ուժեղ է պետության հետ: Բայց վերջին տարիներին, ինչպես նկատում է Քույր Արուսյակը, հայ առաքելական եկեղեցու երիտասարդ ներկայացուցիչների շրջանում ազատամտության դրսևորումներ են ի հայտ գալիս: «Գուցե այն պատճառով, որ ուժեղ են զգում իրենց»,- ասում է նա: Ներկայիս իրավիճակը փոխելու համար ժամանակ է պետք: Նա կարծում է, որ կարիքն է մարդկանց ստիպում գնալ աղանդների հետևից: «Մի օր, երբ կարիք չունենան, չեն գնա: Երբ վիճակը բարելավվի, ժողովուրդը կկողմնորոշվի»: Կան բաներ, որ տարիներ կտևեն, մինչև արմատներ գցեն: Բարեփոխումների կարևոր օղակը քույր Արուսյակը համարում է երիտասարդությանը, որի հետ տևական աշխատանք է հարկավոր:

Նաիրա Բուլղադարյան

«Քաղաքացիական նախաձեռնություն»
15.05.06, N9

ՓՐԿՈՒԹՅՈՒՆԸ ՔԱՐՈԶՉՈՒԹՅԱՆ ՄԵՋ Է

Աշխարհիկ այս համակարգի փլուզումից հետո կփրկվեն նրանք, ովքեր հավատարմությամբ Եհովայի վկաներ կլինեն մինչև իրենց կյանքի ավարտը: «Եհովայի վկաներ» կրոնական կազմակերպությունը հավատում է, որ գործող համակարգը շուտով փլուզվելու է: Դրանից փրկվելու միջոցը ոչ թե մի կտոր հաց ունենալն է, այլ՝ հոգևոր սննդով ապահովված լինելն ու Աստծուն երկրպագելը: Վանաձորում այս հույսով են ապրում 160-170 մարդիկ: Նրանց առաջնային նպատակը քարոզչությունն է, ինչը նշանակում է Աստծո առաքելությունների, թագավորության մասին մարդկանց տեղեկացնելը՝ «մկրտելով նրանց հոր և որդու և սուրբ հոգու անունով»: «Գլխավոր բարիքը, որ քրիստոնյան պետք է և պարտավոր է անել, հոգևոր օգնությունն է»,- ասում է կազմակերպության Վանաձորի ժողովներից մեկի երեց Գևորգ Անանիկյանը: Սրանով է բացատրվում նաև այն հանգամանքը, որ «Եհովայի վկաները» բարեգործությամբ չեն զբաղվում: «Դրա համար ոչ ժամանակ, ոչ էլ ֆինանսներ կան»: Գևորգ Անանիկյանը միևնույն ժամանակ չի բացառում իրենց հավատակիցների կողմից սովածին կերակրելու, կարիքավորին աջակցելու գործելակերպը: Բայց և առաջնային խնդիրը քարոզչությունն է ու այն չդադարեցնելը: Աստծո պատվիրանները մարդկանց հասցնելու այս կազմակերպության միակ ճանապարհը՝ քարոզչությունը տարբերվում է այլ կրոնական կազմակերպությունների որդեգրած գործելակերպից: Եհովայի վկաներն են, որ այցելում են միանգամայն անծանոթ մարդկանց, թակում նրանց դռներն ու որևէ արգելքի չհանդիպելով՝ անցնում իրենց առաքելությանը: «Մեկը չի ընդունում, մյուսը փակում է դուռը: Մեկն էլ կարող է քար վերցնել ու հետևներիցս ընկնել»,-քարոզչության դժվարություններն է ներկայացնում Գևորգը՝ ասելով, թե Հիսուս Քրիստոսին ևս ենթարկել են ճնշումների ու եղել են նրան չհավատացող մարդիկ ևս: Կազմակերպությունը ունի ժողովի հատուկ ժամեր, որտեղ ներկայացվում է Աստվածաշնչի մի որևէ հատված, քննարկվում վկաների ու երեցների կողմից: Նա ասում է, որ իրենց ժողովներում ոչ թե ժողովրդավարական կարգեր են հաստատված, այլ աստվածապետական: Աստվածապետությունը ղեկավարվում է Աստծո կողմից և ունի իր թագավորը՝ Հիսուս Քրիստոս: Ժողովների կազմակերպման համար պատասխանատու անձը երեցն է, որն ամենևին էլ գլխավոր չի նշանակում: Երեց նշանակում է ծառա բոլորին: Երեցներն ընդգրկված են խորհրդի մեջ, որտեղից էլ ընտրվում է նախագահող վերակացուն՝ կազ-

Գևորգ Անանիկյան
Երեց, եհովայի վկա

մակերպության նույն նախագահը:

Ամեն ոք, ով ցանկանում է ընդգրկվել «Եհովայի վկաներ» կազմակերպության շարքերը, նախևառաջ պետք է հասկանա, որ Աստվածաշունչը իսկապես ճշմարտություն է: Աստվածաշնչի ուսումնասիրությունից հետո, երբ անձը գիտակցում է Աստծո ճշմարիտ լինելը ու հասկանում, որ իր կյանքը հարկավոր է փոխել, ընդգրկվում է կազմակերպության շարքերն ու կոչվում Եհովայի վկա: Իսկ եթե ամաչում է ներկայանալ որպես Եհովայի վկա, ուրեմն նա չի կարող համարվել այդպիսին: «Քրիստոսն ասել է՝ ով ինձ համար կամաչի, ես էլ նրա համար կամաչեմ»: Գևորգ Անանիկյանն ասում է, որ Եհովայի վկան պիտի համապատասխանի այն պահանջներին, որոնք նշված են Աստվածաշնչում: Բայց եթե վկան թերացավ դրանցում ու վատ արարք կատարեց, ապա նրան սպառնում է կազմակերպությունից հեռացումը: Եթե, իհարկե, մտադիր չէ ուղղվել: Երեցները փորձում են հանդիպել ու օգնել նրան: Եթե օգնությունը չի փրկում, ապա հայտարարվում է նրա՝ Եհովայի վկա չլինելու մասին:

Աստծո խոսքը քարոզող այս կազմակերպության ներկայացուցիչները տարբեր կրթության, աշխատանքի տեր մարդիկ են: Բացառություն են կազմում միայն քաղաքական գործիչները, որոնք միաժամանակ չեն կարող քաղաքականության մեջ լինել ու տարածել Աստծո խոսքը: «Աստվածաշունչն ասում է, որ Հիսուս Քրիստոսի հետևորդները աշխարհից չպիտի լինեն: Եհովայի վկաները քաղաքական գործերի նկատմամբ լրիվ չեզոք պիտի լինեն»,-ասում է Գևորգ Անանիկյանը: Դա է պատճառը, որ այս կազմակերպության անդամները չեն մասնակցում տեղական ու հանրապետական ընտրությունների, չեն կիսում այս կամ այն քաղաքական գործչի տեսակետը: Նման չեզոքությունը ամենևին չի ենթադրում կառավարության որոշումներին չենթարկվել կամ էլ անտեսել օրենքները: «Աստվածաշունչն ասում է, որ ամեն անձ թող հնազանդե իր իշխանություններին»,-նշում է ժողովի երեցն ու ավելացնում, թե դա չի նշանակում, որ այդ իշխանություններին Աստված է կարգել: Եհովան պարզապես թույլ է տալիս մարդկային կառավարությունների գոյությունը, որ բացարձակ քաոս չտիրի երկրի վրա: Կրոնական գաղափարախոսությունն ու դավանանքը չեն խանգարում Եհովայի վկաներին ակտիվ դերակատարում ունենալ հասարակական կյանքում: Նրանք ևս իրենց համարում են հասարակության բաղկացուցիչ մասը, որը պատրաստ է մասնակցել համայնքի գործունեությանը, եթե միայն այն քաղաքական բնույթ չունի: Հասարակության լիարժեք անդամ դառնալու խնդիրներին «Եհովայի վկաները» համբերությամբ են դիմակայում: Անհրաժեշտության դեպքում պատրաստ են իրենց իրավունքները պաշտպանել օրենքի սահմաններում: Քիչ չեն դեպքերը, երբ այս կազմակերպությունը հայտնվել է դատական ատյաններում՝ հավատակիցների շահերը պաշտպանելու ու արդարությունը վերականգնելու նպատակով: Եթե մի քանի տարի առաջ երիտասարդ Եհովայի վկաները ստիպված էին բանակում չծառայելու դիմաց ազատազրկվել, այժմ ազատությունը զոհաբերում են հանուն իրական այլընտրանքային ծառայության: «Այլընտրանքային ծառայության մասին» ՀՀ օրենքը իրականում հնարավորություն չի տալիս նրանց անցնել զին-

վորականից տարբերվող ծառայություն, որի պատճառով նրանք շարունակվում են հայտնվել ազատազրկման վայրերում:

«Արդարությունը գնալով ոչ թե պիտի ավելանա, այլ՝ պակասի,-ասում է Գևորգ Անանիկյանը,-Աստվածաշունչն ասում է, որ այս երկրի աստվածը սատանան է»: Սատանան ամեն ինչ անում է, որ անարդարությունը ավելանա: Եհովայի վկաները համոզված են, որ գոյություն ունեցող համակարգը կփրկի միայն Աստծո թագավորությունը: «Այսօր արդեն երկրի վրա Եհովան փոքր օազիսներ է ստեղծել, որտեղ նույնիսկ սատանայի աշխարհում վատը լավ է դարձել հենց Եհովայի վկաների շրջանում»,-համոզված է Եհովայի վկա Գևորգը: Նրանք հավատում են, որ Աստված այդ օազիսները պետք է թողնի ու մնացած ամեն ինչ վերացնի:

Նաիրա Բուլղադարյան
«Քաղաքացիական նախաձեռնություն»
15.05.06, N9

ԼՌՈՒԹՅՈՒՆ ՀԱՆՈՒՆ ՊԵՏԱԿԱՆ ՇԱՀԵՐԻ

«Հայաստանում միջեկեղեցական կյանք գոյություն չունի, որովհետև Հայաստանում կրոնական փոքրամասնություններ չկան»: Հայ առաքելական եկեղեցու Շիրակի թեմի առաջնորդ Միքայել եպիսկոպոս Ա-

Միքայել եպիսկոպոս Աջապահյան Շիրակի թեմի առաջնորդ

ջապահյանը իր այս տեսակետը բացատրում է այն հանգամանքով, որ Հայաստանում չկա, օրինակ, վրաց եկեղեցի, լյութերական կամ էլ կաթոլիկ եկեղեցի: Հայ առաքելական եկեղեցին, ըստ եպիսկոպոսի, քույր եկեղեցիներ չունի, որովհետև գոյություն ունեցողների մի մասը հենց այս եկեղեցուց անջատված մասնիկներ են ու համարվում են դուստր եկեղեցիներ: Դրանցից եպիսկոպոսը մատնանշում է ավետարանական, կաթողիկե եկեղեցիները:

Ինչ վերաբերում է, այսպես կոչված, աղանդներին, Շիրակի թեմի առաջնորդը դրանք համարում է դրսից ներմուծվածներ, որոնք իրենց ծագումնաբանությամբ ամենևին հայկական չեն»:

«Ասում են, թե կիթառով Աստծուն փառաբանելն ավելի հաճելի է»,-տարակուսում է եպիսկոպոսը,-հաճելի է, մուսուլման դարձիր»: Նա կարծում է, որ կրոնը փրկության խնդիր է, ոչ թե հաճույքի:

Եվ երբ եկեղեցին փորձում է սովորեցնել, թե որն է ճիշտ, որը՝ սխալ, բացատրել կրոնի ու

եկեղեցու դերը, մեղադրվում է կրոնական այլ ուղղություններին հալածելու մեջ: Առավել ևս, երբ փորձում է հետ բերել իր անդամին կրոնական այլ ուղղությունից: Ըստ եպիսկոպոսի, Հայաստանի բնակչության 98 տոկոսը Հայ առաքելական եկեղեցու անդամներ են: Նրանց մի մասը պարզապես «խլված» է այլ ուղղությունների կողմից:

Այս և Հայ առաքելական եկեղեցու քույր եկեղեցիների բացակայությունն է պատճառը, որ հայկական ավանդական եկեղեցին կրոնական ուղղությունների հետ չի կարող միջեկեղեցական հարաբերություններ ձևավորել: Առավել ևս, երբ այդ կազմակերպությունների քարոզն ուղղված է ոչ թե Ավետարանի տարածմանը, այլ՝ Հայ առաքելական եկեղեցու դեմ:

«Ձեր եկեղեցու մատաղը սխալ է, խաչակնքելը, մոմ վառելը սխալ է, քահանան սխալ է» ,-առաքելական եկեղեցու գործունեությանն ուղղված քննադատության վրա զարմանում է Շիրակի թեմի առաջնորդն ու իր հերթին մեկնաբանում կրոնական ուղղությունների գործելակերպը:

«Ավետարանը բացում են, մի տող ցույց տալիս ու կենտրոնանում դրա շուրջ»: Բայց իրենք Ավետարանը մեկնաբանում են ընդհանուր ենթատեքստում: Ի վերջո, Հայ առաքելական եկեղեցին արդեն շուրջ 2000 տարի կարդում ու քարոզում է Ավետարանը: Ու, ինչպես նրա ներկայացուցիչն է հավաստում, ոչ մի անգամ չի տրվել ճնշումների: Սկսած 451 թ-ից մինչև հիմա, երբ բյուզանդական, ռուսական, վրացական, հռոմեական կայսրություններին դիմակայել է ու պահպանել իր դավանանք: Հիմա էլ կռիվ է տալիս Եվրոպայի ու ԱՄՆ-ի հետ, պայքարում արևմտյան նորամուծությունների դեմ:

«Ինչ իմաստություն է ունեցել այս եկեղեցին, որ կարողացել է 1600 տարի դիմանալ Եվրամիության ճնշումներին առանց պետության»,-հարցնում է Շիրակի թեմի առաջնորդը, որը ներկայիս Եվրամիությունը զուգահեռում է նախկին հռոմեական, բյուզանդական կայսրություններին ու նկատում, որ դրա անունն է փոխվել, իսկ էությունը մնացել է նույնը: Իսկ հայկական պետությունը այսօր չի կարողանում դիմագրավել այդ ամենին, և այստեղ եպիսկոպոսը մատնանշում է որոշ մարդկանց անձնական շահերը: Հաճախ պետական այրերը փորձ են անում համոզել եկեղեցուն, որ «պետական շահը այսպես է պահանջում»: Եվ եկեղեցին, ըստ Շիրակի թեմի առաջնորդի, բարձր դասելով պետական շահը՝ լռում է, աչք փակում տեղի ունեցող անօրինականությունների առջև, «փոխհամաձայնության գնում իր խղճի հետ հանուն ազգային շահերի ու փոխարենը, ինչպես միշտ, հայտնվում տուժածի կարգավիճակում»: Ցավալին Հայ առաքելական եկեղեցին համարում է այն, որ այսօր չունի մշակված քաղաքականություն պետության, հասարակական երևույթների նկատմամբ: Պատճառներից մեկը Միքայել եպիսկոպոս Աջապահյանը նշում է եկեղեցու անպատրաստ լինելը: Դեռևս Խորհրդային տարիներին Հայ առաքելական եկեղեցու հնարավորությունները թույլ չէին տալիս իրական դերակատարում ունենալ ազգի կրոնական դաստիարակության ու, այսպես կոչված, հոտի պահպանման գործում: Եվ միայն վերջին 15 տարիներին է եկեղեցին հնարավորություն ունեցել ընդլայնել իր գործունեությունն ու լիազորությունները: Մյուս կող-

մից էլ հենց նույն պետական շահը գերադասելով առաքելական եկեղեցին հաճախ է լռում է: Սակայն «մի օր եկեղեցին կարող է զանազանություն դնել պետության ու հայրենիքի միջև»,-ասում է Շիրակի թեմի առաջնորդն ու պարզաբանում,- որովհետև եթե պետությունը որդեգրել է ժողովրդավարական արժեքների տարածումը, բայց նույն ժողովրդավարությունը չի մտնում պետական շահի մեջ, ուրեմն պետք է հրապարակավ ասել, որ դա իդեալական տարբերակ չէ, «ասել ժողովրդին, որ իր կարծիքը հակասում է պետական շահին, որ ժողովրդավարությունը հաճախ պետք է հակասի պետական շահին»: Հայ առաքելական եկեղեցու ներկայացուցիչը գտնում է, որ Հայաստանում պետական համակարգն ու եկեղեցին պետք է միասնական ու ներդաշնակ լինեն: Այդ երկու համակարգերը պատկանում են հայ ժողովրդին ու անջատել Հայ առաքելական եկեղեցին պետությունից Միքայել եպիսկոպոս Աջապահյանը աբսուրդ է անվանում: Նա կարծում է, որ, այն, ինչ ճիշտ է եվրոպական երկրներում, ամենևին չի նշանակում, որ կիրառելի է Հայաստանում: «Ինչի՞ են բաժանում հայ եկեղեցին հայոց պետությունից»,- հարցնում է եպիսկոպոսը,- մենք ապրել ենք թագավոր-կաթողիկոս ներդաշնակ պայմաններում և այդպես պետք է լինի նաև այսօր»: Իսկ այսօր առաքելական եկեղեցու ներկայացուցիչները դժգոհում են պետության անտարբեր վերաբերմունքից: Թեկուզ բացասական լինի այն, թեկուզ բարձրաձայնվի այն մասին, որ Հայ առաքելական եկեղեցին խոչընդոտ է Եվրամիության ճանապարհին: Բայց չմատնվի անտարբերության: «Սահմանադրությամբ չգիտես, թե ով է Հայ առաքելական եկեղեցին այլերի հետ համեմատած»,- դժգոհում է Հայ առաքելական եկեղեցու Շիրակի թեմի առաջնորդը: Սա ևս առաքելական եկեղեցու անդամները համարում են զիջում հանուն ազգային շահերի, հանուն պետության:

Նաիրա Բուլղադարյան
«Քաղաքացիական նախաձեռնություն»
31.05.06, N10

ՆՈՐ ԱՌԱՔՅԱԼՆԵՐ ՀՆԵՐԻ ՓՈԽԱՐԵՆ

Ռաֆայել Մովսիսյանը, ով ներկայացնում է Նոր առաքելոց եկեղեցու Հայաստանի համայնքը, ժամանակին Աստծուն հավատացել է այլ կերպ ու այլ պատկերացումներով: Պարբերաբար Հայ առաքելական եկեղեցի է գնացել, մոմ վառել, մկրտվել այնպես, ինչպես առաքելական եկեղեցու հավատացյալները: Եվ միայն 90-ականներին ընդգրկվել է կրոնական այլ կազմակերպության շարքերն ու արդեն ստացել է եպիսկոպոսի կոչում:

«Մեր եկեղեցու դավանանքն այն է, որ սպասում ենք Հիսուսի գալուստին»,-ասում է եպիսկոպոսը: Հայաստանում 90-ականների սկզբին ձևավորված եկեղեցին համարվում է նոր առաքյալների ուղղություն, որը փոխարինելու է եկել հին առաքյալների դավանանքին: Ռաֆայել Մովսիսյանը պատմում է, թե ինչպես դեռ 90-ականներին իրենց առաքյալներից մեկը Ֆրանկֆուրտում հանդիպում է այսօրվա կաթողիկոսին, որն էլ խորհուրդ է տալիս Հայաստանում ևս ստեղծել այս ուղղությունը: Այս եկեղեցում համոզված են, որ մարդն ազատ է ծնվում, առանց հավատի ու ինքն է որոշում իր դավանանքը: Իսկ որ ամենահետաքրքրականն է, այստեղ պիտի բառը չեն ընդունում: Եկեղեցու եպիսկոպոսն ասում է, թե մարդ ազատ է ծնվում և սեփական որոշմամբ էլ ընդունում կամ մերժում է որևէ գաղափարախոսություն: Դա է պատճառը, որ Ավետարանը քարոզելիս այս կրոնական ուղղության ներկայացուցիչները հեռու են մնում անծանոթ մարդկանց այցելելուց ու իրենց տեսակետները պարտադրելուց: Նրանց համար «հավատքը քարոզից է ծնվում»: Իսկ քարոզել դեռ չի նշանակում Ավետարանը ձեռքին փողոցից փողոց գնալ: Հենց եկեղեցու պատերի ներսում անց է կացվում մատչելի, խոսակցական լեզվով քարոզ: Սրան հաջորդում է աղոթքը, ևս մատչելի լեզվով, հետո նշխարքի ընդունման արարողությունն է սկսվում, որն ավարտվում է կրկին աղոթքով: Ժամերգությունը տևում է ամենաշատը մեկ ժամ: Նոր առաքյալներն ընդունում են դժոխքի ու դրախտի գոյությունը, հավատում սուրբ երրորդությանը, ջրով մկրտվելուն ու բացառում կրոնը: Բացառում են նաև մարդու կողմից այս կամ այն հավատացյալին սրբացնելը:

Ռաֆայել Մովսիսյանը, Նոր առաքելոց եկեղեցի

«Դա Աստծո գործն է, իսկ մարդը իրավունք չունի խառնվելու Աստծո գործերին»,-բացատրում է եպիսկոպոսը: Չնայած այն հանգամանքին, որ չեն ընդունում Հայ Առաքելական եկեղեցու բացասական վերաբերմունքը այլ կրոնական ուղ-

ղությունների նկատմամբ, այդուհանդերձ ո՛չ քննադատում են, ո՛չ էլ քարկոծում: Առավել ևս, Հայ առաքելական եկեղեցու հետ խնդիրներ չունեն, չնայած մոմ վառելը, խաչակնքելն ու ծեսերը չեն համարում հավատքի հիմքը:

«Ապաշխարանքի հիման վրա մարդ կարող է ազատվել մեղքերից»,-իրենց եկեղեցու գաղափարախոսությունն է ներկայացնում Ռաֆայել Մովսիսյանը: Կտրականապես դեմ են կիրառելու աղանդ բառը, միևնույն ժամանակ գտնում են, որ աղանդը այն կազմակերպությունն է, որը ծեսեր ու եկեղեցի չունի: Այստեղ ասում են, թե Հայաստանը քրիստոնեական պետություն չի կարելի համարել, որովհետև եթե մարդ կնքված չէ, նա քրիստոնյա չէ, իսկ Հայաստանում կգտնվեն մարդիկ, ովքեր մկրտված չեն:

Նոր Առաքելոց եկեղեցու դավանանքը հավատքի մեջ է, որն ավելի շատ մոտ է բողոքականությանը: Նոր առաքյալների այս ուղղությունը որպես եկեղեցի ձևավորվել է դեռևս 18-րդ դարում: Հայաստանում այն տարածվել է արդեն տասը համայնքներում, որոնց անդամների թիվը գերազանցում է հազարը: Եթե որևէ մեկը ուզում է մուտք գործել եկեղեցի, նրան տալիս են կես տարի ժամանակ: Ինքն է ուսումնասիրում եկեղեցու դավանանք, միաժամանակ իրեն են ուսումնասիրում ու փորձում արդեն նոր առաքյալներ դարձած անդամներն ու այդպես կամ ընդգրկվում է կամ էլ՝ չէ: Տարբեր սոցիալական խմբերի ներկայացուցիչներից կազմված նոր առաքյալների 20-25 տոկոսը մտավորականներ են: Եկեղեցում գերակշռում են հատկապես երիտասարդները: Ընդհանուր առմամբ, այս կրոնական կազմակերպության ներկայացուցիչները խնդիրներ չեն ունենում հասարակական տարբեր ոլորտներում: Բանակ զորակոչվելիս իրենց երիտասարդները զենքի հետ միասին Աստվածաշունչ են պահում ու զինակիցներին ևս ծանոթացնում Աստծո խոսքին: Նրանց համար հպարտություն է կոչվել նոր առաքյալներ ու այդ մասին բարձրաձայնել տարբեր ատյաններում: Զբաղվում են բարեգործությամբ ոչ միայն իրենց հավատակիցների, այլև այլ դավանանքի տեր մարդկանց շրջանում: Ունեն մանկական տարբեր խմբակներ: Ուսուցանում են համակարգչային գիտելիքներ, սովորեցնում օտար լեզուներ, զբաղվում երեխաների դաստիարակությամբ, որի համար ունեն նաև մանկական սենյակ: Բայց այլ կրոնական կազմակերպությունների հետ համագործակցության փորձ չունեն: «Նախանձը շատ է կրոնական կազմակերպությունների միջև»,-ասում է եպիսկոպոս Ռաֆայելը: Միջեկեղեցական հարաբերություններում, ըստ նրա, գերակշռում են երկրային խնդիրները, որոնք հետագայում վեր են ածվում դավանաբանական խնդիրների:

«Աստված ինչ մեղք ունի, որ մեկը իր անունը Ալլահ է կնքել, մյուսը՝ Բուդդա և այլն»,-միջեկեղեցական հարաբերությունների խոչընդոտներն է խոստովանում Ռաֆայել Մովսիսյանը,-ձեռք բռնել չկա, ցավոք սրտի, յուրաքանչյուրը պնդում է, թե ինքն է ամենաճշմարիտը»:

Նաիրա Բուլղադարյան
«Քաղաքացիական նախաձեռնություն»
31.05.06, N10

ՄԵԶ ՀԻՇՈՒՄ ԵՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ

Յոթերորդ օրվա ադվենտիստների եկեղեցին անցյալ տարի տոնեց իր հարյուրամյակը: Հայաստանյան կրոնական կազմակերպությունների շարքում թերևս սա այն եկեղեցիներից մեկն է, որն ունի փոքրաքանակ համայնք ու հասարակությունում ինտեգրվելու խնդիրներ: 1500 մարդ է դավանում այս եկեղեցու գաղափարախոսությանը, որոնք ընդգրկված են եկեղեցու 19 ընկերություններում: Ադվենտիստների հիմնական խնդիրը կապված է շաբաթ օրը «սուրբ» պահելու հետ: Նրանց անդամներին աշխատանքի չեն ընդունում այն բանի համար, որ շաբաթ օրը չեն կարող աշխատել: Շաբաթը ադվենտիստները նվիրում են Աստծուն ու Ավետարանը քարոզելուն: Աշխատող անդամներն էլ հաճախ ստիպված են լինում լքել աշխատավայրն ու փնտրել այնպիսի աշխատանք, որտեղ կհամաձայնեն շաբաթ օրը հայտարարել հանգստյան օր: Եկեղեցու վարչական կենտրոնի նախագահ, հովիվ Վիգեն Խաչատրյանը պատմում է, թե շաբաթ օրվա խնդիրը պետական մակարդակով ի վիճակի չեն լուծել: «Ասում են փորձեք տեղի մակարդակով լուծել հարցը, այսինքն՝ հարցը թողնում են անձնական հարաբերությունների վրա»,-ասում է եկեղեցու հովիվը, ում կրոնական կազմակերպությունն այս խնդրին ավելի շատ առնչվում է դպրոցներում: Նա պատմում է, թե ինչպես Սյունիքի մարզի Ախլաթյան գյուղի դպրոցում աշխատանքից զրկվել են միանգամից 7 ադվենտիստ ուսուցիչներ: Միաժամանակ նշում է, թե դպրոցի պարագայում այս խնդիրն այնպես է լուծվում, որ թվում է, թե որևէ օրենք չի խախտվում: «Ստեղծում են այնպիսի պայմաններ, որ ուսուցիչն ինքը դուրս գա աշխատանքից»,-բացատրում է Վիգեն Խաչատրյանը: Եկեղեցու գործունեության խոչընդոտներից մեկն էլ տարբեր միջոցառումների կազմակերպման ժամանակ տարբեր գերատեսչությունների կողմից տարածքներ չստանալն է: Հիմնականում մերժում են ստանում տարբեր պատճառաբանություններով, որոնց հիմքում ընկած է այն վերաբերմունքը, թե «եթե չես պատկանում ավանդական եկեղեցուն, քեզ համար խոչընդոտներ կստեղծվեն»: Վիգեն Խաչատրյանը կարծում է, որ հասարակությունում թյուր մոտեցում կա կրոնական կազմակերպու-

Վիգեն Խաչատրյան,
Յոթերորդ օրվա ադվենտիստների եկեղեցու հովիվ

թյունների նկատմամբ և հարկավոր է այն փոփոխել հասարակական գործընթացներին ակտիվ մասնակցելու միջոցով: Մինչդեռ նրանց առջև ավելի շատ դռները փակվում են: Նույնիսկ սեփական նախաձեռնությունները, որոնք ամենևին էլ կրոնական բնույթ չեն ունենում, մերժվում են տեղական իշխանությունների կամ էլ կազմակերպությունների կողմից: Վիգեն Խաչատրյանը դա պայմանավորում է նրանով, որ տարօրինակ մտավախություն կա, թե մարդիկ կսկսեն հարգել իրենց: Հասարակության մեջ կարծրացած վերաբերմունքը փոփոխելու համար Յոթերորդ օրվա ադվենտիստների եկեղեցին մտադրություն ունի թերթ տպագրել, լրատվամիջոցների միջոցով իրազեկման աշխատանքներ ծավալել: Վիգեն Խաչատրյանը երկու գործոն է առանձնացնում, որոնք խանգարում են հասարակությունում ինտեգրման գործընթացին: Առաջինը կազմակերպության առջև ծառացած խնդիրներն են, երկրորդը՝ միշտ մերժվելու մտավախությունը:

Վիգեն Խաչատրյանը պատրաստ է ցանկացած օգտակար թեմայի շուրջ քննարկումներ ծավալել, համագործակցություն ձևավորել հասարակական կազմակերպությունների հետ, մասնակցել հասարակական կյանքի տարբեր ոլորտների զարգացմանը:

Մինչդեռ առայժմ սահմանափակվում են կրոնական այլ կազմակերպությունների հետ համագործակցության մի քանի դեպքերով, որոնք հիմնականում փոքրամասնությունների խնդիրներին են առնչվել: Կարևորում են բարեգործությունը, որն իրականացվում է երկու ասպեկտով: Մեկն առնչվում է սոցիալական ոլորտին, մյուսը՝ առողջապահական: Եկեղեցու «Այծեմնիկ» անունը կրող սոցիալական բաժինը կարիքավորներին նյութական օգնություն է բաժանում, այցելում մանկատներ, ծերանոցներ, իրականացնում սոցիալական տարբեր ծրագրեր: Առողջապահական բաժինը զբաղվում է ընտանիքի առողջապահական խնդիրներին, նպաստում ընտանիքների ամրության պահպանմանը:

Ինչպես կրոնական այլ կազմակերպությունները, ադվենտիստները ևս չեզոք են քաղաքականության նկատմամբ: Չնայած մասնակցում են քաղաքական ընտրություններին, բայց խուսափում են խառնվել քաղաքական գործընթացներին: «Հիսուս Քրիստոսը չի խառնվել քաղաքական գործընթացներին: Մենք դա չենք ողջունում»,-Ավետարանն է մեջբերում Վիգեն Խաչատրյանը, որը քաղաքականության



տեսակետից դրական է գնահատում ժողովրդավարությունը: Նա ասում է, որ իրենք, ճիշտ է, չեն մասնակցում քաղաքականությանը, բայց աջակցում են ժողովրդավարական գործընթացներին և պատրաստ են ընտրել այն թեկնածուին կամ կուսակցությանը, որոնք ևս համարվում են ժողովրդավարության ջատագով: Ադվենտիստներին սովորաբար հիշում են ընտրություններից ընտրություն, երբ այս կամ այն թեկնածուն այցելում է կազմակերպություն, խոստումներ տալիս, առաջարկություններ անում: Բայց քաղաքական հարցեր կազմակերպության ներսում չեն քննարկվում ու յուրաքանչյուր անդամ ազատ է իր ընտրության մեջ:

Յոթերորդ օրվա ադվենտիստների եկեղեցին Աստծո խոսքը տարածում է քարոզների, տնային այցելությունների միջոցով: Բայց, ինչպես կրոնական կազմակերպությունների մեծ մասը, անծանոթներին չի այցելում:

Նաիրա Բուլղադարյան
«Քաղաքացիական նախաձեռնություն». 15.06.06, N11

ԱՎԵՐ ԵԿԵՂԵՑՈՒ ԱՅԳԵՍՏԱՆՈՒՄ

Ներկան Հայ Առաքելական եկեղեցու Գուգարաց թեմի առաջնորդ Սեպուհ եպիսկոպոս Չուլջյանը համարում է փորձության շրջան: Շուրջ 2000-ամյա հայկական ավանդական կրոնը վտանգված է կրոնական տարբեր շարժումների «հարձակումից» ու եթե այսպես շարունակվի, ապա կսասանվի հայոց պետականությունը: Գուգարաց թեմի առաջնորդը զարմանում է, թե ինչպես պատահեց, որ հայ ժողովուրդը տարատեսակ աղանդների թիրախ դարձավ: Նա մարտահրավեր է որակում տարատեսակ կրոնական հոսանքների մուտքը Հայաստան, որ սպառնում է ազգային ամբողջականությանը:

«Մենք էլ ցնցվեցինք, թե ինչ կատարվեց: Սա ինչ հարձակում էր կրոնական դաշտի վրա»,-հարցնում է եպիսկոպոսը ու պատասխանում, թե խորհրդային կարգերի փլուզումից հետո եկեղեցին ևս կանգնեց դժվարությունների առջև: Սկսվեցին անորոշությունները ու տրոհումը, բաժանումը տարբեր կրոնական հոսանքների միջև: Ինչպես քաղաքական դաշտն է տրոհվել ռուսամետների, եվրոպամետների կամ էլ արևմտամետների միջև, այնպես էլ կրոնական դաշտն է բաժանվել ու չի զանազանվում աշխարհիկ հոսանքներից:

«Բայց ու՞մ է ձեռնտու այս վիճակը»,-հարցնում է Սեպուհ եպիսկոպոս Չուլջյանն ու մտահոգվում է, թե այս պայմաններում, երբ աշխարհն ընթանում է մի ուղղությամբ, առավել կարևորվում է փոքր ազգերի միասնական լինելը: Հակառակ դեպքում կրոնական ջլատումը կբերի պետականության գոյության դադարեցման: Եպիսկոպոսը ուրախանալու առիթ չի համարում կրոնական շարժումների ավելացումը: «Ինչի ուրախանալ, եթե կգա մի օր, երբ ամեն մի հայ մի կրոնական շարժում կներկայացնի»: «Որքան պիտի հանդուրժենք»,-ասում է եպիսկոպոս Չուլջյանն ու նկատում, որ ինչոր արտաքին կառույցների կողմի պարտադրված, հարկադրված, լուռ, խոնարհ հանդուրժենք և ուրիշ ոչի՞նչ: «Մինչև ե՞րբ հանդուրժենք»,-շարունակում է եպիսիկոպոսն ու նկատում, որ հային բնորոշ հանդուրժողությունն այսօր ծայրահեղության է տանում: Քրիստոնյաները, որոնց բնո-

որոշ են կայուն, բարոյական ու հաստատուն արժեքներ, այսօր վտանգված են: Սրանով հանդերձ նա չի հակառակվում իսլամական կամ բուդդայական արժեքներին, բայց օրինակ, իսլամական արժեքները իր ժողովրդի էթնիկ տեսակին են համարժեք: Տեր Սեպուհ եպիսկոպոս Չուլջյանը գտնում է, որ գնում է կրոնների համար սրբություն համարվող արժեքների նսեմացման գործընթաց: «Եվ երբեք իսլամը կամ մեկ այլ կրոն այնքան վնաս չեն հասցրել քիստոնեական արժեքներին, որքան եվրոպական չակերտավոր զարգացած պետությունները»: Նա օրինակ է բերում Մարիամ Աստվածածնի կամ Հիսուս Քրիստոսի պատկերներով տարբեր հագուստների առկայությունը կամ էլ Դա Վինչիի կոդի հետ կապված վերջին իրադարձությունները:

«Եթե Եվրոպան դա է ցանկանում, թող բացահայտ ասի»,- բողոքում է նա ու կրոնական շարժումների մուտքը Հայաստան համեմատում անտառը հատելու հետ: Դա նման է այն բանին, որ մտնես ուրիշի այգի:

«Հիմա ինչ կրոնական շարժում ասես ժողովրդի որ հատվածը մտնում, ավերում, դուրս է գալիս»: Եպիսկոպոսը յուրաքանչյուրի մուտքն անտառ ճիշտ չի համարում: Այնպես չպիտի լինի, որ ցանկացողը մտնի անտառը կտրի-տանի: Եպիսկոպոսը դա ավեր է համարում այնքան ժամանակ, քանի դեռ մտնում ես ուրիշի, հանրային այգի: Ի՞նչ է նշանակում ավեր հանրային այգում, այս դեպքում՝ Հայ առաքելական եկեղեցու այգում: Եթե անհատն ինքն է ընտրում սեփական դավանանքն ու հեռանում է Հայ առաքելական եկեղեցուց, արդյո՞ք դա կարելի է համեմատել այգում կամ անտառում ծառահատման հետ: Կամ արդյո՞ք անհատին ու ծառին կարելի է նույնացնել: Տեր Սեպուհ եպիսկոպոս Չուլջյանն ասում է, թե եթե մարդը անգիտելիք է, ոչ բանիմաց, ապա կրոնական շարժման պատրաստված ներկայացուցչի հանդիպելիս կուլ կգնա այնպես, ինչպես անտառում վտիտ ծառը խեղդվում է հզորների մեջ:

Նա վստահ է, որ դրսից ներմուծվող կրոնական ուղղություններն ամենևին էլ Ավետարանը չեն քարոզում:

«Թող ցույց տան, որ Ավետարանում գրված է՝ գնացեք հայ ժողովրդին տրոհեք, որովհետև նրանք հեթանոս են»,- կրոնական ուղղությունների գործունեությունը Հայաստանում անիմաստ է համարում Հայ Առաքելական եկեղեցու ներկայացուցիչը: «Ու՞ր ես եկել, ինչի՞ ես եկել, եթե այս ժողովուրդն ունի իր հավատքը»,-հարցնում է եպիսկոպոս Չուլջյանը: Նա գտնում է, որ կրոնական այլ շարժումների դերը Ավետարանը քարոզելու մեջ չէ: Ավետարանը ծառայեցնում են իրենց նպատակին, մարդորսության ու մարդ փչացնելու համար են եկել, որովհետև «դու միայն բարություն պիտի սովորեցնես, Քրիստոսի պատգամները միայն պիտի տարածես»: «Բայց եթե դու տարանջատում ես իր հոտից, իր ժողովրդից անհատին, բաժանում ես, որ տիրես, ուրեմն քո մեջ չի կարող արդարը գործել»,-հավատացած է Տեր Սեպուհ եպիսկոպոս Չուլջյանը: Նա համոզված է, որ եթե բոլոր կրոնական շարժումների հիմքը Ավետարանը լիներ, ապա կլիներ եղբայրական, սիրո մթնոլորտում հավատացյալների հոծ զանգված: Վերջապես՝ միասնականություն: «Այնինչ նրանց գործունեության հիմքում ինքնակայացման, սեփականաց-

ման գործընթացն է ընկած»,- հավատացած է եպիսկոպոսը: «Կրոնի անվան տակ գնում է հայ ժողովրդի ջլատման, մասնավորեցման գործընթաց»:

Իսկ ի՞նչ պետք է անի Հայ Առաքելական եկեղեցին, որպեսզի իր անդամին «չխլեն» տարբեր կերպ գրավող կրոնական ուղղությունները:

Հայ Առաքելական եկեղեցին ճկունություն է ցուցաբերում իր հոգևոր-մշակութային քաղաքականությունում: Գուգարաց թեմի առաջնորդն ասում է, որ ավանդականը պահպանելով, բայց միաժամանակ նորովի պետք է մատուցվի եկեղեցական արարողակարգերն ու ծեսերը: Եպիսկոպոսը հիշում է Գևորգ չորրորդ և Գևորգ հինգերորդ կաթողիկոսներին, որոնք հրաման տվեցին եկեղեցում նստարաններ տեղադրել, երգեհոն ունենալ: «Սրանք աստիճանաբար զարգացող երևույթներ են, որոնց եկեղեցին ընթացք է տալիս այնքանով, որքանով հարիր է մեր ազգին, ժողովրդին ու ընդբռնողականությանը»,-ասում է եկեղեցական այրը: Իսկ այն, ինչ անընդունելի է մեր ժողովրդին, Հայ Առաքելական եկեղեցին դրան ընդառաջ չի կարող գնալ: Վերջին հաշվով, եպիսկոպոսը անխուսափելի է համարում ժամանակակից մարդուն ծեսերն ու տոները նոր ձևով մեկնելու անհրաժեշտությունը: «Այսօրվա լեզվով այսօրվա մարդուն այսօրվա հոգևորականը հասանելի մատուցել»,-այսպես է բնութագրում Գուգարաց թեմի առաջնորդը փոփոխությունների անհրաժեշտությունը, որը կարելի է անվանել բարեփոխում: Սրա մեջ կարելի է ներառել նաև խղճի ազատությունը կարգավորող օրենքի շուրջ տեղի ունեցող քննարկումները: Օրենքով և ենթաօրենսդրական ակտերով եպիսկոպոսը հնարավոր է համարում ամրագրել, որ յուրաքանչյուր կրոնական շարժում ժողովրդի կյանքում պետք է հստակ իր ասելիքը, անելիքը, իր պարտականությունն ու վերջապես իր գործունեության դաշտն ունենա: Եպիսկոպոսը կարծում է, որ եթե խղճի ազատություն հասկացությունը չափված, կարգի մեջ լիներ, աղանդներն այս աստիճան ավեր չէին գործի: Իսկ եթե եվրոպական կառույցները դե՞մ լինեն Հայաստանում խճի ազատությունը կարգավորող օրենքի գոյությանն ընդհանրապես: «Նշանակում է՝ Եվրոպան ուզում է անտառը ավերվի, ուզում է ամեն մի անհատ մի կրոնական ուղղություն ներկայացնի»,- կարծում է եպիսկոպոսը: Բայց Եվրոպան չի ավերվել տեսակետին Գուգարաց թեմի առաջնորդը հակազդում է, թե Եվրոպան բարոյազրկվել է: Մյուս կողմից, յուրաքանչյուրն իր մեղքի բաժինն ունի այս երևույթների տարածման մեջ իր լռությամբ ու անտարբերությամբ: «Մենք մասնակիցն ենք այսօրվա եփվող ապուրին»,- յուրաքանչյուր հայի մեղքի բաժինն է նշում Գուգարաց թեմի առաջնորդն ու իրավիճակից դուրս գալու ուղիներից

Սեպուհ եպիսկոպոս Չուլջյան
Հայ Առաքելական եկեղեցու Գուգարաց թեմի առաջնորդ

մեկը մատնանշում դաստիարակչական աշխատանքները: Ամենքն իրենց տեղում պետք է լինեն ու տեղի անտեղի ոլորտ առ ոլորտ չբռնեն ու քննադատեն, այլ ամեն մեկն իր գործով զբաղվի, միևնույն ժամանակ մասնակցություն ունենա հանրային կյանքին: Այսպես է պատկերացնում Սեպուհ եպիսկոպոս Չուլջյանը Հայ Առաքելական եկեղեցու և հայ ժողովրդի ազգային ու պետական միասնականության պահպանման առաքելությունը: Այնպես, ինչպես Հայ Առաքելական եկեղեցին իր ողջ գոյության ընթացքում առանց պետականության կարողացել է պահպանել հայ ազգն իր մշակույթով ու կրոնով: Առաքելական եկեղեցին հայ ազգի ամեն մի ներկայացուցչի համարում է իր զավակը: Թեկուզ մոլորված, թեկուզ գրավված կրոնական կազմակերպությունների կողմից՝ անկախ աղանդների շարքերն անցնելու նրանց սեփական ցանկության, այդուհանդերձ այն «ժողովրդավարական բնույթ ունի»: Եվ դրա օրինակը եպիսկոպոսը բերում է վաղ անցյալից: Երբ երևի թե աշխարհում չկար ընտրովի ղեկավարներ ունենալու գաղափարը, Առաքելական եկեղեցին այդ կերպ էր ընտրում իր հովիվներին: Միևնույն ժամանակ այնքան հանդուրժող էր ու այդ արժեքները տարածում էր իր հավատակիցների շրջանում այն աստիճան, որ պետականության բացակայության պայմաններում եկեղեցու շնորհիվ հայ ազգը կարողացել է ապրել այլազգիների շրջանում ու համագոյակցել: «Որովհետև եկեղեցին ճկունություն էր դրսևորում»,-ասում է Գուգարաց թեմի առաջնորդը: Իսկ հիմա նոր մարտահրավերներ են առաջ եկել, որոնց դեմ պայքարել է պետք:

«Ի վերջո, ինչքա՞ն կարելի է ծաղրել այս ժողովրդին»,- հարցնում է Գուգարաց թեմի առաջնորդը: Եվ երբ խոսքը հասնում է պետության իշխանավորներին, նա հիշում է, թե ինչպիսի դաստիարակություն են ստացել խորհրդային կարգերի օրոք Հայաստանի ղեկին նստած այրերը: Այս գիտակցության տեր մարդիկ եկեղեցական որոշ արժեքների ի միջի այլոց կարող են վերաբերվել: «Արդյունքում այն կլինի, որ մի ձեռքում Ավետարանը կլինի, մյուս ձեռքում մահակը»,-հայաստանյան իշխանությունների վարքագիծն է մեկնաբանում Գուգարաց թեմի առաջնորդը հանրահավաքների ժամանակ մարդկանց նկատմամբ բռնություններ կիրառելիս: Այսուհանդերձ, նա գտնում է, որ հարկավոր է խորացնել հարաբերությունները իշխանությունների հետ, որովհետև եկեղեցին ամբողջական ներկայություն չունի պետական կառավարման համակարգում:

Նաիրա Բուլղադարյան
«Քաղաքացիական նախաձեռնություն»
30.06.06, N12

ԱՅՍՏԵՂԻՑ ԲԱՐՈՅԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ Է ՔԱՐՈԶՎՈՒՄ

Երևանի ավետարանական մկրտական քրիստոնյաների Բեթել անունը կրող եկեղեցու նախագահ Դավիթ Թորոսյանը 1995 թ-ին մի քանի օր անցկացրեց բանտում: Պատմում է, թե դեռ այն ժամանակ երկրապահ կամավորականների ջոկատը «պատահաբար հարձակվեց կրոնական կազմակերպությունների վրա»: Վեց օր բանտարկված մնալուց հետո Դավիթն իմացավ, որ իրեն թյուրիմացաբար են ձերբակալել ու ազատ արձակվեց: Դրանից հետո ամեն ինչ փոխվեց: Այս եկեղեցու հանդեպ այլևս նման ոտնձգություններ, ճնշումներ չեն եղել: Եկեղեցու առաջնորդը լուրջ ճնշում չի համարում դեռևս 2000-ին Քուչակ գյուղի դպրոցի տնօրենի վերաբերմունքը իրենց եկեղեցու հավատացյալների երեխաների նկատմամբ: Տնօրենը ծաղրանքով դպրոցից դուրս էր հանել աշակերտներին ու արգելել մասնակցել դասերին: Խնդիրը լուծվել էր եկեղեցու առաջնորդի միջամտությունից հետո, երբ նա այցելել էր դպրոց, զրուցել տնօրենի հետ ու հարթել միջադեպը: Կրոնական այս կազմակերպությունը որևէ գերատեսչության հետ խնդիրներ չունի: Բարիդրացիական հարաբերությունների մեջ է ինչպես իշխանությունների, այնպես էլ Հայ առաքելական եկեղեցու հետ: Դավիթ Թորոսյանը սա առայժմ համարում է չլուծված խնդիր, որովհետև իրավական տեսակետից կան խնդիրներ՝ կապված կրոնական ազատության կամ էլ խղճի ազատության սահմանափակումների հետ:

Ճիշտ է, քաղաքականությանը չեն խառնվում, բայց երբ համայնքի ղեկավար է ընտրվում, գնում-շնորհավորում են նրան: Եկեղեցու ներկայացուցիչը պատմում է, որ լինում են դեպքեր, երբ ընտրություններից առաջ իրենց անուններ են առաջարկում՝ ընտրելու համար, բայց եկեղեցու անդամներն ազատ են և իրենք են որոշում՝ ում ընտրել:

Հայ Առաքելական եկեղեցու հետ համագործակցությունը սկսվում ու ավարտվում է Ջինիշյան կոչվող հիմնադրամի խորհրդատվական կոմիտեում:

«Մենք մեր ծառայությունը հազիվ ենք հասցնում»,-դեռևս համագործակցության չկայացման պատճառներն է թվարկում Դավիթ Թորոսյանը: Այս եկեղեցու ծառայության մեջ ներառվում է ինչպես բարեգործությունն, այնպես էլ Աստծո խոսքի տարածումը: «Մենք մարդիկ ունենք, որոնց կյանքը փոխվել է: Գող էին, գող չեն, թշնամի չեն, խաբող չեն»,-հպարտանում է Երևանի ավետարանական մկրտական քրիստոնյաների Բեթել եկեղեցու առաջնորդը, որի համայնքի անդամների թիվը հասնում է 2000-ի: Եկեղեցուն դավանողների մեծ մասը տարիքն առած մարդիկ են, նույնիսկ այլազգիներ կան: Կան նաև բժիշկներ, ուսուցիչներ, տեղական ինքնակառավարման մարմիններում աշխատողներ, որոնց համար աշխատավայ-

րում որևէ խնդիր, կապված հավատքի հետ, չեն առաջացնում: Եթե նույնիսկ եկեղեցու անդամը աշխատում է իրավապահ համակարգում, դա չի նշանակում, որ պետք է կաշառք վերցնի կամ մեղք գործի: Դավիթ Թորոսյանը կարծում է, որ իրենց անդամը իր համոզմունքը պետք է փոխանցի մյուսին ևս՝ անկախ նրանից՝ դիմացինը ինչ գաղափարներ է դավանում: Չնայած նրան, որ կրոնական կազմակերպությունների դաշտը կարգավորող օրենքը թույլ չի տալիս անդամ համարել անչափահաս մարդկանց, այդուհանդերձ եկեղեցու համար խնդիր չէ աշխատել երեխաների հետ, նրանց համար կազմակերպել տարբեր դասընթացներ, նպաստել նրանց դաստիարակությանը: Եկեղեցին իր մանկական երգչախումբն ունի, պատանիների ֆուտբոլային թիմ, որոնց անդամների ծնողները ամենևին էլ եկեղեցու հավատացյալներ չեն:

Հատուկ ուշադրություն է դարձվում երիտասարդ զույգերի քրիտոնեական դաստիարակությանը, զբաղվում են հիվանդների այցելությամբ ու օգնությամբ: Երեք տարի շարունակ եկեղեցին բարեգործական ճաշարանում անվճար կերակրել է անապահովներին, որոնց որոշելու ու ընտրելու համար համագործակցել են թաղապետարանի հետ:

«Ճակատներիս գրած է՝ այդ ամեն ինչն անենք սիրով»,-ասում է եկեղեցու ղեկավարը: Երևանի ավետարանական մկրտական քրիստոնյաների Բեթել եկեղեցին ևս ազատ է մարդկանց համար, և անկախ նրանից, համարվում ես իրենց անդամը, թե ոչ, կարող ես այցելել աղոթաժողովների, լսել, հարցեր տալ: Եթե այցելություններդ դառնում են պարբերական, կարող ես ընդգրկվել

Դավիթ Թորոսյան, Երևանի Ավետարանական Մկրտական քրիստոնյաների Բեթել եկեղեցու նախագահ

նրանց շարքերն ու տարածել Աստծո խոսքը:
«Մենք եկեղեցականին սևազգեստ ենք չէ՞ տեսել: Շարականները կամ պատարագները երեխաների ու երիտասարդների համար մատչելի պիտի լինեն: Բայց բացի կիրակի օրերից, ո՞ր օրը կարող ես պատարագ լսել հեռուստատեսությամբ կամ որտե՞ղ »,-Աստծո խոսքը մարդկանց հասցնելու համար մատչելիությունը կարևոր նախապայման է համարում ավետարանական-մկրտական ուղղության ներկայացուցիչը: Եկեղեցին ընդգրկված է Հայաստանում գործող մկրտական եկեղեցիների միությունում, բայց որպես ինքնուրույն եկեղեցի գործում է 1992թ-ից: Այս կրոնական կազմակերպության համար ևս խնդիր է մնում հասարակությունում ինտեգրվելը, հասարակության լիարժեք անդամ ընկալվելն ու նախաձեռնող լինելը:

Նաիրա Բուլղադարյան
«Քաղաքացիական նախաձեռնություն»
30.06.06, N12

ԻՐԱԿԱՆ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆԸ ԱՍՏԾՈ ԽՈՍՔՈՎ ԱՊՐԵԼՆ Է

Մաթեմատիկական հավասարման աջ կողմը զրո է: Ինչ գործողություն էլ կատարես հավասարման ձախ մասում, միևնույն է, արդյունքը հավասար է զրոյի: Ռաֆայել Գրիգորյանը մարդկային կյանքը համեմատում է հավասարման հետ ու մտորում՝ «եթե պիտի մեռնեմ ու զրո դառնամ, ինչ նշանակություն ունի, թե այստեղ ոնց եմ ապրել»: Կյանքի իմաստի վերաբերյալ մտորումները դեռ տարիներ առաջ Երևանի պետհամալսարանի ֆիզմաթ դպրոցում սովորող աշակերտին ստիպում էին մտածել, թե իրականում ինչի համար է գիտությունը ու որն է այն առարկան, որ կպատասխանի կյանքին առնչվող հարցերին: «Իմ այդ որոնումները փորձում էի խեղդել հաճույքների մեջ, բայց ամեն հաճույքից հետո ծարավս ավելի էր ուժեղանում»: Ու մի օր պատահաբար նա հանդիպում է նույն դպրոցի շրջանավարտ, Երևանի պետհամալսարանի առաջավոր ուսանողներից մեկին: Երիտասարդ ավետարանականը լսում է վանաձորցի պատանու երգը, հետաքրքրվում, թե ինչու է այդքան տխուր ու պատմում Աստծո մասին, առաջարկում մասնակցել ավետարանականների ժողովներին:

«Դե, քոռին ինչ է պետք, երկու աչք, և ես գնացի»,-քրիստոնեական իր առաջին քայլերն է վերհիշում Վանաձորի Ավետարանի հավատքի քրիստոնյաների եկեղեցու հովիվը: Կաթոլիկ ծնողների որդին այդպես դառնում է ավետարանական, ու սկսվում են նրա հալածանքները: Մանկխորհրդի նիստով նրան վռնդում են դպրոցից նրա համար, որ «ֆիզմաթ դպրոցում հոգևոր ճեմարան են բացել» և հաճախ նրա ղեկավարությամբ երեկոներն անց են կացնում Սուրբ գիրք ընթերցելով: Այնուհետև վերականգնվում է և փայլուն հանձնում դիպլոմային աշխատանքը:

«Ասի, դուք գնահատում եք գիտելիքը, թե՝ համոզմունքը»: «Մենք գնահատում ենք համոզմունքը»,-պատասխանում են նրան: «Որտեղ տրամաբանությունը չի գործում, այնտեղ գործում է բիրտ ուժը»,-ասում է Ռաֆայել Գրիգորյանը: Կոմունիստական հասարակարգում 25 տարի նա հալածանքների է ենթարկվել կրոնական համոզմունքների պատճառով: Գրել է 14 գիտական աշխատություն, բայց այդպես էլ չի կարողացել պաշտպանել թեկնածուական թեզը: Դրա դիմաց կոմունիստները նրան առաջարկեցին հրաժարվել համոզմունքներից՝ այդ մասին հրապարակելով թերթերում: «Ասեցի, եթե դոկտորական էլ լինի, միևնույն է, չեմ հրաժարվի: Սա ինձ համար գաղափար չի, այլ՝ իմ կյանքն է»:

Արդեն 40 տարի Ռաֆայել Գրիգորյանը ավետարանական հավատքի ջատագովն ու տարածողն է: Նա գլխավորում է Վանաձորի Ավետարանի հավատքի քրիստոնյաների եկեղեցին, որը պատկանում է ավետարանական ուղղության համաշխարհային կառույցին: Այն գրանցվել է Ռուսաստանում դեռևս 1921թ-ին: Այնուհետև Հայաստանում առաջացել է Մկրտական եկեղեցին, որից էլ 1960թ-ին առանձնացավ Ավետարանական հավատքի եկեղեցին: Վանաձորի ավետարանական հավատքի եկեղեցուն հավատում ու գաղափարակից է 600 մարդ, որոնք հակակրանքի, թշնամու

խոսք են որակում իրենց 50-ականներ կամ հոգեգալստականներ կոչելը:

Ավետարանական այս ուղղությունն ավելի շատ ունի հոգու պարգևների շեշտադրություն: «Սուրբ հոգու պարգև» նշանակում է կնքվել ու ստանալ Սուրբ հոգու պարգևներ՝ աղոթել հիվանդին, հավատքի գալ, մեղքերի թողություն ստանալ: Այս երևույթը Ռաֆայել Գրիգորյանը չի դիտարկում հակադրություն Հայ Առաքելական եկեղեցու դավանանքին: Երրորդության գաղափարի շուրջ Ավետարանական ու Հայ Առաքելական եկեղեցիները նրա կարծիքով կողմնակիցներ են: Ասել, թե ավետարանական ուղղությունը Հայաստան է բերվել դրսից, նա ճիշտ չի համարում: «Նույնիսկ Հայաստանյաց Ավետարանական եկեղեցին է առաջացել մայր եկեղեցու ծոցից»,-վկայում է ավետարանականն ու մայր եկեղեցուց բաժանվելու պատճառներից մեկը մատնանշում սովորական հավատացյալին Աստվածաշնչի սեփական մեկնությունն արգելելը:

«Տեղեր են եղել, երբ Սուրբ գրքի ընթերցումն արգելվել է ավանդական եկեղեցու կողմից: Նրանցից ոմանք ասում են հավատացյալ մարդուն, թե դուք իրավունք չունեք, մենք պետք է այն մեկնենք»,-ասում է նա: Մինչդեռ, երբ «մարդը սկսում է կարդալ Աստվածաշունչը, կարևորվում է, ուշադրություն է դարձնում ինքն իրեն, հասկանում է, որ ինքը ևս կարող է Աստծուն աղոթել, մեղքերի թողություն ստանալ առանց միջնորդի: Միջնորդը Հիսուս Քրիստոսն է»:

Հավատի ու կրոնի մեջ եղած տարանջատումներին Ռաֆայել Գրիգորյանը վերաբերվում է հանդուրժողությամբ ու առաջ քաշում աստվածաբան Օգոստինոսի բանաձևը. կարևոր բաների մեջ միաբանություն, երկրորդականի մեջ՝ ազատություն, ամեն բանի մեջ՝ սեր: Նա սքանչելի է որակում այս բանաձևն ու մեկնաբանում, թե որն է այս դեպքում կարևորն ու երկրորդայինը: Կարևորն այն է, երբ հավատում ես, որ Աստված գոյություն ունի: Երկրորդական բաներում մարդը ազատ մտածելու իրավունք ունի:

«Ինչի ես ուզում հասարակությունը ինկուբատորի ճտերի վերածես, և եթե քո տեսակը չի ու ձեռքիդ իշխանություն կա, ենթարկես խտրականության»,-պնդում է վանաձորցի ավետարանականը: Նա օրինակ է բերում Եհովայի վկաներին, որոնց «ինչքան ճնշեցին, այնքան շատացան»: Չնայած նա նկատել է, որ զարմանալի զուգադիպությամբ այնտեղ, որտեղ ակտիվ են ավետարանականները, Եհովայի վկաները քիչ են:

«Մենք հաճախ բռակավորում, ակտավորում ու աղբն ենք նետում նրանց, ում Աստված ընդունում, գրկում, սիրում ու օրհնում է»,-մարդկային անհանդուրժողությունը դատապարտում է Վանաձորի Ավետարանի հավատքի քրիստոնյաների եկեղեցու հովիվը,- Աստծուց մեծ չլինելով՝ մենք հանդգնում ենք այդպիսին լինել»:

Արդյունքում գործում է «տխմար սկզբունքը, եթե ինչ-որ մեկը մեզ հետ չէ/-*, չի անցնում մեր թրի տակով, ուրեմն՝ հակառակ է մեզ»: Ավետարանականները որևէ խտրականություն հարանվանությունների նկատմամբ չեն ցուցաբերում, չնայած կադրային հոգևորսություն են որակում Աստծո խոսքը տարածողին գնալ ասել, թե՝ սխալ ես փրկում մարդկանց, արի՝ ինձ պես փրկի: Վանաձորցի ավետա-



ռանականը անթույլատրելի է համարում աղանդ բառի կիրառումը: Այն ոչ թե իրավաբանական, այլ կրոնական կատեգորիա է, ինչը համարվում է Աստվածաշնչից շեղվածություն: Եթե Աստվածաշնչին համարժեք ընդունում ես մեկ ուրիշ գիրք, եթե մարդու կյանքը փրկելու համար արյունդ չես տալիս, վերջապես, երբ Հիսուսին չես ընդունում որպես Աստված, ուրեմն հարում ես աղանդավորական շարժմանը:

«Ինչու Եհովայի վկաները կորցրեցին իրենց հարգանքը»,-ամենևին չուզենալով նսեմացնել նրանց աթեիստ աշխարհի առջև՝ պատասխանում է ավետարանական ուղղության ջատագովը՝ «պատմական բազմաթիվ փաստերը վկայում են, թե ինչպես Եհովայի վկաները սխալվել են Հիսուսի երկրորդ գալստյան ժամկետներում»:

«Կամ ինչու սա աղանդ է, որովհետև իրենց առաջնորդի խոսքը ընդունում են որպես Աստծո խոսք: Չի կարելի մարդուց խլել իր մեծագույն արժանիքը՝ մարդու իրավունքը»:



Ռաֆայել Գրիգորյան, Վանաձորի Ավետարանի հավատքի քրիստոնյաների եկեղեցու նախագահ

Աստվածաշնչյան պատվիրանները, որոնք, թվում է, թե սահմանափակում են մարդու ազատությունը, իրականում հնարավորություն են տալիս մարդուն ապրել ազատ՝ զերծ սպանելու, գողանալու ու անբարոյական արարքներ թույլ տալու գայթակղությունից:

«Դա է իսկական ազատությունը, երբ մարդն ապրում է Աստծո խոսքով, ու այստեղ պետք է հարգվի մարդու իրավունքը»: Իսկ այն ժամանակ, երբ կրոնական որոշ ուղղություններ Աստծո խոսքը մեկնաբանում են կամայականորեն, ընկնում են հոգեբանական մի իրավիճակի մեջ, երբ նվազում է նրանց ազատության աստիճանը: Մյուս կողմից, սկսվում է հասարակությունից մեկուսացումը, հարկեր չվճարելը, ընտրությունների չգնալը:

«Սրանք աղանդավորության ատրիբուտներ են»,-նկատում է Ռաֆայել Գրիգորյանը: Նա այստեղ հիշատակում է Հիսուսի պատգամը՝ Աստծունը տվեք Աստծուն, կայսրինը՝ կայսրին:

Մեղավորներին ճշմարտության բերելու համար Ռաֆայել Գրիգորյանը միայն սիրո միջոցն է ճիշտ համարում: Օգնել, օրինակ, համասեռամոլներին, մաքրվել մեղքերից ու ընտրել կյանքի բնական ճանապարհը: Հակառակ դեպքում նրանք կզրկվեն «երկնքի արքայություն մտնելուց»: Մինչդեռ այն փաստը, որ կաթոլիկ եկեղեցին ամուսնացնում է համասեռամոլներին, Վանաձորի Ավետարանի հավատքի քրիստոնյաների եկեղեցու հովիվը դա Հռոմի Պապի մակարդակով տեղի ունեցող գործընթաց չի համարում: Ավելին, նա գտնում է, որ Հռոմի Պապը նման թույլտվություն չի տվել, և այս երևույթը եկեղեցու սպասավորի սուբյեկտիվ դրսևորում է, ինչը մեղք է համար-

վում: Անկախ ամեն ինչից, նրանք ևս կարիք ունեն բուժվելու ու նրանց պատժելու փոխարեն Ռաֆայել Գրիգորյանն առաջարկում է սիրո միջոցով փրկել:

«Նրանց նկատմամբ որևէ խտրականություն, անգամ կրոնական, անմարդկային է»,-հավատացած է ավետարանականը:

Նա անհանդուրժելի է համարում բռնության մեթոդը, իշխանության, դիրքի չարաշահումը: Կարծում է, որ խտրականության պարագայում անհնար է ձևավորել քաղաքացիական հասարակություն, որտեղ յուրաքանչյուր քաղաքացի իրավահավասար կլինի ու չի ենթարկվի խտրականության:

«Որ ես քայլեմ փողոցով, ինձ մատնացույց չանեն՝ թե ավետարանական է: Ես նույնքան քաղաքացի եմ, որքան՝ դու: Եվ դատաստանի օրը կերևա, թե որս ինչ ենք»: Անկախ կրոնական պատկանելությունից, Ռաֆայել Գրիգորյանը կարևորում է յուրաքանչյուր քաղաքացու մասնակցությունը հասարակական գործընթացներին, և դա չի նշանակում հակադրվել Ավետարանին: Ավելին, հակավետարանական է որակում պետության խնդիրներին մասնակցություն չունենալը, ինչը բնորոշ է աղանդավորությանը: «Իսկ երբ իշխում է Աստծո ղեկավարությունը, կատարյալ ազատություն է տիրում, ու պաշտպանված են մարդու իրավունքները: Հակառակ դեպքում մարդուն ղեկավարում է ճնշող մեծամասնության չարը, որտեղ Աստված չկա»: Ավետարանական ուղղության ներկայացուցիչը օրինակ է բերում պաշտոնի ու փողի ձգտող մարդուն, ում չարագործությունների մասին չես հասցնի գրքեր գրել:

«Մենք շատ հեռու ենք քաղաքացիական հասարակությունից, բայց դա մեզ չի հուսահատեցնում»,-թեկուզ ապագա սերունդների համար առողջ հասարակարգ ստեղծելու գաղափարի կողմնակիցն է Վանաձորի ավետարանականը: Նրա ղեկավարած եկեղեցին չի սահմանափակվում միայն կրոնական գործունեությամբ: Վանաձորում նրանք բազմաթիվ ընտանիքների են աջակցել սոցիալական, բնակարանային խնդիրների լուծմամբ, նաև օգնել ձերբազատվել վատ սովորույթներից ու հավատալ Աստծուն: Ռաֆայել Գրիգորյանը կատակում է, թե Ներքին գործերի նախարարությունը պետք է լավ քարոզիչներին շքանշանով պարգևատրի, «որովհետև ինչքան գողեր, անառակներ, թմրամոլներ են փրկվել»: Վանաձորի Ավետարանի հավատքի քրիստոնյաների եկեղեցին հակված է իր ձայնը լսելի դարձնել տարբեր մակարդակներում, աջակից լինել, զարգացնել: Նրանց վերջին հասարակական գործողությունը կապված է Դա Վինչիի ֆիլմի ցուցադրման հետ, երբ ավետարանականները բողոքի ակցիա կազմակերպեցին կինոթատրոնի առջև: Վանաձորի Ավետարանի հավատքի քրիստոնյաների եկեղեցին լավ հարաբերություններ է ձևավորել Հայ Առաքելական եկեղեցու, ավետարանական ուղղության այլ եկեղեցիների հետ: Ռաֆայել Գրիգորյանը պատրաստվում է հրավիրել Գուգարաց թեմի առաջնորդ Տեր Սեպուհ եպիսկոպոս Չուլջյանին իրենց աղոթատունը օրհնելու համար: Ավետարանական ուղղության ներկայացուցիչը պատրաստ է հաղորդակցվել Եհովայի վկաների, մորմոնների հետ, եթե իրենք ցանկանան: Ի վերջո, Աստված բազմազանություն է սիրում:

Նաիրա Բուլղադարյան
«Քաղաքացիական նախաձեռնություն» 06.09.06 N14

ՀԱՅ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒՆ ՃԿՈՒՆՈՒԹՅՈՒՆ Է ՀԱՐԿԱՎՈՐ

35-ամյա Արմեն Մարգարյանը Հայ Առաքելական եկեղեցու հավատացյալ է: Աստծո նկատմամբ նրա հավատը 12 տարվա պատմություն ունի: Մինչ այդ նա և նրա ընտանիքը չէին հավատում Աստծուն ու բավականին հեռու էին Հայ Առաքելական եկեղեցուց: Նրանց ընտանիքում տարիներ առաջ տեղի ունեցած մի դեպքից հետո սկսեցին մտորել Աստծո ու նրա հրաշագործությունների մասին: 1993-ին Իջևանում բնակվող Արմենը մկտրվեց ու սկսեց ծառայել Հայ Առաքելական եկեղեցուն: Նրա կինը ևս համարվում է Առաքելական եկեղեցու հետևորդ, ու, ինչպես Արմենն է ասում, ուխտ են արել Աստծո առջև ու երբեք Առաքելական եկեղեցու դավանանքից չեն շեղվի: Աստծո նկատմամբ հավատը ամրացնելու ու Ավետարանը քարոզելու նպատակով Արմենը համալրել է Հայ Առաքելական եկեղեցու եկեղեցասիրաց եղբայրակցության շարքերն ու համարվում է դպիր: Ասում է, որ դա ամենևին էլ չի նշանակում լինել ձեռնադրված հոգևորական: Եղբայրակցությունում չկան հոգևորականներ: Նրա կազմում ընդգրկվելու համար բավարար է մկրտվել ու ընդունել Հայ Առաքելական եկեղեցին, կարևորել Ավետարանը, աղոթել ու հոգևոր կյանքով ապրել: Հայ Առաքելական եկեղեցու եկեղեցասիրաց եղբայրակցությունը Հայաստանում ստեղծվել է 1945թ-ին: Այն համարվում է եկեղեցու անբաժան մասը, որը քարոզներ է անցկացնում, այցելություններ կազմակերպում հավատացյալների շրջանում, տարբեր բուկլետներ ու գրքույկներ տպագրում: Եղբայրակցության առաքելությունը Ավետարանին հավատարիմ մնալն ու Աստծուն ծառայելն է: Այն համարվում է փոքր առվակ Առաքելական եկեղեցում: Եղբայրակցությունը առանձին իրավաբանական անձ չէ, «կարիք էլ չկա այդպիսին լինելու»: Արմեն Մարգարյանն ասում է, թե շատերը կուզեներ, որ այն գրանցվեր որպես առանձին մարմին, որպեսզի հետագայում շահարկվեր նրա առանձնացված լինելը:

«Այսօր եկեղեցուն օգնելը մեր կարևոր գործն է»,-ասում է Արմենը: Նրա կազմակերպությունը պատրաստվում է լույս ընծայել մի գրքույկ, որը կպատմի եղբայրակցության մասին: Հաջի Եղիշ Եղիսաբեթ Լաբաշյանի մասին ևս կներկայացվի, ով իր աղոթքներով հրաշքներ է գործել ու մարդկանց իր շուրջը համախմբել:

Հայ Առաքելական եկեղեցու հավատացյալները համակարծիք են, որ եկեղեցին իր ուրույն տեղն ունի Ավետարանը քարոզելու, մարդկանց մեղքից ազատելու ու հեռու պահելու համար:

Անկախ նրանից, թե որ հայը որ կրոնական կազմակերպությանն է պատկանում ու հավատում, Արմեն Մարգարյանը նրան իր ազգակիցն է համարում:

«Ինքն էլ այդ ձևով է լսել, հավատացել, ինչ անենք»,-կարծում է նա ու ասում, որ միևնույն է, հոգևոր տեսանկյունից սխալ ուղղությամբ են գնում: Ճիշտ է, Հայ Առաքելական եկեղեցին համագործակցություն չունի կրոնական կազմակերպությունների հետ, բայց նրա վերաբերմունքը թշնամական համարել չի կարելի: Պարզապես, ինչպես Ար-

մենն է ասում, փոփոխված այս ժամանակներում եկեղեցին պետք է շրջահայաց լինի: Հարկավոր է ճկուն լինել, «որովհետև մարդիկ շատ կարճ են լսում, հետաքրքրեցիր, կշարունակեն լսել, չէ՝ կձանձրացնես»: Մյուս կողմից, եթե ինչ-որ մեկին որևէ բան հետաքրքրի, ապա նա կհաղթահարի խոչընդոտները: Արմեն Մարգարյանը օրինակ է բերում գրաբարը:

«Եթե մարդը մի փոքր սիրի, քայլ անի, հեշտությամբ կսովորի այն: Դժվարը առաջին արգելքը հաղթահարելն է»: Բայցև կարևորում է եկեղեցական ծեսերի բացատրությունը, մեկնաբանումը: Այս ամենը ժամանակի խնդիր է, և հոգևորականները բարեփոխումներ կանեն: Դրական քայլ կարելի է համարել դպրոցներում Հայ Առաքելական եկեղեցու պատմության դասավանդումը, որի համար ժամանակին մանկավարժները վերապատրաստում են անցել: Բայց ի՞նչն է պատճառը, որ հայ հավատացյալը հեռանում է իր ավանդական եկեղեցուց:

«Միգուցե կրոնական այլ ուղղությունները լավ են մոտենում մարդկանց: Միգուցե նրանց շփումը, պատրաստվածությունը, սիրալիրությունն է պատճառը»,-կարծում է Հայ Առաքելական եկեղեցու եկեղեցասիրաց եղբայրակցության դպիրը: Միևնույն ժամանակ, խնդիրը բազմաշերտ է, և ասել, թե Իջևանում խնդիրը Եհովայի վկաների գոյությունն է, Արմենը ճիշտ չի համարում: Կրոնական ուղղությունների ավելացումը նա համարում է հանրագիտարանային տվյալներ լրացնելու պես մի բան, երբ շատերը նույնիսկ չեն գիտակցում կամ չգիտեն դրանց անունները: Գուցե կշահի Հայաստանը կրոնական բազմաթիվ կազմակերպությունների պարագայում սոցիալ-տնտեսական տեսակետից, բայց ի վերջո բարոյականությունն ավելի կարևոր է:

Արմեն Մարգարյան,
Հայ Առաքելական
եկեղեցու հավատացյալ

«Ի՞նչ է մեզ պետք»,-հարցնում է Արմենն ու տարակուսում. «Բարգավաճ, բայց անբարոյական երկիր կդառնանք: Եթե մեր ազգը որոշի, որ կաշառակեր, բարոյազրկված պետք է մնա, թող մնա»: Բայց չէ՞ որ կոնական այլ ուղղությունների գաղափարախոսությունից հեռու է անբարոյականությունը, ու նրանք ևս կարևորում են ընտանիքի ամրությունն ու համերաշխությունը կամ էլ դավանում բարոյական արժեքներ: Հայ Առաքելական եկեղեցու ներկայացուցիչը կասկածում է նրանց գործելակերպի և դավանանքի համապատասխանության վրա: Այսինքն՝ կրոնական այլ ուղղությունները, թեպետ ունեն հստակ գաղափարախոսություն, բայց այն ոչ միշտ են կյանքի կոչում: Եվ այն պայմաններում, երբ միմյանց որակավորում են ու ավելորդ համարում մյուսի գոյությունը, չի նպաստի կրոնական կազմակերպությունների միջև համագործակցությանը:

«Այն վիճակն է տիրում, երբ

շատ բաներ ենք մտածում, ինչը չի համապատասխանում իրականությանը: Լավ է, որ նստենք-խոսենք, բայց դա վերևների խնդիր է»,-համոզված է Արմենը: Իսկ վերևներն այս դեպքում կրոնական տարբեր ուղղությունների ղեկավարներն են, որոնց կազմակերպությունները ոչ միշտ կարող են քաղաքացիական հասարակությունում որևէ դերակատարում ունենալ: Արմենը կարծում է, որ բազմաթիվ կրոնական կազմակերպություններ ունենալը դեռ չի նշանակում ձևավորել քաղաքացիական հասարակություն: Այդ պարագայում նա առաջարկում է կրոնական ուղղություններին հանդես գալ որպես քաղաքացի, որին պետք է որ մտահոգի սեփական համայնքի խնդիրները:

«Կայսրինը՝ կայսրին, Աստծունը՝ Աստծուն» աստվածաշնչյան հայտնի սկզբունքը կիրառելու դեպքում կարելի է հավասարակշռություն պահպանել: Հակառակ դեպքում ծայրահեղությունների տրվելը բերում է Ավետարանի սխալ ընկալման: Ինչպես Հայ Առաքելական եկեղեցու եկեղեցասիրաց եղբայրակցության դպիրն է ասում, հարցը մտածելակերպի մեջ է:

«Մարդկանց սրտերը պիտի աղբից մաքրվի, որ հետո փողոցը մաքրվի»,-համոզված է Արմեն Մարգարյանը:

Մեր ազգային ցավը, ըստ նրա, ամեն վատ ընդօրինակելն է: Մյուս կողմից էլ, ամեն մի հայ իրեն թագավոր է պատկերացնում: Այս է պատճառը, որ մի փոքր երկրում բազմաթիվ կուսակցություններ ու կրոնական կազմակերպություններ գոյություն ունեն: Իսկ դա ազգային անվտանգությանն առնչվող խնդիրներ են ծնում Արմեն Մարգարյանի կարծիքով: Առավել ևս, եկեղեցու անվտանգությունը խաթարող խնդիրներ:

Նաիրա Բուլղադարյան
«Քաղաքացիական նախաձեռնություն»
17.07.06, N13

ԱԶԳԱՅԻՆ ՄՏԱԾՈՂՈՒԹՅԱՆ ԲԵԿՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ

Ֆրանսիացի ականավոր փիլիսոփա Ռենանի համոզմամբ՝ ազգ ձևավորելու կարևոր նախապայմաններից է սեփական պատմության նկատմամբ ունեցած առասպելականացված պատկերացումը, ինչը ոգևորում է մարդկանց ու վարակում հայրենասիրությամբ:

Սակայն, երբ սխալ պատկերացումը, առասպելներն իրականության տեղ լրջորեն ընդունած մարդիկ քաղաքական դերակատարումներ են ստանձնում, դառնում պետության շինարարներ, տուժում է ողջ հասարակությունը՝ պետությունն ընդհանրապես: Իսկ երբ մտավոր վերնախավն է սկսում կուլ գնալ առասպելականացված պատմության ավանդույթներին, այդժամ սկսվում է մշակութային գահավիժումը: 19-րդ և 20-րդ դարերի իրադարձությունները իրենց անժխտելի ազդեցությունն են թողել մեր ժողովրդի աշխարհայացքի ձևավորման վրա:

Վերջին երկու հարյուր տարիների ընթացքում մեր քաղաքական և ազգային պատկերացումները դաստիարակվում են Ռաֆֆու պատմավեպերով, այնինչ այդ ընթացքում քաղաքակրթությունը շարունակել է զարգանալ, որի ընթացքում փոխվել է անգամ ազգ հասկացության սահմանումը: Ժամանակակից արևմտյան քաղաքակրթության համար ազգը գերազանցապես քաղաքացիական հասարակություն է:

Ինքներս մեզ հասկանալու համար հույժ անհրաժեշտ է ճիշտ գնահատել ու հասկանալ այդ ժամանակահատվածում տեղի ունեցած դեպքերի տրամաբանությունը և քաղաքական կատեգորիաների բովանդակությունը: Երբեմն լսելով մերօրյա հայ քաղաքական գործիչների, մտավորականների տարբեր առիթներով արտահայտած մտքերը, այն տպավորությունն ես ունենում, թե ժամանակի սլաքը երկու հարյուր տարով հետ է գնացել:

Մեր մեկնաբանություններով ներկայացնում ենք հատվածներ է. Հոբսբաումի «Ազգը և ազգայնականությունը 1780 թվականից հետո» աշխատությունից, որը, ըստ էության, արտահայտում է Արևմուտքում

Ստեփան Դանիելյան

տարածված տեսակետներն ազգերի և պետությունների առաջացման ու նրանց դերի վերաբերյալ:

«Տարածված այն տեսակետը, թե ազգերը ձևավորվել են վերջին երկու հարյուրամյակների ընթացքում, արդեն ընդունված փաստ է, սակայն փոքրաթիվ չեն նաև նրանք, ովքեր համարում են, թե ազգը վերպատմական, վերժամանակային, ի սկզբանե գոյություն ունեցած և անփոփոխ երևույթ է: Այդ պատճառով ավելորդ չէ նկատել, որ անգամ դրան վերաբերող տերմինաբանությունն է ձևավորվել պատմության վերջին ժամանակահատվածում»:

Շատ հայերի համար այս պնդումը վիրավորական է և անընդունելի այն պարզ պատճառով, որ դա համարում են ապազգայինների հյուսած որոգայթ՝ ուղղված ընդհանրապես ազգային զգացմունքների, ի մասնավորի՝ հայ ազգի դեմ, այն դեպքում, երբ իրականում խոսքն ազգ՝ քաղաքական ու քաղաքացիական կատեգորիաների /այլ ոչ թե էթնոսի/ մասին է, որոնք սկսեցին դրսևորվել 19-րդ դարից սկսած:

19-րդ դարի վերջին, երբ Իտալիան վերամիավորվեց, նոր երկրի հայրերից մեկը՝ Դ'Արդգոլիոն, ասաց. «Մենք ստեղծեցինք Իտալիան, այժմ՝ պետք է ստեղծենք իտալացիներին»: Իսկ Լեհաստանի ապագա ազատարար գնդապետ Պիլսիդսկին, ասես շարունակելով այդ միտքը, ասում էր. «Ոչ թե ազգն է ստեղծում պետություն, այլ հակառակը՝ պետությունը՝ ազգ»:

Գրականության մեջ հանդիպող ազգ բառը հիմնականում օգտագործվում է որպես քաղաքական հասկացություն: Ամերիկյան և Ֆրանսիական հեղափոխությունների ազդեցության տակ՝ ազգի և պետության միջև հավասարության նշան է դրվում:

Ազգային պետություն հասկացությունը շրջանառության մեջ դրվեց 19-րդ դարում, որն առաջին հերթին նշանակում է ոչ թե «մեկ ազգ, մեկ պետություն», այլ այն, որ ազգը՝ հասարակության անդամները՝ քաղաքացիները, հպատակից վերածվում են քաղաքացու, մասնակցում պետության կառավարմանը, միավորվում՝ ընդհանուր շահերի ու մշակույթի շուրջ: Արևմուտքում դա են հասկանում ազգ հասկացության տակ, և ոչ երբեք՝ էթնիկական պատկանելիությունը, ինչի պատճառով էլ միջին հայի և արևմուտքի քաղաքացու միջև տեղի ունեցող «ազգային» խոսակցություններն ուղեկցվում են թյուրըմբռնումներով:

ժամանակակից աշխարհում ազգը քաղաքական հասկացություն է, որը զուգորդվում է պետության, քաղաքացիական իրավունքների և պարտականությունների հետ:

«ժամանակակից աշխարհում ազգ է համարվում քաղաքացիների այն հանրույթը, որի իրավունքները թույլ են տալիս նրան մասնակցել երկրի կյանքին՝ դրանով իսկ պետությունը դարձնելով հայտնի չափով իրենցը: Դեմոկրատիան թույլ տվեց պետությանը և իշխանություններին լուծել իրենց համար կենսական նշանակության մի խնդիր. սեփական քաղաքացիների մոտ ձեռք բերել լեգիտիմ կարգավիճակ անգամ այն դեպքերում, երբ քաղաքացիները դժգոհ են»: Մենք՝ հայաստանցիներս, լավ գիտենք, թե ինչ է լինում, երբ իշխանությունները կորցնում են այդ կարգավիճակը: Շարունակվող արտագաղթը թերևս

այն բանի վկայությունն է, որ մենք՝ որպես ազգ, վերոհիշյալ իմաստով դեռևս չենք ձևավորվել և ինքներս մեր երկրի տեր տակավին չենք զգում: Մենք կա՛մ խնդրողի, կա՛մ դժգոհողի կարգավիճակում ենք:

Այսպիսով, մեզ մոտ դեռևս բացակայում է ազգի ընկալումը ժամանակակից իմաստով. ակնառու են նաև քաղաքացիական հասարակության ձևավորման անտեսումը, միայն էթնիկական զգացմունքների վրա խարսխված, ոչ մի կոնկրետ պարտավորություն չենթադրող, եթերային, չկարգավորված պատկերացումների գերակայությունը: Մի՞թե զավեշտ չէ այն, որ նախկին «ապազգային» իշխանության օրոք այդքան քարոզվող անկախությունը «ազգայինների» օրոք ոչ միայն մոռացության է մատնվում, այլև երբեմն մատուցվում է քամահրանքով:

«Էթնիկական կապերը ոչ մի ընդհանուր բան չունեն ժամանակակից ազգի, այսինքն՝ ազգային պետության, կամ եթե կուզեք՝ ընդհանրապես պետության ձևավորման հետ: Կարելի է պնդել անգամ, որ այն ժողովուրդները, որոնք ցեղային բնորոշ հատկությունների կրողներնեն, ոչ միայն դիմադրել են դրսից իրենց պարտադրված ժամանակակից պետություն ստեղծելու փորձերին, այլև՝ հրաժարվել են ընդունել որևէ տիպի պետության անհրաժեշտությունը»:

Հարկ է նկատել նաև, որ որքան էթնիկական զգացմունքները և նպատակներն ավելի լայն են, ավելի եթերային ու իռացիոնալ, այնքան, ցանկության դեպքում, արտաքին որոշ ուժերի կողմից ավելի հեշտությամբ են օգտագործվում՝ խոչընդոտելով պետության կերտման և բարգավաճման գործին:

Այսօր Հայաստանը արտաքին ուժերի համար մի անպաշտպան դաշտ է, որտեղ կարելի է ազատորեն ներթափանցել տարբեր նպատակների համար: Նույնիսկ քաղաքական ուժերն իրենց ռազմավարությունները կառուցում են, ելնելով արտաքին ազդեցությունների տրամաբանությունից: Մենք անպաշտպան ենք, որովհետև մեր քաղաքական միտքը իռացիոնալ է, և բացակայում են քաղաքացիական արժեքները:

«Այնուամենայնիվ, ինչ կապ էլ գոյություն ունենա 19-րդ դարում մոդեռնիզացված պետության և ազգայնականության միջև, պետություններն ազգայնականության մեջ տեսնում էին պետական հայրենասիրությունից տարբերվող մի ուժ, որի հետ հարկ էր հաշվի նստել և ընդհանուր եզրեր որոնել: Եթե հաջողվում էր դա համակցել պետական հայրենասիրությանը, ապա կառավարության ձեռքին հայտնվում էր հիրավի հզոր մի ուժ: Քաղաքացիների շրջանում ազգայնական զգացմունքների տարածումը կառավարություններին ձեռնտու էր՝ ներքին խնդիրները լուծելու առումով: Եվ հակառակը, ոչինչ այդքան չէր խթանում ազգայնականությանը, որքան միջազգային հակամարտությունները»: Որոշակի դեպքերում ազգային զգացմունքները կարող են խթանել պետությանը՝ իր առջև դրված խնդիրները լուծելիս, որոշ դեպքերում, սակայն, վնասել նրա կենսական շահերին: Վերջին ժամանակաշրջանի պատմությունը լի է նման դեպքերով: Պետական հայրենասիրության և ոչ պետական ազգայնականության սերտաճումը քաղաքականապես շատ վտանգավոր նախաձեռնություն կարող է դառնալ... Պա-



ռադոքսային է, սակայն փաստ, որ, ըստ էության, 19-րդ դարում ծագած ազգայնականության նոր տիպը իր հավատարմությունն էր հայտնում ոչ թե կոնկրետ պետությանը, այլ պետության իր տարբերակին: Այլ կերպ ասած, ստեղծում էր որոշակի գաղափարական կոնստրուկցիա»:

Դաշնակցական տեսլականները, որոնք ութսունականներին սփյուռքից ներթափանցեցին Հայաստան, 19-րդ դարից պահածոյացված ազգային-հեղափոխական շարժումների մնացուկներն են, որոնց հակասությունները պետության հետ արտահայտվել ու դեռևս արտահայտվելու են: Այդ հակասությունները արտահայտվում են Դաշնակցության սփյուռքյան ու հայաստանյան թևերի միջև, ինչից դեռ հաջողվում է խուսանավել ներկուսակցական ճնշումների և կենտրոնացված կառուցվածքի շնորհիվ, սակայն դա երկար չի կարող տևել:

Նման հնացած ազգային կոնստրուկցիաներ է առաջարկում նաև Հայ Առաքելական եկեղեցին, որոնք կարող են ինչպես նպաստել պետության կայացմանը, այնպես էլ լրջորեն վնասել: Ցավոք, այսօր այդ դիսկրետ, չհամակարգված, քաղաքացիական հասարակության կայացումը խաթարող առաջարկները խոչընդոտում են պետության կայացմանը: Ըստ էության, փորձ է արվում վերականգնել ցեղակրոնական պատկերացումների վրա հիմնված համայնքի կոնցեպցիան, որը կարող է գոյատևել միայն իզոլացիայի պայմաններում, այն էլ որևէ երրորդ՝ շահագրգիռ կողմի ռեսուրսների առկայությամբ:

Այսօր մենք հայտնվել ենք այնպիսի իրավիճակում, որ քաղաքացիական-պետական արժեքները կարող են առաջացնել ազգային մտածողության բեկում, որը կարող է կանգնեցնել մեր գահավիժումը:

Ստեփան Դանիելյան

ՀԱՅ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՒ ՀԱՅ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆ ՀԱՆԴՈՒՐԺՈՂՈՒԹՅԱՆ ԵՐԿՈՒ՝ ԱՐԵՒԵԼՔ - ԱՐԵՒՄՈՒՏՔ ՄՈԴԵԼՆԵՐԻ ՄԻՋԵՒ

1.ԱՌԱՋԻՆ ՄՈԴԵԼ. ՄԻՋՆԱԴԱՐԻ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ

Մարդկային համակեցության ամենակարևոր արժեքներ են՝ արդարությունը և ազատությունը, որոնք անհնարին է պատկերացնել առանց հանդուրժողության: Հանդուրժողությունը հատկապես անհրաժեշտ է ճշմարտության որոնումների ժամանակ, քանզի կարծիքների ազատ փոխանակությունը ամենաանհրաժեշտ գործիքն է: Հակառակ դեպքում մեզ սպառնում է դոգմատիզմի կեղծիքը:

Հանդուրժողությունը հատկապես անհրաժեշտ է կրոնական հարցերում: Քրիստոնեության մեջ անհանդուրժողությունը մուտք գործեց աղանդների տարածման և եկեղեցիների պառակտման՝ «հերձվածների դարաշրջանում»: Ավելին՝ եկեղեցու և պետության միավորումը, որը նույն դարաշրջանի պրոցեսների արդյունք էր, հնարավոր է դարձնում մի կրոնական ուղղությունից մյուսի անցումը դիտարկել որպես պետական հանցագործություն կամ այլ տարբերակով՝ «ազգության» ուրացում: Ի պատիվ մեր եկեղեցու պետք է ասել, որ պատիժը հերետիկոսության համար բավական մեղմ էր. աղվեսադրոշմ, տուգանք և աքսոր, վիուկության մեջ մեղադրվելու համար նաև հարկադիր աշխատանքներ:

Բայց չի կարելի ասել, որ միջնադարը ծանոթ չի եղել կրոնական հանդուրժողությանը: Նույնիսկ Արևմուտքում աստիճանաբար անհնար է դառնում բռնի կրոնափոխությունը, որտեղ՝ 1150 թ. «GRATIANI…» դեկրետով արգելվում է բռնությամբ կնքելը: Միջնադարում հաճախ կարելի է տեսնել մահմեդականների և քրիստոնյաների, քրիստոնյաների ու հրեաների փոխհանդուրժողություն: Բացառություն էր արված իսլամում՝ հավատափոխի և քրիստոնեությունում՝ հերետիկոսների համար, որոնք օրենքի անունից, բայց անօրինական եղանակներով, մինչև 17-րդ դարը մահապատժի էին ենթարկվում: Հետ չէին մնում բողոքականները, որոնց ֆանատիզմը հաճախ հրահրվում էր պետության կողմից:

Միջնադարյան Հայաստանում կրոնական հանդուրժողությունը եղել է էական սկզբունք և ունեցել աստվածաբանական հենք: Աստվածաբան և առակագիր Վարդան Այգեկցին Ասորիքի Դլուք գավառում տիրող անհանդուրժողության մթնոլորտի առիթով 1215 թ. գրում էր. «Վասն շատահաջ քննողացն յանդիմանության» թուղթը: Նա գրում է. « …քանզի Հայն ասում է. «ես եմ լավ և ընտիր քրիստոնեան», և անմտությամբ հայհոյում է Հռոմին և Ասորուն: Իսկ Հռոմը հպարտությամբ ասում է, թե սրբու-

թյամբ, գիտությամբ և ուղիղ հավատով ինքը առաջին ազգն է և նախատելով ու հայհոյելով ասում է, որ հայն և ասորին քրիստոնեա չեն և նրանք Աստծուց բաժին չունեն: Իսկ Ասորին ծածուկ նենգությամբ և կեղծավորությամբ ասում է, որ ինքն է ընտիր քրիստոնեան, որն ունի անարատ հավատ և սուրբ կարգ, իսկ հայը և Հռոմը լեցուն են չար հերձվածով, օտար Աստծուն և անծանոթ Հիսուս Քրիստոսին և նրանք ժառանգելու են դժոխքը:» Վեճը ամփոփում է մահմեդականը. «...գալիս է Բաբելոնի խալիֆան և Հալեպի խատին... ասելով՝ դուք բոլոր քրիստոնեաներդ օտար եք Աստծուն և անծանոթ նրան:» Հանդիմանելով իր ժամանակակիցների անհանդուրժողությունը՝ ասում է. «Ինչո՞ւ չեք նայում Մուսուլմաններին, ուր բազմալեզու ազգերը խաղաղությամբ և սիրով առ իրար մի սահմանի և կարգի մեջ են և որը նրանց համար կարգավորեց ու սահմանեց նրանց առաջնորդ Մուհամեդը:»
Նա կոչ է անում չքննել միմյանց հավատը, սովորությունները, խորհուրդ տալիս չլինել անհանգիստ, կրոնը քննող և բանավիճող. թող, որ «այժմ որ ունի, այն է ինչ ունի»: Նրա իդեալը ստատուս քվոն պահպանելն է, որը խախտում են վերամկրտությունները ու խառը ամուսնությունները: Սա Կիլիկյան Հայաստանի լիբերալիզմի լավագույն դրսևորումներից է, որ ծագում է միարարությունից և ըստ Ն. Մառի գնահատականի, մի մթնոլորտ էր, որը «առլեցուն էր արևմտյան ոգով»:

Նման լիբերալ է նաև Տարսոնի եպիսկոպոս Ներսես Լամբրոնացին, որն իր «Թուղթ առ Լևոն» երկում /1194 թ./ գրում է. «...այս սնոտի ավանդությունը՝ քրիստոնեաների փոխադարձ չհաղորդվելը, իմաստունների գիտությամբ արհամարհեցի և նախապատվությունը տվեցի սիրուն. Հայը ինձ որպես Լատինացին է, Լատինացին որպես Հելլենացին է, և Հելլենացին՝ որպես Եգիպտացին, և եգիպտացին՝ որպես Ասորին»: Նույն թղթում նա հիշատակում է իր գաղափարների կողմնակիցներին, որոնք բնակվում են Հայաստանի բոլոր կողմերում՝ Վասպուրականում, Տարոնում, Եկեղիքում և Խաչենում:

Չնայած բուն Հայաստանի աստվածաբանների պահպանողական համբավին, նրանց ևս խորթ չէին հանդուրժողության գաղափարները: Մխիթար Գոշը, միջնադարյան Հայաստանի նշանավոր աստվածաբաններից և իրավագետներից մեկը, 1206 թ-ին իր մի երկում, որը պատասխան էր վրացի եպիսկոպոս Արսեն Վաչեսձեի «Երեսուն գլուխ Հայոց հերձվածին» թղթին, որը լեցուն էր կրոնական անհանդուրժողությամբ: Հայկական աստվածաբանական մտքում Մխիթար Գոշի ներմուծած հիմնական նորույթն այն է, որ ի տարբերություն իր նախորդների, երկաբնակ եկեղեցին այլևս հերձված չի համարում: Նա գրում է. «5 ազգերը՝ հույները, հոռոմները, հայերը, ասորիները և վրացիները այնքան պատճառ չունեն, որ նրանց հավատը կամ ծեսերը Աստված համարի անընդունելի և չճանաչի յուրաքանչյուրի արժանավորությունը:» Եւ եթե միաբանությունը անհնար է, ապա գեթ հարկավորէ միմյանց թշնամի չլինել: Նկատենք, որ նրա օպոնենտի բառապաշարն էր. «ամենայն չար Հայք, անաստվածներ և զազրելիներ», իսկ Հայկական եկեղեցին՝ «սատանայի ժողովարան»: Դժվար չէ նկատել, որ այս հեղինակը չի տարբերում դավանանքը և ժողովուրդը, ի տարբերություն Մ. Գոշի: Գոշը գրում է.«Չկա ազգ, որ բարի

կարգ և խոտան չունենա:» «Հույները իմաստուն են և գթասիրտ՝ Հովհան Ոսկեբերանից սովորելով, Հոռոմները զգաստ են աղոթքից և հնազանդ առաջնորդներին, Ասորիները խոնարհ են և ճգնող, Հայերը պահեցող և ողորմած գերիների և եկեղեցականների հանդեպ, սրբություն սիրող, Վրացիները՝ սրբերը և վանքերը մեծարող, առաջնորդներին չբամբասող», հայերը անհնազանդ են իրենց առաջնորդներին, բայց սուրբ պատարագ ունեն, վրացիները պատվում են կնքահորը, չնայած այն կանոնական չէ և ոչ առանց սրամտությամբ նկատում, որ. «Հույները և Վրացիները առավել պատվում են պատկերները, իսկ Հայերը՝ Խաչը:» «Եվ «ինչպես հայերը Խաչը անարգեցին արհամարհելի ամեն տեղ դնելով, այնպես էլ հույները և Վրացիները՝ պատկերը, որը հայերն էլ գիտեն, ընդունում են և պատվում» : Նրա եզրակացությունն է.«Լավ է, թե այն ընտրեք վերացնել թշնամությունը, բարեկամ լինել և միմյանց կարգը չհայհոյեք:»

Այն խնդիրը, որը լուծում էին միջնադարյան հայ աստվածաբանները, այսօր նորովի է կանգնած ժամանակակից հայ եկեղեցու առաջ. մարմնավորել նոր քրիստոնեական միասնությունը արդի Հայաստանի մշակութային և հասարակական բազմազանության հենքի վրա: Անտրոպոսոֆիան, Եհովայի վկաները և այլ աղանդները, նեոհեթանոսությունը, նոր սոցիալական խմբերը. ահա հանդուրժողության առաջ ծառացած այն խնդիրները, որ առանց իր միասնության և ճշմարտության տեսլականը վտանգելու պետք է լուծի Հայ Առաքելական եկեղեցին: Ընդորում, այն հիմնելով հանդուրժողության ժամանակակից ըմբռնման վրա:

2. ԵՐԿՐՈՐԴ ՄՈԴԵԼ. ՌԵՖՈՐՄԱՑԻԱՅԻՑ ՄԻՆՉԵՎ ԳԼՈԲԱԼԱՑՈՒՄ

Հանդուրժողականության ժամանակակից ըմբռնումը Արևմուտքում ծագում է Ռեֆորմացիայի դարաշրջանում, երբ նրա համար գտնվում է նոր հիմնավորում: Այս դարաշրջանում է վերահիմաստավորվում եկեղեցու և պետության կապը, իդեալական հասարակության միջնադարյան պատկերացումը, որը դավանում է ճշմարիտ հավատ և պայքարում թշնամի այլախոհների ու հերետիկոսների դեմ: Այդ նոր գաղափարների կրողներն էին Նիկոլայ Կուզանացին, Դանթեն, Սեբաստիան Կաստելլոն և այլոք, որոնք առաջինը դատապարտեցին կրոնական դիսիդենտների դեմ բռնությունների գործադրման պրակտիկան: Որոշ աղանդներ սկսում են անմիջականորեն պայքարել ամեն մի անհատի կրոնական ազատության համար՝ վկայակոչելով Սուրբ Հոգին:

Բայց նոր իրադրության ամենահիմնական գիծը այն է, որ երկրորդ պլան են մղում աստվածաբանական փաստարկները՝ իրենց տեղը զիջելով քաղաքական, բնական և գործնական փաստարկներին: Հանդուրժողության Ռեֆորմացիայի նվաճումները ամփոփվում են 1555 թ. Աուգսբուրգի կրոնական Ժողովում և 1598 թ. Նանտի էդիկտում: Բայց նույնիսկ Անգլիայում մինչև 19-րդ դարը կաթոլիկները երկրորդ կարգի քաղաքացի էին: Բուրժուական դարաշրջանում, ոգևորված համընդհանուր բանականության և ազատության գաղափարներով, ավանդական եկեղեցիների դավանաբանական և քաղաքական անհանդուրժողականության դեմ հանդես են գալիս Սպինոզան, Միլտոնը, Լոկկը, Վոլտերը, Լեսսինգը և Շիլլերը:

Արևմուտքում՝ նույնիսկ այդ դարաշրջանում, լիակատար հանդուրժողություն չի եղել: Օրինակ, բացառություն է արվել աթեիստների համար. չէ՞ որ նրանք չէին կարող երդվել Սուրբ Գրքի վրա: Այսպիսով անհանդուրժողության հիմնական կրողը պետությունն էր:

Անհանդուրժողության մեծագույն աղբյուր Նոր ժամանակներում եղել է եվրոպական էթնոցենտրիզմը: Իտալացի գրականագետ և գրող Ումբերտո Էկոն /U. ECO/ գրում է. «Մի՞թե այդպես չի անցել սպիտակ մարդը իր քաղաքակրթելու ծանրամարս մղումով և տրորել հին, բայց մեր քաղաքակրթությանը չնմանվող մշակույթները:» Օտարի փիլիսոփայությամբ զբաղվող B. Waldenfels-ը ավելի դիպուկ է. «…/եվրոպական էթնոցենտրիզմի/ PACIFICATO տրիումֆները ունեն երկարատև և համաշխարհային պատմություն: Գովելու պատճառ չունի և ոչ մի եվրոպական ազգ: Հուսադրում է, որ հանուն ճշմարտության կատարված այդ բռնությունների դատապարտումը ևս պատկանում է եվրոպական ավանդույթին:»

Հայկական հասարակությունում հանդուրժողության նոր հիմնավորում և նոր մոդելը, ըստ իս, պետք է փնտրել նոր իրողությունների՝ բուրժուական հարաբերությունների և գաղափարախոսությունների ոլորտում: Եթե վերոհիշյալ, միջնադարից եկող մոդելը պայմանականորեն անվանենք արևելյան և որի սահմանները որոշվում էին ավանդական աստվածաբանության շնորհիվ: Այն հիմնված էր՝ լավագույն դեպքում այլադավան մուսուլմանական միջավայրում ստատուս քվոյի պահպանման գաղափարի վրա: Լուսավորականության գաղափարների մուտքով արդիական են դառնում նոր փաստարկներ՝ հիմնված համընդհանուր բանականության և ազատության սկզբունքների վրա: Օրինակ, հայ դասական գրող և ազգայնականության գաղափարախոս Ռաֆֆին կոչ էր անում հաղթահարել դավանական նախապաշարումները և հայության ազգային շրջանակի մեջ վերադարձնել նաև իսլամ հայերին: Բնութագրական է այդ մտահղացման տապալումը:

Նոր իրողությունները ծնում են ոչ միայն հանդուրժողության նոր ձևեր այլ նաև՝ նոր անհանդուրժողություն: Այս անգամ փորձաքարը արևմտյան քաղաքակրթությունն էր, որ տեղի էր տալիս հակասական զգացումների՝ հաճախ հարուցված արևմտյան էթնոցենտրիզմի, գաղութարարության և կապիտալիզմի արատների պատճառով: Գոյապահպանությունը անկայուն միջավայրում հայ մտավորականներին դրդում էր Արևմուտքում փնտրել նոր յուրայինների: Նրանց թվում էր, որ քաղաքակրթության հաղթանակով Հայաստանը կազատվի իր գոյությանը սպառնացող վտանգներից՝ իր հարևանների անհանդուրժողությունից և ձեռք կբերի իրեն այդքան անհրաժեշտ ազատությունը. «...Հյուսիսափայլի սրտի դավանությունը այսպես է, որ Հայոց կյանքի պղտոր ջուրը, …, պիտի պարզվի և պայծառանա մի օր, որ անպիտանք սևերես եղած փախստական լինին և ազգի ընտիրքը երևին և հաղթող հանդիսանան, և այսպես ազգը օր ավուր հառաջադեմ լինի ամենայն բարելավության մեջ, և ժամանակով մի պատվելի տեղ գրավե յուր համար մարդկության քաղաքացյալ ազգերի շարքումը:» / Ս. Նազարյան. «Վերջաբան Հյուսիսափայլի 1858 թվականի».// Նույն տեղում, էջ 77/: Մեկ այլ հեղինակ գրում է. «Ոչ թե մեր ույժին վրա միայն վստահու-

թյուն ունինք կամ մեր, այլ վասնզի կը հուսանք որ անըմբռնելի թշնամիին զենքը օր մը պիտի խորտակվի ճշմարտության վահանին վրա, ի վերջ հայրենասերք պիտի սթափին և մեր հայրենքին զարգանալուն համար ընդունին այն ամեն օրենքները, որք Եվրոպայի լույս, ույժ և բարօրություն կուտան»: / Ս. Ոսկանյան. « Հառաջաբան ».// Նույն տեղում, էջ 82/:

Եվրոպական նոր գաղափարները, այնուամենայնիվ, օտար էին հասարակության հիմնական զանգվածի համար, ինչպես Հայաստանն էր անծանոթ եվրոպացիներին: Ըստ էության, նրանք օտար էին, բայց քանզի հույսը նրանց վրա էր, ապա «Օտարի» խորհրդանիշը սպունգի նման ներծծում էր օդում կախված մեր հայրենակիցների վախը և մտահոգությունը, արժանապատվության զգացումը և աշխարհին բացվելու ցանկությունը, այն բացատրում մեր նմանությունը այլոց, հատկապես եվրոպացիներին, և մեր անջնջելի տարբերությունը նրանցից՝ մեր ինքնությունը:

Վերը ասվածի համար լավագույն օրինակ կարող է հանդիսանալ Աբգար Հովհաննիսյանի 1879 թ. Մայիսի 17-ին Թիֆլիսում կարդացված «Հայը և Հայաստանը օտարների աչքերում» հրապարակային դասախոսությունը: Մասնավորապես կարդում ենք. «Նորագույն ժամանակները բազմաթիվ օրինակներ է ներկայացնում, որոնցից երևում է, թե այս կարգի [սեփական վիճակից դժգոհ] ժողովուրդների օգնության աղաղակները միշտ արձագանք են գտել քաղաքակիրթ աշխարհի մեջ, և որքան նոցա գործ դրած ջանքերը մեծ են եղել, այնքան ավելի համակրության արժանի են եղել, համակրություն որի մեջ ջերմ խոսքին հաճախ հետևել է և գործը»[Ա. Հովհաննիսեան. «Հայը և Հայաստանը օտարների աչքերում», Թիֆլիս: 1881 թ.;]: Այսպիսով, «համակրանքը» և «ջերմ խոսքը» քաղաքակրթության օրինաչափ բնութագիրն են հանդիսանում: Ի տարբերություն իր հարևանների Եվրոպան հեռու է, դեռևս օտար. «Եվրոպան հատուկտոր, անճիշդ և շատ անգամ սխալ տեղեկություններ ունի մեր մասին» /էջ 12/: Սակայն լավատեսական եզրակացությունը ջնջում է տագնապի նշույլը. «բայց և այնպես հին քաղաքակիրթ ազգ լինելով՝ մենք այնպիսի հատկությունների տեր ենք, որ լուսավորված օտարի աչքից չէին կարող վրիպել:» Լիբերալ- լուսավորական օպտիմիզմը չէին կիսում ազգայնականները: Ռաֆֆին, նույն տարիներին գրված իր «Կայծեր» վեպում, միանգամայն այլ եզրակացության է գալիս: Վեպի հերոսի՝ Ասլանի կարծիքով. «Եթե դուք ... կարդայիք, թե ի՞նչ են գրում եվրոպացի ճանապարհորդները թուրք ժողովրդի և թուրք պաշտոնյաների մասին, դուք այդ ճանապարհորդներին կատարյալ խելագարի տեղ կդնեիք ... Որքան մահմեդական ժողովրդի ներկայացուցիչները շնորհալի են օտարները գրավելու մեջ, այնքան մերոնք կոպիտ և անշնորհք են: »[Ռաֆֆի.«Երկերի ժողովածու: 12 հատորով»,հատ. 6;Եր.:1986 թ]: Ռաֆֆու հոռետեսությունը հետևանք է իր ազգայնական գաղափարախոսության՝ հիմնված սոցիալ-դարվինիզմի սկզբունքների վրա:

Օտարը չի կարող մեզ հասկանալ. որպեսզի նա հասկանա, մեզ հարկ է կեղծել սեփական վարքը՝ հարմարվել. «Բայց մեզ համար մեծ նշանակություն ունի Եվրոպայի կարծիքը: Իհարկե, մենք չէինք ցանկանա մահմեդականների նման խաբել նրանց, բայց

կցանկանայինք, որ նրանք լավ հասկանային մեր դրությունը: Արդյունավետը զգացումները թաքցնելն է, որի անխուսափելի արդյունքը ինքնամփոփվելն է: Օտարականը ունակ չէ ճշմարիտ հասկացման, նրա ջանքերը մշտապես վերածվում են սխալների կատակերգության:

Հասարակության աճող դիֆերենցացիան, էկզիստենցիալ օտարացման զգացումը, սոցիալական և քաղաքական օտարացումը, նախկինում ուղղակի ընկալված բառը վերածում են փոխաբերության և սիմվոլի:

Օտարը սոսկ ազգային տագնապի փոխանակման համարժեքն է, այն մշտապես բավարար չափով ջերմ չէ, մերձ չէ, սառն է՝ սառնությունը չափում է տագնապի աստիճանը: Այս երանգները հստակ զգացվում են նաև դարասկզբի հայ դասական բանաստեղծ Վ. Տերյանի մոտ. «Չի հասկանա ձեր հոգին և ծույլ և օտար/ Տաճար է մեր երկիրը՝ սուրբ է ամեն քար»/]. Վ. Տերյան. «Երկեր»; Եր.: 1989 թ./ կամ՝ «Թող հնչե երգն այդ դառն ու ցավագին/ Երգը հայրենի՝ ցավագար ու հին/ Մեզ չի՛ հասկանա օտարերկրացին/ Մեզ չի՛ հասկանա սառն օտարուհին»/ : Սա հոռետեսություն է ծնված 1915 թ. աղետից. «Մի հարց, որ իմ մեջ այսպես է ձևավորվում. «Մի՞թե վերջին պոետն եմ ես,/ Վերջին երգիչն իմ երկրի ...»: Եվ հիրավի որ մենք կանգնած ենք խոշոր, գուցե ճակատագրական գալիքի առջև ...»

Դ. Վարուժանի «Կիլիկյան մոխիրներուն» բանաստեղծության մեջ վերոհիշյալ տրամաբանությունից է հետևում օտարականի հայտնվելու անհրաժեշտությունը. «Օտարակա՛ն, բարձրանանք սա դիմացի լերան վրա/ ...»: Նրանք տեսնում են, որ. «... Արդ տաճարները ո՞ւր են՝ որոնց բուրյան գմբեթին/ Ներքև ծիծառն հազիվ հազ գարնան աղոթքն էր ըրեր./ Ո՞ւր վարժոցներն ու պալատն ապագայի լույսերուն./ ...»:/ Դ. Վարուժան. «Երկերի լիակատար ժողովածու: 3 հատորով», հատ. 1; Եր. : 1986 թ.; էջ 147-էջ 151:/ Նա ևս հոռետես է օտարի ըմբռնելու կարողության վրա: Այն, ինչ կարող է խոստանալ օտարը՝ վկայությունը. «... չմոռնա՞ս/ Անոնց ըսել թե ինչպես Կիլիկիան մորթեցին/ ...» դրժվում է, բայց որի փոխարեն օտարները «Պիտ՝ուզեն լոկ մեր կույս, ատոք լեռները պեղել,/ ...»:

Օտարի նկատմամբ այս անվստահությունը ի վերջո անվստահություն է այն արևմտյան արժեքների, այդ թվում հանդուրժողության նոր ըմբռնման և վերադարձ ինքնամփոփ հասարակության իդեալին: Չպետք է թերագնահատել, հատկապես՝ ազգային դասական գրականության դերը օտարի, օտար մշակույթների, պատմականորեն չավանդված մշակութային ձևերի նկատմամբ հասարակության պատկերացումների ձևավորման մեջ, ազգայինը և հակաազգայինի օպոզիցիան սահմանելու գործում:

Միջմշակութային փոխազդեցության և հանդուրժողության համար օգտակար կարող է լինել արդեն հիշատակված B. Waldenfels-ի առաջարկած INTERMONDE՝ միջև-աշխարհ հասկացությունը: INTERMONDE-ն «սեփական» և «օտար» մշակույթների «միջև» ոլորտն է, ուր տարրերը փոխկապակցված են, յուրաքանչյուրը գտնում է իր «իմը» միայն այլոց, որը բացառում է իրական կամ երևակայական կենտրոնը: Նա հիշատակում է ճապոնացի հոգեբույժ B. Kimura-ին. «Ով եմ ես և ով ես

դու, ինչ արժեմ ես և ինչ արժես դու, լուծում է ամեն մի պարտնյորի համապատասխան «միջևը» ... «սեփականը» միշտ «միջևի» նման է, «միջևը»՝ սեփականի նման:» Ճշմարտությունը վերոհիշյալ երկու տեսակետների միջև է, որը բացառում է այն ունիվերսալ ատյանի գոյությունը, ուր մի ինչ որ ունիվերսալ լոգոս՝ բանականություն հանդես է գալիս որպես համընդհանուր, ընդգրկող իմի և այլոց տարբերությունը և վեր է կանգնած այդ տարբերությունից:

Ազգայնական մտածողությունը պոստուլատ է ընդունում, որ աշխարհում իրական է ազգային, կրոնական, քաղաքակրթական անհանդուրժողությունը, հետևաբար՝ հարկ է լինել զգոն և անհանդուրժող անհատի և օտարների հանդեպ: Այդ պոստուլատը առայսօր իր ուժը պահպանում է 1915թ Աղետի և քաղաքական իրավիճակով պայմանավորված տագնապի զգացումի շնորհիվ: Արդի Հայաստանում ամենևին էլ կրոնական դոգմատները չեն, որ հարուցում են անհանդուրժողություն: Նոր աղանդները և նմանատիպ երևույթները, հարուցելով նախկինում անհայտ բազմազանություն, առաջին հերթին վտանգում են ազգային միասնության դոգմատիկ պատկերացումները: Ազգայնականությունը Հայաստանում ևս կարիք ունի մշակելու ազգային միասնության նոր պատկերացումներ, կամ ինչպես ընդունված է ասել նրա տեսաբաններին կողմից, տալ նոր «ազգային նկարագիր», որը ավելի հանդուրժող է առկա բազմազանության հանդեպ:

Թոլերանտությունը՝ հանդուրժողականության գաղափարը պարտադիր ուղեկցվում է պլյուրալիզմի՝ բազմազանություն հասկացությամբ: Պլյուրալիզմը հասարակության մեջ հավասարարժեք, համադիր և հակադիր տարրերի, բարձրագույն կազմակերպչական սկզբունքից՝ միասնությունից զուրկ վիճակն է: Արևմուտքում այն ծագում է Ռեֆորմացիայի հարուցած կրոնական բազմազանությունից: Լուսավորականությունը, բուրժուական և արդյունաբերական

հեղափոխությունները պատճառ դարձան քաղաքական, գաղափարական, սոցիալական, սեքսուալ բազմազանությանը: Այս խմբերը, հակազդելով և փոխազդելով միմյանց հետ, հանգելով համընդհանուր համաձայնության՝ կոնսենսուսի, պլյուրալիզմին հաղորդում են նորմատիվ բնույթ:

Դա նշանակում է, որ բազմազանությունը և տարբերությունները ճանաչվում և հավանության են տրվում:

Ոչ քաղաքական, ոչ հասարակական, ոչ կրոնական պլյուրալիզմը ինքնանպատակ չեն. նրանք կոչված են պաշտպանելու քաղաքացիների ազատությունները և երաշխավորելու յուրաքանչյուրի ազատ կյանքի հավասար իրավունքը: Պլյուրալիզմի նորմատիվ բովանդակությունը հանդուրժողությունը կյանքի կոչելն է:

Եթե պլյուրալիզմը երաշխավորում է բազմազանության գոյությունը, ապա հանդուրժողությունը՝ հարգանքը այլոց կարծիքի և վարքի նկատմամբ, հատկապես այն բանի համար, որ նրանք այլ են, տարբերվող: Միայն այս դեպքում է իրապես հարգվում ամեն մեկի ազատության և արժանապատվության սկզբունքը: Իրապաշտ լինելով, նկատենք, որ նորմատիվ մոտեցումը վերջնականապես չի լուծում հանդուրժողության թնջուկը: Կրկին հիշելով Ոհ. էկոյին, ըստ որի. « Ամենասարսափելի անհանդուրժողությունը աղքատ մարդ-

կանց անհանդուրժողությունն է. հատկապես նրանք են առաջինը դրսևորում անհանդուրժողություն: Հարուստներին անհանդուրժողություն բնորոշ չէ: Հարուստները, առավելս ստեղծել են ռասիստական տեսություններ, իսկ աղքատ մարդիկ ստեղծել են շատ ավելի վտանգավոր ռասիստական պրակտիկան»:

Միջնադարում ակտուալ կրոնական հանդուրժողությունը այսօր աշխարհիկացման՝ սեկուլյարացման պատճառով պարզապես դարձել է տարբեր կրոնական ուղղությունների համակեցության խնդիր: Այն երկրորդված է ավելի գերակա՝ անհատի իրավունքների և ազատությունների սկզբունքին:

Անհանդուրժողության նկատմամբ վերաբերմունքը զգալի փոխվեց Խոլոկոստից հետո: Քրիստոնյաների անհանդուրժողությունը հրեաների նկատմամբ առանձնահատուկ է եղել: Հրեաները դիտվում էին պատասխանատուներ Քրիստոսի չարչարանքների համար, և աստվածաբանները հաճախ են նպաստել նրանց հալածանքների սաստկացմանը: Հայր Վալդեմար Խրիստովսկին գրում է. «Holocoust-ը ստիպում է քրիստոնյաներին հասկանալ, որ սեփական ինքնահաստատումը չպետք է կատարվի այլ կրոնական աշխարհաճանաչողության բացասումով, այլ՝ մարդկանց սեփական անկրկնելիության և արժանապատվության ստորացման ճանապարհով:»

Ներկայի իրողությունները և անցյալի դառը փորձը ստիպում է աստվածաբաններին նորովի նայել կրոնի և հավատի ընձեռած հանդուրժողականության լայնացման հնարավորություններին: Ռաբբի Սիմոն Լաուերը գրում է. «Ես չեմ կարող հավատալ ինչպես քրիստոնեան, բայց եթե ես պաշտպանում եմ հավատալու իմ իրավունքը և իմ հավատով ապրելու իրավունքը, ապա ես պետք է ընդունեմ այդ իրավունքը ցանկացած այլ մարդու համար: Դա նշանակում է, որ կա մի որոշակի COMMUNION FIDELIUM- հավատացյալների համամասնակցություն»:

Այն, որ կրոնը կարող է լինել անտագոնիզմի աղբյուր, հայտնի է: Բայց այն, որ և՛ քրիստոնյան, և՛ հրեան, և՛ մուսուլմանը հավատում են, մատնանշում է նրանց մարդկային էության ավելի մեծ ընդհանրությունը, քան՝ մարդկային գործունեության այլ բնագավառները: Այդ լավ է երևում բիզնեսի, և նույնիսկ՝ արվեստի հետ համեմատելուց, որոնք հիմնված են մրցակցության և հաջողության սկզբունքների վրա: Կրոնը ավելի վեր է՝ ապահովելով կրթված և անկիրթ, հարուստ և աղքատ մարդկանց միասնությունը, թույլ չտալով հասարակական և մշակութային տարբերությունների բացարձակացումը:

Դժվար չէ տեսնել, որ հանդուրժողությունը հիմնված լինելով հաղորդակցության ու փոխհասկացման իդեալների վրա՝ ամեն անգամ տրանսֆորմացվում է հաղորդակցական նոր միջոցների հայտնվելուն զուգահեռ: Հաղորդակցության նոր միջոցները հնարավորություն են տալիս շփվելու մինչև վերջերս անմատչելի հասարակական, ազգային, կրոնական և մշակութային հավաքականությունների հետ: Այս առումով հատկանշական է գլոբալացման երևույթը, որը արդեն հասցվել է դիտարկվել որպես մութ ուժերի դավադրություն՝ ուղղված մեր ազգային մշակույթի դեմ:

Միջմշակութային փոխազդե-

ցությունը և կրոնական անհանդուրժողությունը այսօր ծավալվում են գլոբալացման երկիմաստ երևույթի ֆոնի վրա: Ֆերեշեթ Դավթարին գրում է. «Երբ ոմանք անիծում են գլոբալացումը, որպես գաղութացման նոր ձև, հիմնված սպառողական հոգեբանության վրա, որպես նոր միջազգային տիրապետություն, մյուսները այն ողջունում են որպես պետությունների կողմից օպրեսիայի թուլացման և տեղական մշակույթների ազատագրման գործոն: Հոռետեսները գլոբալացումը համարում են բազմազանությունը ճնշող գործոն, իսկ լավատեսները՝ դրանց բազմացման խթան: Կան տարակարծություններ՝ արդյոք երևույթը նոր է, թե՞ հին, եվրոպամետ է, թե՞ հակված ամերիկյան կապիտալիզմին, հակասական է, թե՞ ազատագրական»: Բայց պարզ է, որ գլոբալացումը նոր մոտեցումներ է պահանջում ինքնության և «սեփական մշակույթի» նկատմամբ:

Ո՞րն է մեր տարածաշրջանի՝ Անդրկովկասի և Միջին Ասիայի ու Ղազախստանի առանձնահատկությունը արծարծված խնդիրների տեսանկյունից: Տեղադրված լինելով Արևմուտքի և Արևելքի, Հարավի և Հյուսիսի միջև՝ այն կազմում է հանդուրժողության յուրատեսակ աշխարհաքաղաքական աշխարհ՝ Intermonde: Այս տարածաշրջանի համար նկատելի է Ռուսաստանի երբեմնի մշակութային հեգեմոնիան, մասնավորապես՝ խորհրդային ժառանգությունը: Խնդիրների մի մասը ծագում է Ռուսաստանի երկակի բնույթից. մի կողմից Ռուսաստանը անպայման Եվրոպան է, մյուս կողմից՝ ձգտել է ընդգծել իր քաղաքակրթական ինքնատիպությունը, ընդհուպ մինչև՝ Արևմուտքին հակադրվելը և մեսիանական նկրտումները: Նմանապես 1917թ-ի հեղափոխությունը երկաթե վարագույրով անջրպետեց նաև այս տարածքը մնացյալ աշխարհից, մշակույթի և այլ ասպարեզներում ծնեց այլասերված՝ տոտալիտար երևույթներ՝ կրելով նաև զգալի ազատագրական լիցք: Որպես Intermonde այն օրինակելի է համաշխարհային զարգացումների համար:

Դա երևում է և՛ Ռուսաստանի, և՛ ԱՄՆ-ի աճող հետաքրքրությամբ այս տարածաշրջանի հանդեպ: Եվ հետաքրքրությունը զուտ տնտեսական չէ: Այս տարածաշրջանում առկա հակամարտությունները համաշխարհային պրոցեսների մինի մոդելներն են, իսկ քաղաքակրթական բազմազանությունը՝ ապագա խաղաղ և հանդուրժող համակեցության գրավականը:

ՎԱՐԴԱՆ ՋԱԼՈՅԱՆ, 2002 թ.



ԱՐԻԱԿԱՆ
ՄԱՀՎԱՆ ՎՃԻՌ
Սույն վճռով մահվան ենք դատապարտում աղանդավորական շարժումներին՝ ՀԱՅ ցեղը քայքայելու և մասնատելու համար
ՄԱՀ
աղանդներին և նրանց անդամներին
ՀԱՅ ՑԵՂԱՊԱՇՏՆԵՐ

ՀԵԼՍԻՆԿՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՍԱՄԲԼԵԱ
ՎԱՆԱՁՈՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ
HELSINKI CITIZENS` ASSEMBLY
VANADZOR OFFICE

18 մարտի 2006 թ.

Վանաձորի ոստիկանության բաժնի պետ Ա. Համբարյանին
Կից ուղարկվում է Լոռու մարզի դատախազ Ա. Ղազարյանին

Հարգելի պարոն Համբարյան

Մեր ձեռքին է հայտնվել «Հայ ցեղապաշտներ» անվամբ խմբի կողմից Վանաձոր քաղաքում տարածված հայտարարության տեքստը, որը հասարակության մեջ հարուցում է կրոնական թշնամանք /կից ներկայացվում է/:

Տվյալ հայտարարությունը հանդիսանում է ՀՀ Քր. օր-ի 226-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով արգելված, քրեորեն հետապնդելի արարք, այն է՝ ազգային, ռասայական կամ կրոնական թշնամանք հարուցելուն, ռասայական գերազանցությունը կամ ազգային արժանապատվությունը նվաստացնելուն ուղղված գործողությունները, որոնք կատարվել են հրապարակայնորեն կամ լրատվության միջոցներ օգտագործելով:

Տվյալ հայտարարությունները և գործողությունները անհարիր են Եվրոպական Խորհրդի անդամ պետության որդեգրած սկզբունքներին: Սույնով ոչ միայն ցանկանում եմ Ձեր ուշադրությունը հրավիրել նման քայլերի անթույլատրելիության փաստին, այլ նաև ցանկանում եմ տեղեկանալ, թե ոստիկանությունը ինչ քայլեր է ձեռք առել նման բնույթի հայտարարությունը տարածողներին հայտնաբերելու և պատասխանատվության ենթարկելու ուղղությամբ:

Հարգանքներով՝

Կազմակերպության նախագահ Ա. Սաքունց

ՈՐՈՇՈՒՄ

քրեական գործի հարուցումը մերժելու մասին

22.04.2006թ. *ք. Վանաձոր*

Լոռու մարզի դատախազ, արդարադատության առաջին դասի խորհրդական Ա. Ղազարյանս, վերանայելով Վանաձոր քաղաքի բնակիչներ Մանվել Գագիկի Կոստանդյանի և Հայկ Հովիկի Հակոբյանի կողմից Վանաձոր քաղաքում թռուցիկներ տարածելու փաստի առթիվ նախապատրաստված նյութերը.

ՊԱՐԶԵՑԻ

31.03.2006թ. Լոռու մարզի դատախազությունում Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակից հաղորդում է ստացվել «Հայ ցեղապաշտներ» անվամբ խմբի կողմից Վանաձոր քաղաքում կրոնական թշնամանք հարուցող թռուցիկներ տարածելու փաստի առթիվ:

Նյութերի նախապատրաստման ընթացքում պարզվել է, որ Վանաձոր քաղաքի բնակիչներ, 1985թ. ծնված Մանվել Գագիկի Կոստանդյանը և 1989թ. ծնված Հայկ Հովիկի Հակոբյանը Գարեգին Նժդեհի գաղափարախոսության կողմնակիցներն են ու տարիներ շարունակ ուսումնասիրում են Լավրենտի Բարսեղյանի խմբագրած արխիվային փաստաթաթերը՝ «Հայոց Մեծ եղեռնի» հետ կապված: Արդեն երիտասարդ տարիքում հայկական մամուլում տպագրել են բազմաթիվ հոդվածներ՝ հայոց ցեղասպանության կապակցությամբ, որոնցում կոչ են անում հայ երիտասարդությանը «ապրել հանուն հայրենյաց և հանուն հավատոյ»:

2006թ. փետրվարին որոշել են որևէ ազգանվեր գործունեություն ծավալել և ՀՀ-ում գործող և օրեցօր զարգացող աղանդավորական շարժումներին ահաբեկել՝ իրենց կարծիքով վերջիններիս կողմից «Հայ առաքելական եկեղեցուց հայորդիներին շեղելու ու հայ ազգի ներկայացուցիչներին միմյանցից մասնատելու» պատճառով: Մ. Կոստանդյանն ու Հ. Հակոբյանը դեմ են «Եհովայի վկաներ», «Շաբաթապահ գալստականներ» աղանդավորական շարժումների գաղափարախոսությանն այն իմաստով, որ վերջիններս իրենց անդամներին քարոզում են չզորակոչվել ՀՀ ԶՈՒ, շաբաթ օրերին թույլ չեն տալիս հաճախել կրթահամալիրներ, Հայ Առաքելական եկեղեցու սպասավորներին համարում են «սատանայի սպասավորներ» և այլն: Վերը նշված պատճառներով Մ. Կոստանդյանն ու Հ. Հակոբյանը պատրաստել են թռուցիկներ «Մահ աղանդներին» խորագրով ու 13.03.2006թ. առավոտյան փակցրել Վանաձոր քաղաքի մարդաշատ վայրերում: Վերջիններս նպատակ չեն հետապնդել կրոնական թշնամանք հարուցելուն ուղղված գործողություններ կատարել, այլ անուղղակի ձևով խախտել են աղանդավորական շարժումների ներկայացուցիչների իրավունքներն ու ազատությունները, որով սակայն վնաս չեն պատճառել անձանց օրինական շահերին:

Ճիշտ է՝ Մ. Կոստանդյանի և Հ. Հակոբյանի արարքում պարունակում են ՀՀ քր. օր.-ի 143 հոդ. 1-ին մասով նախատեսված հանցագործության հատկանիշներ, բայց քանի որ նրանք զղջում են իրենց արարքի համար, խնդրում մեղմ վերաբերվել, նախկինում արատավորված չեն, Հ. Հակոբյանը դեռ անչափահաս է, ուստի՝ ղեկավարվելով ՀՀ քր. դատ. օր. 37 հոդ. 1-ին մասի 1-ին կետով.

ՈՐՈՇԵՑԻ

1. Մանվել Գագիկի Կոստանդյանի և Հայկ Հակոբյանի կողմից թռուցիկներ տարածելու փաստի առթիվ նախապատրաստված նյութերով մերժել քրեական գործի հարուցումը՝ գործուն զղջալու հիմքով:

2. Որոշման մասին հայտնել ՀՀ գլխավոր դատախազություն և Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակին:

ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԴԱՏԱԽԱԶ,
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ԴԱՍԻ ԽՈՐՀՐԴԱԿԱՆ *Ա. ՂԱԶԱՐՅԱՆ*

«Պարոն Սաքունց, Ձեզ մահվան ենք դատապարտում: Ձեր մեջ հարց կառաջանա՝ ինչու՞: Ասենք: «Քաղաքացիական նախաձեռնության» վերջին համարում կրոնների վերաբերյալ ինչ-ինչ ցնդաբանություններ գրելու համար, առանց ամոթի. Մահ Հելսինկյան Ասամբլեային և Սաքունցին»:

HELSINKI CITIZENS' ASSEMBLY

ՀԵԼՍԻՆԿՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՍԱՄԲԼԵԱ
ՎԱՆԱՁՈՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ
HELSINKI CITIZENS' ASSEMBLY
VANADZOR OFFICE

19 Հունիսի 2006

Լոռու մարզի դատախազ
պարոն Ա. Ղազարյանին

Հարգելի պարոն Ղազարյան

2006թ-ի հունիսի 19-ին մեր կազմակերպության էլեկտրոնային փոստով ուղարկվել է սպառնալիք՝ հետևյալ բովանդակությամբ. «Պարոն Սաքունց, Ձեզ մահվան ենք դատապարտում, Ձեր մեջ հարց կառաջանա՝ ինչու՞: Ասենք: «Քաղաքացիական նախաձեռնության» վերջին համարում կրոնների վերաբերյալ ինչ-ինչ ցնդաբանություններ գրելու համար, առանց ամոթի: ***ՄԱՀ ՀԵԼՍԻՆԿՅԱՆ ԱՍԱՄԲԼԵԱՅԻՆ ԵՎ ՍԱՔՈՒՆՑԻՆ***»:

Նամակ ուղարկողի անուն ազգանունը Հայկ Հակոբյան է՝ Արիացիների կազմակերպությունից / էլեկտրոնային նամակի պատճենը կցվում է/:

Խնդրում եմ հարուցել քրեական գործ և Հ.Հակոբյանին ենթարկել պատասխանատվության:

Կազմակերպության ղեկավար Ա.Սաքունց

ՈՐՈՇՈՒՄ
քրեական գործի հարուցումը մերժելու մասին

03.08.2006թ. ք. Վանաձոր

Լոռու մարզի դատախազության ավագ քննիչ՝ Մ. Զ. Մովսիսյանս, վերանայելով Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակի ղեկավարի հիման վրա նախապատրաստված նյութերը

ՊԱՐԶԵՑԻ

2006թ. հունիսի 19-ին, Լոռու մարզի դատախազությունում Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակից հաղորդում է ստացվել այն մասին, որ նույն օրը կազմակերպության էլեկտրոնային փոստով սպառնալիք է ուղարկվել հետևյալ բովանդակությամբ «Պարոն Սաքունց, Ձեզ մահվան ենք դատապարտում: Ձեր մեջ հարց կառաջանա՝ ինչու՞: Ասենք: «Քաղաքացիական նախաձեռնության» վերջին համարում կրոնների վերաբերյալ ինչ-ինչ ցնդաբանություններ գրելու համար, առանց ամոթի: Մահ Հելսինկյան Ասամբլեային և Սաքունցին»:

Նյութերի նախապատրաստման ընթացքում պարզվել է, որ 18.06.2006թ. ժամը 18:13:49-ին զանգ է կատարվել Արմինկո համարով Վանաձոր քաղաքում տեղադրված մուտքային սերվերի վրա 0322 45427 հեռախոսահամարից: Մուտք գործողը օգտագործել է «Իփվան 4» մուտքաբառը և մուտք է գործել Արմինկո ցանց: Ցանցից դուրս գալու ժամն է 19.06.06թ.: Ժամը 00:13:47-ը, միացման ընթացքում զանգահարող համակարգչին տրվել է ժամանակավոր օգտագործման 195.250.85.87 Այփի համարը: Նշված ժամանակահատվածում այդ Այփի համարից իրականացվել է էլեկտրոնային միացում «ռամբլեր ռու» համակարգչին 18.06.06թ. ժամը 22.33.01-ին, որի ընթացքում էլ հաղորդվել է էլեկտրոնային հաղորդագրությունը: Պարզվել է նաև, որ 0332 45427 հեռախոսահամարը պատկանում է Ա/Զ Ա. Մակարյանին, որը գործում է Վանաձորի Մ. Գոշի թիվ 7 հասցեում: Նշված հասցեում տեղակայված է ինտերնետային ակումբ, որտեղ տեղադրված են թվով 11 համակարգիչներ: Համակարգչային ցանցին միացվող հեռախոսահամարը 0332 45427-ն է: Ինտերնետային ակումբում հաճախորդի տվյալները չեն ֆիքսվում, քանի որ ֆիզիկապես լրացուցիչ աշխատանք է պահանջում ակումբի աշխատակիցներից և բացի դա վերջինների յուրաքանչյուր օրվա նորմալ աշխատանք ապահովելու համար:

Որպես հաղորդագրություն ուղարկվող, տեքստում նշվել է «Հայկ Հակոբյան» անուն, ազգանունը, որի անձը ճշտվել, ներկայացվել է մարզի դատախազություն, բայց վերջինս ժխտել է իր կողմից հաղորդագրություն ուղարկելու փաստը: Ուղարկված սպառնալիքը զուրկ է իրական հիմքերից, այսինքն իրականացնելու ռեալ հիմքերը՝ զենք, զինամթերք, պայթուցիկ նյութեր և այլ սարքավորումներ չկան, հետևաբար նման արտահայտությունը չի կարող դիտարկվել որպես սպանության սպառնալիք: Սպառնալիքը պետք է լինի կոնկրետ և պարզ, մասնավորապես պետք է պարունակի այն իրագործելու կոնկրետ ձևը:

Վերոգրյալի հիման վրա և նկատի ունենալով, որ սպառնալիքը իրականացնելու իրական վտանգ չի եղել, այն իրենից լոկ որպես արտահայտություն է ներկայացրել, ուստի ղեկավարվելով ՀՀ քր. դատ. օր-ի 35 հոդ. 1-ին մասի 2-րդ կետով, 185 հոդվածով.

ՈՐՈՇԵՑԻ

1. Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակի ղեկավարին էլեկտրոնային փոստով ուղարկված սպառնալիքի փաստի առթիվ նախապատրաստված նյութերով մերժել քրեական գործի հարուցումը հանցակազմի բացակայության հիմքով:

2. Որոշման պատճեններն ուղարկել Լոռու մարզի դատախազին և Ա. Սաքունցին:

ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅԱՆ
ԱՎԱԳ ՔՆՆԻՉ Մ.ՄՈՎՍԻՍՅԱՆ



The booklet was published within the framework of the project "Public Awareness Raising Campaign on Freedom of Religion in Armenia". The project was implemented with support from the Embassy of the Kingdom of the Netherlands.

The booklet presents the reader materials from the conference "The Role of Religious Organizations in Public processes" held on August 10-11, 2006 in Vanadzor. The book also includes opinions and approaches expressed by the participants, along with suggestions made for the furthering of cooperation between the participants.

We present the approaches of different religious organizations revealed during individual meetings and interviews, analytical materials related to RA legislation on religious organizations and their activities, its correspondence to European standards and the current situation in the field of religious organizations.

The booklet also includes the difficulties and problems we had in Vanadzor during the implementation of the project and all the steps we undertook to solve them.

We hope that the readers will get a full picture on the role of religious organizations in public processes.

2006